# Մասիս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 20 (1620) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 1, 2013

VOLUME 33, NO. 20 (1620) SATURDAY, JUNE 1, 2013

MASSIS Weekly
1060 N Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ՝ «ՊԱՔՈՒՆ ԿԸ ԶԻՆՈՒԻ, ՄԵՆՔ ՏԵՂԵԱԿ ԵՆՔ ՈՒ ՊԱՏՐԱՍՏ»

Մայիս 29-ին, լրագրողներու հետ հանդիպման ընթացքին, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան յայտարարեց, որ ի տարբերութիւն Ատրպէյճանի կողմէ ռազմական սպառազինութեան ուղղուած մեծածաւալ միջոցներուն, Հայաստան աւելի շատ ուշադրութիւն կը դարձնէ ռազմական կարողութիւններու զարգացման:

ՀՀ պաշտպանութեան նախարար ըսաւ, որ բնականաբար Ատրպէյճանի ռազմական յատկացումներու աւելացումը հայկական կողմի համար մտահոգիչ է: «Կարծում եմ, որ Պաքուի յատկացուած միջոցները սպառազինութեանը արդէն դուրս է եկել այն շրջանակներից, որ կարող էին այս կամ այն կերպ ազդեցութիւն ունենալ բանակցային գործընթացում, ասենք առաւելութիւններ ունենալու համար եւ իրենց գերատեսչութիւնը լուրջ պատրաստւում է պատերազմի, եւ մենք դրա մասին տեղեակ ենք, լուրջ հետեւում ենք: Մենք, իհարկէ, այսպէս ամբողջութեամբ սպառազինութիւնների մրցավազքի մէջ չենք մտնում, բայց մենք էլ ետ չենք մնում, մենք էլ ենք զարգացնում մեր ռազմական կարողութիւնները»,- ըսաւ նախարարը եւ վստահեցուց, որ այսօրուայ դրութեամբ, համադրելով այս ամէնը, պէտք է նկատել, որ ՀՀ Զինուած ուժերը ի վիճակի են պաշտպանել երկիրը: «ՀՀ զինուած ուժերու անձնակազմը եւ


Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան

գոյութիւն ունեցող սպառազինութիւններն ի վիճակի են այսօր մեր երկիրը, մեր ժողովրդին պաշտպանել»,- ըսաւ Օհանեան:

Նախարարի համաձայն, Հայաստանի պետական բիւճէէն պաշտպանութեան ոլորտին կը յատկացւում միջոցներ, պետութեան եւ ժողովուրդի հնարաւորութիւններու սահմաններուն մէջ:

«Գիտէք, որ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան անդամ ենք, ու դա թոյլ է տալիս սպառազինութիւն ձեռք բերել աւելի էժան գներով եւ աւելի հեշտ ընթացակարգերով: Մեր ռազմական գործընկերները

Շար.ը էջ 4

## ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԻՇԽԱՆ ՉԱՐԼԶԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ


Իշխան Չարլզ եւ Սերժ Սարգսեան նախագահական պալատէն ներս

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Մայիսի 29-ին, հանդիպում ունեցաւ Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իրլանտայի Միացեալ Թագաւորութեան գահաժառանգ իշխան Չարլզի հետ, որ Հայաստան կը գտնուէր «Երեւան, Իմ Սէր» բարեգործական հիմնադրամի հրաւէրով:

Նախագահի մամուլի գրասենեակը այս առթիւ տեղեկացուց, որ Սերժ Սարգսեան ողջունած է արքայազնին Հայաստանի մէջ, ուր, ըստ Նախագահին, ան հնարաւորութիւն ունի ծանօթանալու երկրին, ժողովուրդին եւ պատմամշակութային ժառանգութեան: Ընդգծելով, որ հայ-բրիտանական յարաբերութիւնները երկար դարերու պատմութիւն ունին եւ հայ ժողովուրդը ջերմօրէն կը վերաբերի բրիտանացի ժողովրդին ու արքայական ընտանիքին, Հանրապետութեան նախագահը խնդրած է իր ողջոյններն ու բարեմաղթանքները փոխանցել Եղիսաբէթ Թագուհիին:

Սերժ Սարգսեան նաեւ շնորհակալութիւն յայտնած է «Երեւան, Իմ Սէր» բարեգործական ծրագրի հիմնադիր Արմէն Սարգսեանին, այդ ծրագիրը նախաձեռնելու եւ Իշխանի այցը Հայաստան կազմակերպելու առթիւ:

Իշխան Չարլզ շնորհակալութիւն յայտնած է նախագահին՝ ջերմ հիւրընկալութեան, իսկ Արմէն Սարգսեանին՝ հրաւէրի համար եւ կարեւոր նկատած է «Երեւան, Իմ Սէր» բարեգործական ծրագիրը, ինչպէս նաեւ Դիլիջանի մէջ կառուցուող միջազգային դպրոցի ծրագիրը :

Իշխան Չարլզ ըսած է, որ բարձր կը գնահատէ կրթութեան եւ երիտասարդութեան զարգացմանն ուղղուած ծրագիրներուն Հայաստանի մէջ յատկացուող ուշադրութիւնը եւ պատրաստակամութիւն յայտնած է ընդլայնելու երիտասարդ ձեռներէցներու աջակցութեան իր ծրագիրը նաեւ Հայաստանի մէջ:

Հայաստան եւօրեայ իր իր կեցութեան ընթացքին Իշխան Չարլզ այցելեց Ս. Էջմիածին եւ հանդիպում ունեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի հետ: Ան եղաւ նաեւ Մատենադարան եւ այլ վայրեր:

## ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ԹՐՔԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Միջազգային իրաւապաշտպան «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութիւնը խստօրէն քննադատած է թրքական դատարանի այն որոշումը, որու համաձայն պոլսահայ յայտնի լրագրող Սեւան Նիշանեան դատապարտուեցաւ 13.5 ամսուայ բանտարկութեան՝ Մուհամէտ մարգարէին վիրաւորելու մեղադրանքով:

«Այս ազատազրկումը կոպտօրէն կը ոտնահարէ տեղեկատուութեան ազատութեան իրաւունքը ու պէտք է վերանայուի: Իսլամի վերաբերեալ քննադատական որեւէ մեկնաբանութիւն չի կրնար լռեցուիլ Թուրքիոյ նման աշխարհիկ երկրի մէջ», - յայտարարած է հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնը:

Հայազգի լրագրողին դէմ Թուրքիոյ մէջ լայնածաւալ արշաւ սկսաւ մէկ տարի առաջ, երբ լրագրողը իր անձնական կայքէջին վրայ պաշտպանեց իսլամական աշխարհին մէջ մեծ աղմուկ բարձրացուցած՝ «Մահմետականներու Անմեղութիւնը» ֆիլմի հեղինակներուն:

«Այս աննախադէպ եւ չափազանց խիստ դատավճիռ է նոյնիսկ Թուրքիոյ չափանիշներով», - «Ազատութիւն» ռատիոկայանի ըսաւ Նիշանեան, կարծիք յայտնելով, որ ասոր պատճառը նաեւ իր հայկական արմատներն են:

«Ասօր մէջ կասկած չկայ, այս երկրին մէջ պատմականօրէն եւ աւանդաբար ընդունուած չէ, որ հայերը կրնան որեւէ անվայելուչ բան ըսել թրքական ազգի ինքնութեան կամ կրօնի մասին», - աւելցուց Նիշանեան, յայտնելով որ, դատարանի վճիռէն առաջ եւ մինչեւ այսօր ինքը բազմաթիւ սպառնալից նամակներ կը ստանայ Թուրքիոյ տարբեր անկիւններէն;

«Անոնք այնքան երջանիկ են, որ ես բանտ պիտի նստիմ եւ նոյնիսկ կը կարծեն, որ իրականութեան մէջ արժանի եմ մահուան: Միւս կողմէ, այս երկրին մէջ ապրող մտաւորական մարդիկ կան, որոնք կ՚աջակցին ինծի՝ դատարանի վճիռը որակելով անընդունելի եւ վրդովեցուցիչ», - ըսաւ Նիշանեան, տեղեկացնելով նաեւ, որ կը պատրաստուի յառաջիկայ օրերուն բողոքարկել քրէական դատարանի որոշումը:

## ՍԿՈՎՏԻԱՆ ԱՊՐԻԼ 24-Ը ՀՌՉԱԿԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Սկովտիայի խորհրդարանը քուէարկեց «Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի օր հռչակելու» առաջարկութեան ի նպաստ: Առաջարկութիւնը ներկայացուած էր Սկովտիայի Ազգային Կուսակցութեան պատգամաւոր Մարկօ Պիակիի կողմէ:

Խորհրդարանի հրապարակած փաստաթղթին մէջ նշուած է, որ Ապրիլի 24-ը Օսմանեան կայսրութեան կառավարութեան կողմէ 1915 թուականին հայ մտաւորականներու ձերբակալութեան տարելիցն է եւ ընդհանուր առմամբ կը համարուի բնի տեղահանութիւններու եւ աքսորի սկիզբը, որու արդիւնքով 8 տարի տեւած պարբերական ցեղասպանութեան հետեւանքով սպաննուած են հարիւր հազարաւոր մարդիկ:

Փաստաթղթը կը յայտնէ նաեւ, որ հայոց ողբերգութիւնը իւրաքանչիւր ազգի համար առիթ պէտք է դառնայ՝ յիշելու Ցեղասպանութեան զոհերուն եւ ճանչնալու այս եւ մնացած բոլոր ցեղասպանութիւնները որպէս ողբերգութիւններ, որոնք պէտք չէ կրկնուին աշխարհի որեւէ ծայրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ԱՇՈՒՆԸ

*ՄԻՔԱՅԷԼ ՍԱՀԱԿԵԱՆ*

*Մէկ տարուայ ընտրական ցիկլի աւարտից յետոյ քաղաքական դաշտում յարաբերական դադարկութիւն է առաջացել: Դրա ամենավառ վկայութիւնն այն է, որ իշխանութիւնն այլեւս մտահոգւում կամ վախենում է ոչ թէ ընդդիմադիր ուժերից, այլ քաղաքացիներից: Մարդկանց արդէն իսկ արտայայտուող ընդվզումը որոշակի կազմակերպական տեսք ստանալու դէպքում՝ կարող է իրական վտանգ դառնալ առերեւոյթ «պրոբլեմ չունեցող» իշխանութեան համար: Իշխանութեան մտահոգութիւնը միանգամայն հասկանալի է ու արդարացուած:*

*Դրա հիմքում ընկած է ոչ թէ քաղաքացիների նկատմամբ սրտացաւ վերաբերմունքը, մարդկանց կենսամակարդակի այսչափ անկման անթոյլատրելիութեան գգացումը, այլ վախը, որ ինչ-որ պահի իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողութիւնից՝ սպառնալով իշխանութեան գոյութեանը: Իսկ ինչո՞ւ են, այնուամենայնիւ, իշխանութիւնները քաղաքացիների լոկալ բողոքի արտայայտութիւններից աւելի շատ մտահոգւում, քան ընդդիմադիր ուժերի գործունէութիւնից: Որովհետեւ, ինչպէս կեանքը ցոյց տուեց, իշխանութիւնները կարողանում են ընդդիմութեանը պահել «գծի մէջ», ոմանց՝ կաշառելով, միւսներին՝ մանդատներ տալով, որոշ ուժերի՝ իրար դէմ հանելով ու նրանց ռեսուրսները փոշիացնելով:*

*2012 թուականի խորհրդարանական ընտրութիւնները վկայեցին, որ հասարակութեանը «փողոցում պահող» ուժերն ընդամէնը մի քանի պատգամաւորական մանդատի դիմաց մարդկանց հաճոյքով տուն ուղարկեցին: Մինչեւ յաջորդ ընտրութիւններ: Իշխանութեան համար դա միանգամայն գոհացուցիչ արդիւնք էր: Նոյն վստահութիւնը, սակայն, իշխանութիւնը չունի՝ ընդվզող քաղաքացիների հետ կապուած: Այն պարզ պատճառով, որ իրականում բողոքաւոր զանգուածը չի սահմանափակւում մի քանի հազար կամ մի քանի հարիւր մարդկանցով, ինչպէս ընդդիմութեան պարագայում:*

*Ըստ էութեան, այդ զանգուածն իր մէջ ներառում է գրեթէ ողջ հասարակութիւնը՝ հանած իշխանական ու պետական էլիտային՝ իրենց մերձաւորներով հանդերձ: Իսկ ամբողջ հասարակութեանն իշխանութիւնը չի կարող կաշառել, առաւել եւս, որ ընդամէնը մէկ տարուայ ընթացքում երեք ընտրութիւն է անցկացրել՝ հսկայական միջոցներ ծախսելով ընտրակաշառքի վրայ: Իշխանութիւններն իրականում շատ լաւ տիրապետում են հասարակութեան սոցիալական վիճակի վերաբերեալ տեղեկատուութեանը, գիտեն, թէ ինչ է կատարւում Երեւանից դուրս, սահմանամերձ գիւղերում, եւ ամենակարեւորը՝ գիտեն, որ տեսանելի ապագայում իրավիճակը հաստատ չի բարելաւուելու, քանի որ իրենք են սոցիալ-տնտեսական քաղաքականութիւն իրականացնողները: Դրա համար վախենում են, որ առաջիկայում կարող են փակուել ոչ միայն Երեւանին մօտ բնակավայրերին յարող մայրուղիները, այլեւ միջպետական աւտոճանապարհները:*

*Այս պայմաններում իշխանութեան թիւ մէկ խնդիրը, բնականաբար, պէտք է լինէր կոնկրետ քայլեր կատարելը՝ մարդկանց անտանելի կեանքը գոնէ որոշակիօրէն թեթեւացնելու համար: Բայց իշխանութիւնը նման բան չի անում՝ ոչ այնքան այն պատճառով, որ չի ցանկանում, այլ, որովհետեւ չի կարող: Որեւէ կտրուկ փոփոխութեան համար իշխանական վերնախաւը պէտք է հրաժարուի հսկայական ստուերային եկամուտներից, սակայն դա էլ իր հերթին՝ կարող է իշխանութեան հիմքերը սասանել ներսից, քանի որ տարիներ շարունակ կերակրատաշտից օգտուելու քուոտաներին սովոր պաշտօնեաները կարող են ընդվզել: Հետեւաբար, իշխանութեան թիւ մէկ խնդիրն է՝ թոյլ չտալ, որ քաղաքական դաշտում դեռեւս դերակատարում ունեցող ուժերից որեւէ մէկն իր վրայ վերցնի հասարակութեան դժգոհութեանը կազմակերպուած տեսք տալու ու ուղղորդելու գործը:*

*Անցած ընտրութիւնները ցոյց տուեցին, որ հասարակական որոշակի մոբիլիզացիա իրականացնելու ռեսուրս դեռեւս ունի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Լա՞ւ է դա, թէ՝ վատ, այլ քննարկման նիւթ է, բայց ԲՀԿ-ն՝ բնականաբար, առաջին հերթին՝ փողի շնորհիւ նման հնարաւորութիւն ունի: Այլ հարց է, որ անձամբ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանին դա ամենեւին պէտք չէ: Որովհետեւ՝ սոցիալական բունտն ուղղորդելու եւ յաջողութեան հասնելու դէպքում կարող է տապալուել այն իշխանութիւնը, որի հաստատած կանոնների ու որի շնորհած արտօնութիւնների շնորհիւ՝ ինքը Հայաստանի թիւ մէկ օլիգարխն է:*

*Որպէսզի այդ հեռանկարը Ծառուկեանի համար գայթակղիչ լինի, պէտք է լինի 100 տոկոսով երաշխաւորուած, քանի որ սոցիալական բունտի տապալման դէպքում կարող է տապալուել նաեւ ինքը: Իսկ նման երաշխիքներ ոեւէ մէկը չի կարող տալ: Սակայն Ծառուկեանին ձեռնտու չլինելը դեռեւս չի նշանակում, որ ԲՀԿ-ն միանշանակ յետ կը մնայ նման քայլից:*

*Որպէսզի դա տեղի չունենայ, անհրաժեշտ է, որպէսզի ԲՀԿ-ի այդ «ունակութիւնը» չծառայի երրորդ անձի: Հասկանալի է, որ տուեալ դէպքում, առաջին հերթին, խօսքը վերաբերում է Ռոբերտ Քոչարեանին, ում, ինչպէս ինքն էր հրապարակաւ յայտարարում, ոգեւորում էր ԲՀԿ-ի յաջողութիւնը դեռեւս խորհրդարանական ընտրութիւններից առաջ: Աւելի պարզ ասած, ներկայումս իշխանութեան, առաջին հերթին՝ նախագահ Սերժ Սարգսեանի խնդիրն է՝ չէզոքացնել Ռոբերտ Քոչարեանի ազդեցութիւնը Գագիկ Ծառուկեանի ու ԲՀԿ-ի վրայ, կամ ընդունուած քաղաքական տերմինաբանութեամբ՝ Ծառուկեանին պոկել Քոչարեանից:*

*Դա, բնականաբար, ոչ թէ միանուագ գործողութիւն է, այլ երկարատեւ գործընթաց, որը, ըստ էութեան, հասել է աւարտական փուլին: Դրա արտայայտութիւններից մէկն էլ Ծառուկեանի հովանաւորութեամբ կառուցուած եկեղեցու բացման արարողութիւնն էր ու հենց դրա ընթացքում հնչած յայտարարութիւնը՝ ԲՀԿ-ի՝ ընդդիմութիւն չլինելու մասին: Ի դէպ, դա դեռեւս չպէտք է հասկանալ որպէս ԲՀԿ-ի՝ ընդդիմադիր դառնալու հաւանականութեան իսպառ բացառում: Այնպէս չէ, որ իշխանութեանը պէտք չէ ԲՀԿ-ն՝ ընդդիմութեան դերում: Հակառակը՝ գուցէ դա իշխանութեան համար ամենաշահեկան տարբերակն է: Պարզապէս Սերժ Սարգսեանին անհրաժեշտ է, որ ԲՀԿ-ն լինի ընդդիմութիւն, սակայն Քոչարեանից վերջնականապէս «պոկուած» վիճակում:*

*Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն աւելի քան երկու տարի փորձեց Գագիկ Ծառուկեանին պոկել իշխանութիւնից, սակայն դրա հետեւանքն այն եղաւ, որ իշխանութիւնն աւելի ամրապնդուեց: Ծառուկեանին պոկելու փորձի պատճառով Տէր-Պետրոսեանն ու նրա քաղաքական ուժը պոկուեցին հասարակութիւնից՝ դառնալով այդպէս էլ չպոկուած ԲՀԿ-ի գաղափարախօսը: Ռոբերտ Քոչարեանի փորձը՝ Ծառուկեանին Սերժ Սարգսեանից պոկելու մասով, եւս կարելի է ձախողուած համարել: Հիմա պոկելու հերթը Սերժ Սարգսեանինն է, ով, ըստ ամենայնի, յաղթող դուրս կը գայ ԲՀԿ-ի համար երեք նախագահների միջեւ ընթացող պայքարում:*

*«168 ԺԱՄ*

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՂՕԹՔ՝ ԱԶԳԸՆՏԻՐՆԵՐԻ ՍՈՎԸ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ*

*Այսպիսով, հայրենի կառավարութեան եւ սրտացաւ ազգընտիրների մտքի թռիչքը սահմաններ չի ճանաչում, եթէ խօսքը սեփական ժողովրդին օգնելու մասին է: Կարկուտի հասցրած 50 մլն տոլարի վնասը, որը կրել են արմաւիրցիները, հաւաքագրւում է յայտարարուած համազգային, համատիեզերական հանգանակութեան միջոցով: Արդէն յայտնի է, որ անգամ ոստիկանութիւնն է կլորիկ գումար/11 մլն/ փոխանցել այդ ֆոնդին: Թերեւս ոստիկանութեան, ի դէմս Վլադիմիր Գասպարեանի առատաձեռնութիւնը հասկանալի է, որքան շուտ լուծում տրուի արմաւիրցիների խնդրին, այնքան կը փոքրանայ վտանգը նորից մայրուղի փակելու, ուստիեւ այնքան կը խնայուի նաեւ ոստիկանութեան պիւտճէն, քանզի ամէն անգամ ստիպուած էին մի քանի տասնեակ աւտոմեքենաներով օգնութեան շտապել տեղական անկարող ոստիկաններին եւ բացել ճանապարհը: Նոյնքան առատաձեռն են նաեւ հայրենի օրէնսդիրներն ու պաշտօնեաները, որոնք մէկը միւսից բարձր է գոռում, թէ իր մէկ ամսուայ աշխատավարձը նուիրում է արմաւիրցիներին: Մնում է աղօթել, որ հիմա էլ այս մարդիկ գոնէ մէկ ամիս սովին դիմանան: Չէ որ նրանք դիփ ու դիփ իրենց աշխատավարձերի յոյսին են , այլապէս աւելին կը նուիրաբերէին:*

*Գործարարների արձագանքից դեռ դժուար է ասել, թէ արդեօք կը հաւաքուի այնքան փող, որ գիւղացիների կրած ամբողջ վնասը փոխհատուցուի: Բայց եթէ արմաւիրցիներին, ընդամէնը մի քանի հարիւր ընտանիքի, անգամ հնարաւոր լինի համահայկական հանգանակութիւնների շնորհիւ օգնել, ապա դրանով խնդիրը չի լուծւում: Փաստ է, որ այսօր Հայաստանում մէկ միլիոնից աւելի մարդ, եւ սա պաշտօնական վիճակագրութեան համաձայն, աղքատ է, նրանց եկամուտը չի բաւարարում անգամ ամենաառաջնային հոգսերը հոգալու համար:*

*Ուստի հասկանալի չէ, թէ այլ ոլորտներում, այլ բնագաւառներում, մարդկանց այլ խաւերին ինչպէս են օգնելու, նորից հանգանակութիւններո՞վ: Օրէցօր սոցիալական վիճակն ահագնանում է, նորից կարկուտը այլ շրջաններ է աւերել, եւ այդ ահագնացման տեմպերը օրէցօր աւելի տեսանելի դրսեւորումներ են ստանում, եւ չկայ որեւէ երաշխիք, որ մի օր Հայաստանի գրեթէ բոլոր մայրուղիները կը փակուեն: Այնպէս որ այսպիսի խեղկատակ նախաձեռնութիւններ մտածելով անգամ չէք փրկի ձեզ:*

******

*Ց.Գ.-ի դէպ, կասկած չկայ, որ արմաւիրցիների հարցը, ինչպէս շատերն են կարծում, լուծուելու է մանր ու միջին բիզնեսի «պլանաւորուած» տուգանքների հաշուին: Ռ-էվոլիւշիոն հաղորդման հիւր ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանին երէկ հարց ուղղուեց՝ արդեօք ինչպիսի՞ ճանապարհներով է հայթայթուելու մօտ 50 մլն տոլար արժէք ունեցող կարկուտի պատճառած վնասը. ի յաւելումն հարցի հնչեց նաեւ, որ եթէ այս գումարի հայթայթման ճանապարհի յոյսը ձեռնակատէրերի նուիրատուութիւնն է, ապա ինչպէ՞ս էք պատրաստւում գազի գինը փոխհատուցել 30 տոկոսով, որը նոյնպէս ձեռնակատէրերից է գանձուելու: Մինչդեռ Տիգրան Սարգսեանը կոնկրետ պատասխանից խուսափեց, ասելով միայն, որ՝ այդ 30 տոկոս սուբսիդաւորումը դեռ պարզ չէ, թէ ինչ գոհաբերութիւնների հաշուին է լինելու՝ դեռ բանակցում են ռուսական կողմի հետ:*

*«ՀԱՅԵԼԻ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# ՋՀԱՆԳԻՐԵԱՆԸ ԻՐԵՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԷՋ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԻՆ ԱՆԼՈՒՐՋ Է ՀԱՄԱՐՈՒՄ



Աժ պատգամաւոր Գագիկ Ջհանգիրեան

*Մարտիմէկեան իրադարձութիւնների ուսումնասիրման խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի ստեղծման նախագծի համահեղինակ, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) պատգամաւոր Գագիկ Ջհանգիրեանը համաձայն չէ այն պնդումներին, որ Ազգային ժողովում նախագծի քուէարկութիւնը տապալելով՝ իշխող Հանրապետականը «խաբեց» Կոնգրէսին. իսկ իրեն գործարքների մէջ մեղադրողներին Ջհանգիրեանը որակում է «անլուրջ մարդիկ»:*

*Յանձնաժողովի ստեղծման նախաձեռնութեամբ Կոնգրէսը հանդէս եկաւ անցած տարեվերջին, բայց իշխող կուսակցութեան հետ համաձայնութեան եկան հարցի քննարկումը տեղափոխել նախագահական ընտրութիւններից յետոյ: Գագիկ Ջհանգիրեանին այդ ժամանակ մեղադրեցին իշխանութիւնների հետ գործարքի գնալու մէջ: Այնուհետեւ Մարտի 15-ին Ազգային ժողովի պետաիրաւական հարցերի յանձնաժողովը հանրապետական Դաւիթ Յարութիւնեանի գլխաւորութեամբ դրական եզրակացութիւն տուեց որոշակի փոփոխութիւնների ենթարկուած նախագծին: Յարութիւնեանը վստահեցրեց, որ գործընթացը վիժեցնելու ցանկութիւն չունեն, բայց անցեալ շաբաթուայ լիագումար նիստում հանրապետական պատգամաւորները նախագծին դէմ քուէարկեցին եւ տապալեցին յանձնաժողովի ստեղծումը:*

*Ջհանգիրեանը չի կարծում, որ ի սկզբանէ եղել է յանձնաժողովի ստեղծումը ձախողելու քաղաքական որոշում, պարզապէս իշխանութիւնները ժամանակ են ձգել մինչեւ ընտրական գործընթացների աւարտը:*

# ՆԱԽԿԻՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՊԱՅՔԱՐԸ

*Հանրապետութեան տօնի կապակցութեամբ, Մայիս 28-ին Ազատութեան հրապարակում կրկին հաւաքուել էին Ղարաբաղեան պատերազմում վիրաւորուած ազատամարտիկները ու կրկին բարձրաձայնում էին իրենց պահանջները:*

*Պահեստազօրի գնդապետ Վոլոդեա Աւետիսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ առաջին կարգի հաշմանդամ դարձած ազատամարտիկի թոշակը ընդամէնը 79 հազար դրամ է. - «Մենք դուրս ենք եկել պայքարի մեր արժանապատւութեան համար: Եթէ չեն բարձրացնում 100 տոկոսով, մենք մեր պայքարը շարունակելու ենք»:*

*Յիշեցնենք, այս ամիս աւելի վաղ կենսաթոշակի բարձրացման պահանջով Ազատութեան հրապարակում Աւետիսեանի սկսած նստացոյցին միացել էին տասնեակ այլ նախկին ազատամարտիկներ:*

*Ղարաբաղեան պատերազմի շուրջ 3 հազար վետերաններ նամակ էին ուղղել Կառավարութիւն, որտեղից այդ վերահասցէագրուել էր Ֆինանսների նախարարութիւն:*

*«Դեռ կոնկրետ պատասխան չկայ», - ասաց Աւետիսեանը: - «Ինչ-որ տոկոսի գումար են աւելացրել կամ չեն աւելացրել: Առայժմ այդքանը գիտեմ»:*

*«Թոշակը ստանում ենք, տալիս ենք կոմունալին: Իսկ հիմիկուայ թանկութիւններով արդէն պարտքերի տակ պիտի մնանք», - ասաց ցուցարարներից մէկը:*

*Հարցին, թէ յոյս ունեն, որ իրենց բողոքը տեղ կը հասնի ու պահանջը գոնէ ինչ-որ չափով կը բաւարարուի, նախկին ազատամարտիկը պատասխանեց. - «Չէ: Չեմ հաւատում այս Կառավարութեանը: Բա իրենք ի՞նչ ուտեն, եթէ մեր պահանջը բաւարարեն»:*

# «ԵԿԵՂԵՑԻՆ ՏԵՍՆՈՒՄ ԵՒ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ Է ԵՐԿՐՈՒՄ ԱՌԿԱՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

*Հայաստանեայց առաքելական եկեղեցին տեսնում է երկրում առկայ բազմաթիւ խնդիրները եւ ամենաբարձր մակարդակով բարձրացնում է դրանք իշխանութիւնների մօտ, լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատուական համակարգի տնօրէն, վեհափառ հայրապետի մամուլի խօսնակ տէր Վահրամ քահանայ Մելիքեանը:*

*«Եկեղեցին կազմուած է եկեղեցականներից եւ աշխարհականներից: Ես՝ իբրեւ եկեղեցական, այդ ամէնը տեսնում եմ, եւ իմ կողքին գտնուող բոլոր աշխարհականներն էլ այդ ամէնը նկատում են: Եկեղեցին՝ իբրեւ կառոյց, եւս այդ ամէնին հետամուտ է: Սակայն եկեղեցին իբրեւ հաստատութիւն, իբրեւ կառոյց այն ճանապարհը չի բռնում խնդիրների բարձրաձայնման եւ լուծման, որը որ մենք ենք ակնկալում՝ իբրեւ անհատներ», - ասաց Տէր Վահրամը:*

*Տէր Վահրամի խօսքով՝ եկեղեցին շատ դէպքերում աւելի մեծ արդիւնքներ է արձանագրում, երբ կարողանում է այլ ճանապարհներով, անհատական շփումներով, ոչ թէ հրապարակային յայտարարութիւններ անելով խնդիրները կարգաւորել կամ գոնէ նպաստել դրանց լուծմանը:*

*«Եկեղեցին միշտ չէ, որ ողջունում է յայտարարութիւնների ոճը, բայց քայլեր արւում են, անգամ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից նախաձեռնուող ծրագրերի մէջ կան բազմաթիւ ծրագրեր, որոնք ուղղուած են մեր ժողովրդի դեմոգրաֆիկ խնդիրների լուծմանը», - ասաց նա՝ յաւելելով, որ միեւնոյն ժամանակ իրենց համար ընկալելի է քննադատութիւնը:*

# ՍԵՐԳԷՅ ԿՈՒՐՂԻՆԵԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ «ՄԵՐՈՆՔԱԿԱՆ» ԴԱՌՆԱԼ



Մոսկուաբնակ յայտնի քաղաքագէտ Սերգէյ Կուրղինեան

*Հայաստանի քաղաքագէտների միութեան վարչութիւնն Մայիսի 27-ին կազմակերպել էր «Ռուսաստանի եւ Հայաստանի առջեւ ծառացած մարտահրաւէրները ժամանակակից համաշխարհային գործընթացների համատեքստում» թեմայով գիտակիրառական կոնֆերանս, որի գլխաւոր հիւրն էր մոսկուաբնակ յայտնի քաղաքագէտ Սերգէյ Կուրղինեանը:*

*Իր խօսքում քաղաքագէտը խօսեց զարգացման ուղիների մասին՝ մասնաւորապէս անդրադառնալով թէ Սովետական նախկին երկրների միամնութեան կարեւորութեանը, թէ դէպի Եւրոպա ընտրութեանը:*

*Ըստ քաղաքագէտի՝ չպէտք է անտեսել նախկին սովետական երկրների պատմութեան միասնական ընթացքը եւ պէտք է կոտրել որոշակի էլիտայի կողմից հակասովետական քարոզի հիման վրայ ձեւաւորուած կոնցեպցիան:*

*Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ բանակցութիւնները պէտք է կառուցուեն երկու տրամաբանութիւններից մէկն ու մեկի վրայ. Կամ վստահութիւն կամ փոխադարձ շահեր, յայտարարել է ռուսաստանցի քաղաքագէտը:*

*«Հենց որ դուք միացնում էք փոխադարձ շահերի տրամաբանութիւնը, մոռացէք վստահութեան մասին: Կապիտալիզմը հենց դրանով էլ սարսափելի է: Ձեզ հետաքրքրում է միայն ռուսներից աւելի շատ ստանալը, դուք խօսում էք գազի մասին: Բայց Ռուսաստանին հետաքրքրում է նոյնը, ուստի նա զէնք է վաճառում Ադրբեջանին: Փոխադարձ շահերի տրամաբանութիւնը վստահութեան տրամաբանութեամբ փոխելու համար պէտք է վերադառնալ նրան, ինչը վստահութիւն է առաջացնում: Հայաստանը Ռուսաստանի հետ գազից ու զէնքից խօսելուց բացի այլ խօսելու թեմաներ էլ ունէր, բայց այդ ժամանակներն անցել են: Եթէ այդ խօսակցութիւնը վերականգնուի, այդ ժամանակ Հայաստանը Ռուսաստանի համար «մերոնքական» կը դառնայ եւ անբնական կը համարուի այլ կողմի զէնքի վաճառքը», - յայտարարել է Կուրղինեանը:*

*«Ինչ վերաբերում է Ղարաբաղին աջակցելուն, մենք բոլորս տեղեկացուած մարդիկ ենք, ուստի պէտք չի ասել, որ ռուսների լուման չկայ: Աւելին չեմ ասի: Ինձ լսողը լսեց», - յայտարարել է նա:*

# ՍԱՀԱԿԵԱՆԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԷՐ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՅՐՈՒՂԻՆ»

*ՀՀԿ-ի փոխնախագահ, կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը անհեթեթ է համարում Զարուհի Փոստանջեանի հասցէին իր արտայայտութեան համար ԱԺ էթիկայի յանձնաժողով դիմելու մասին խօսելն անգամ:*

*«Եթէ վիրաւորուել են, քայլեր են կատարում, կարծում եմ, որ դա էլ իրենց գործն է», - այսօր Սարդարապատում «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց նա՝ շարունակելով. - «Ես պնդում եմ, որ ամենամեծ վիրաւորուածը մենք ենք, որովհետեւ օրեր շարունակ, եւ ընդհանրապէս սա առաջին դէպքը չէ՝ անգուսպ, պետութեան հիմքերը սասանող յայտարարութիւններ են անում: Անհրաժեշտ է քաղաքական դրսեւորումներով առաջ գնալ եւ այնպիսի ակնոց չդնել, որ բոլորը երեւան խաբեբայ, սրիկաներ: Այդ առումով աւելի շատ մենք պէտք է լինենք վիրաւորուած եւ աւելի շատ մենք ենք վիրաւորուած: Սակայն մեր ժողովուրդն է, աւելի հանդուրժող ենք վերաբերւում»:*

*Յիշեցմանը, որ ինքը խորհրդարանի ամբիոնից բազմազաւակ մօրը («Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանին) ասել է, թէ Ազգային ժողովը մայրուղի չէ, որ մեքենայ կանգնեցնի, Գալուստ Սահակեանն արձագանքեց. - «Ըստ էութեան, կարծում եմ, որ իրենց պէտք է եղել աւելի կոշտ մտածել, քան ասուածն է: Բացի դրանից, քաղաքականութեան մէջ էգ եւ որձ չկայ: Դա քաղաքականութիւն է, քաղաքական մօտեցում է, սկզբունքներ են: Մենք երբեք ու երբեք որեւէ մեկին չենք վիրաւորում. պարզապէս հակադարձում ենք»:*

*Հարցին, թէ, այնուամենայնիւ, ինչ է նկատի ունեցել, Սահակեանը պատասխանեց. - «Ընդամէնը քաղաքական դաշտ, քաղաքական մայրուղի: Եւ այդ մայրուղում ոչ թէ պիտի մեքենաներ կանգնեցնել, մեքենայով գնալ, այլ ոտքով, խութերը յաղթահարելով՝ ճանապարհ գնալ»:*

# ԵՒՍ 260 ՍԻՐԻԱՀԱՅԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

*2013 թ. առաջին եռամսեակում Սիրիայի ազգութեամբ հայ 260 քաղաքացիներ ստացել են ՀՀ անձնագրեր՝ առանց պետական տուրք վճարելու: ՀՀ կառավարութիւնն այսօր՝ մայիսի 29-ին որոշեց 16,9 մլն դրամ տրամադրել ՀՀ արտաքին գործերի նախարարութեանը՝ չվճարուած պետական տուրքերի հաշուանցման նպատակով:*

*Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարութեան տեղեկանքի՝ անձնագրերը տրուել են ինչպէս Սիրիայում, այնպէս էլ հարեւան երկրներում գտնուող դեսպանատներում (Լիբանան, Արաբական Միացեալ Էմիրութիւններ):*

# ԼՈՒՐԵՐ

## ԱԼԻԵՒ. «7 ՏԱՐԻ ՅԵՏՈՅ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՔԱՆԱԿԸ ՏԱՍՆԱՊԱՏԻԿ ԱՒԵԼԻՆ ԿԸ ԼԻՆԻ, ՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆԸ»

Ադրբեջանի նախագահը կրկին խօսում է ղարաբաղեան հիմնախնդրի ռազմական լուծման մասին: Հանրապետութեան օրուայ առթիւ Բաքւում հնչեցրած ուղերձում Իլհամ Ալիեւը կրկին պնդում էր, որ ստատուս քվոն իր երկրի համար անընդունելի է, իսկ դրա յաղթահարման ելքերը՝ խիստ սահմանափակ:

«Ընտրութիւնն այնքան էլ մեծ չէ՝ կամ ռազմական ճանապարհ, կամ էլ խաղաղ կարգաւորում: Ադրբեջանը երկու տարբերակներին էլ պատրաստ է», - յայտարարել է Ալիեւը՝ նախ խօսելով հակամարտութեան ռազմական լուծման մասին:

«Մենք երբեք չենք բացառել ռազմական ճանապարհը: Միջազգային իրաւունքն ու ՄԱԿ-ի կանոնադրութիւնը ճանաչում են Ադրբեջանի՝ ինքնապաշտպանութեան դիմելու իրաւունքը: Ադրբեջանը ցանկացած պահի կարող է ցանկացած տեսակի գործողութիւն իրականացնել այն տարածքներում, որոնք միջազգայնօրէն ճանաչուած են որպէս Ադրբեջանի մաս», - ասել է Ալիեւը:

Ադրբեջանի նախագահը նաեւ նշում էր, որ Բաքւում դեռ յոյս ունեն հարցը լուծել առանց ուժի կիրառման:

«Մենք պէտք է շարունակենք Հայաստանին մեկուսացուած պահել բոլոր միջազգային ծրագրերից: Մեր այդ ռազմավարութիւնն արդիւնաւէտ է: Պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ Հայաստանը տարեկան լքում է 80-100 հազար մարդ, եւ այդ մարդիկ Հայաստանը լքում են ընդմիշտ՝ գրոյին հաւասարեցնելով երկրի տնտեսութեան վերածննդի հեռանկարները», - նշել է Ալիեւը՝ պնդելով նաեւ թէ, ժողովրդագրութիւնն այսօր իր երկրի զինանոցում առկայ գլխաւոր զէնքերից մէկն է:

«Եթէ Ադրբեջանի բնակչութեան աճի ներկայիս տեմպերը պահպանուեն, ապա 5-7 տարի յետոյ մեր երկրի բնակչութիւնը տասնապատիկ աւելին կը լինի, քան Հայաստանինն է: Նման տարբերութիւնն ինքնին մեծ ուժ է», - համոզուած է Իլհամ Ալիեւը:

## «ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ՎԵՐՍԿՍՈՒԻ ԱՇՆԱՆԸ

Հայաստանում Ռուսաստանի Միգրացիոն ծառայութիւնը դադարեցրել է «Հայրենակիցներ» եւ «Աշխատանքային միգրացիա» ծրագրերով յայտերի ընդունումը: Այս պահին հարց է, թէ արդեօք Միգրացիոն ծառայութիւնը կը շարունակի իր գործունէութիւնը Հայաստանում, քանի որ վերջինիս գործունէութեան պայմանագրային ժամկէտը աւարտուել է:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք ծառայութեան գործունէութեան դադարեցումը պայմանաւորուած է նրանով, որ Հայաստանի վարչապետն ասել էր, որ ծառայութեան գործունէութիւնը ցանկալի չէ՞, թէ՞ այլ հանգամանք կայ, Գիւմրիում Ռուսաստանի հիւպատոս Վասիլի Կորչմարը պատասխանել է. «Դա հաւանաբար պայմանաւորուած է նրանով, որ այդ հարցը դեռ շատ սուր է դրուած այստեղ՝ Հայաստանում, եւ շատ մեծ աղմուկ է բարձրանում Միգրացիոն դաշնային ծառայութեան հաւատարմագրման շուրջ: Ես կարծում եմ՝ այդ հարցը կը լուծուի»:

Հարցին՝ կը շարունակի՞ իր գործունէութիւնը Միգրացիոն ծառայութիւնը, թէ՞ ոչ, Կորչմարը պատասխանել է. «Այն, որ նրանք դեռ աշխատում են, ես դա գիտեմ, ես ասում եմ, որ եթէ նոյնիսկ հաւատարմագրումը չշարունակուի, այդ հարցերով ամէն դէպքում կը զբաղուեն Երեւանում դեսպանատունը, Գիւմրիում՝ հիւպատոսարանը: Բայց Միգրացիոն ծառայութեան ներկայութեան դէպքում փաստաթղթերը ձեւակերպւում են տեղում, առանց ձգձգումների: Դեսպանատունն ու հիւպատոսարանը միայն յայտեր կ՚ընդունեն, յետոյ դրանք կ՚ուղարկեն Մոսկուա: Այնտեղից յատուկ խումբ կը գայ այստեղ, որը կը զբաղուի փաստաթղթերի ձեւակերպմամբ: Այդպիսի փորձ ունենք եւ Վրաստանում, եւ այլ երկրներում»:

Հիւպատոսը վստահեցրել է, որ անկախ քննադատութիւնից՝ Միգրացիոն ծառայութեան գործունէութեան դադարեցումից յետոյ ամէն դէպքում եւ «Հայրենակիցներ» եւ «Աշխատանքային միգրացիա» ծրագրերը կը շարունակուեն Հայաստանում: Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ե՞րբ կը վերսկսուի յայտերի ընդունումը, Կորչմարը հաւանական է համարել աշունը, գուցէ՝ աւելի շուտ:

## «2013-Ը ԿՐՆԱՅ ՎՃՌԱԿԱՆ ԸԼԼԱԼ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ»

Երկու հարեւան երկրները բնականոն յարաբերութիւններ չունեն եւ տեսականօրէն կարող են ներքաշուել նոր պատերազմի մէջ, ինչն աղետաբեր կը լինի հայերի, ադրբեջանցիները եւ ամբողջ տարածաշրջանի համար:

Այնուամենայնիւ, կողմերը փորձում են պահպանել 1994 թուականի Մայիսին կնքած Անժամկէտ հրադադարի մասին համաձայնագրի պահանջները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմամբ հիմնականում զբաղւում է ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը, սակայն գործընթացին ուշադրութեամբ հետեւում են միջազգային բոլոր կառոյցները, գերտէրութիւնները եւ տարածաշրջանի երկրները:

Եւրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նախագահ Ժան-Կլոդ Մինյոնը Բաքւում լրագրողների հետ զրոյցում յոյս է յայտնել, որ Հայաստանը եւ Ադրբեջանն այս տարի առաջխաղացում կ՚ապահովեն Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացում:

«2013 թուականին Հայաստանը եւ Ադրբեջանը յաջորդաբար նախագահում են Եւրոպայի խորհրդի Նախարարների կոմիտէում: Դա երկու պետութիւններին ընձեռում է հակամարտութեան լուծում գտնելու պատմական հնարաւորութիւն», - ասել է Մինյոնը եւ աւելացրել, որ երկու երկրները պարտաւոր են այս տարի կոնկրետ քայլեր ձեռնարկել խաղաղութեան հասնելու ուղղութեամբ:

Նա նշել է նաեւ, թէ Եւրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում ինքը պարբերաբար հանդիպում է Հայաստանի եւ Ադրբեջանի պատուիրակութիւնների ղեկավարների հետ, քննարկում է ղարաբաղեան թեման, բացի այդ, պարբերաբար տեղեկութիւններ է ստանում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահից:

## ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ. «ԵՒՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԷՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ԶՐԿՈՒԻ ՆԱԽԿԻՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻՑ»



Գերմանիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Ռեյներ Մորել

Անհրաժեշտ է գիտակցել ազատ առեւտրի եւ տնտեսական միութեան միջեւ սկզբունքային տարբերութիւնը: Այս մասին NEWS.am-ի թղթակցին ասաց Հայաստանում Գերմանիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Ռեյներ Մորելը՝ պատասխանելով Եւրամիութեան ներկայացուցիչների կողմից վերջին յայտարարութիւնների մասին հարցին, որ Եւրասիական տնտեսական միութեանն ինտեգրուելու դէպքում Հայաստանը կը կորցնի Եւրամիութեան հետ տնտեսական համագործակցութեան հետագայ զարգացման հնարաւորութիւնը:

«Եթէ խօսքն ազատ առեւտրի մասին է, ցանկացած երկիր ազատ է ցանկացած այլ երկրի հետ առեւտրի հարցում, իսկ պետութիւնը կարող է որոշում ընդունել այն մասին, թէ ում տալ նախապատուութիւնը»,- նշեց դեսպանը: Սակայն նրա խօսքով, եթէ երկիրն ապրում է Եւրասիական տնտեսական միութեան պայմաններում, ապա դա արդէն ընտանիք է իրենց ներկայացնում, տուեալ երկիրը դառնում է ընտանիքի անդամ, որտեղ որոշակի կանոններ գոյութիւն ունեն: «Այսինքն, ընտանիքի մէջ մտնող բոլոր երկրներն ամրապնդում են կանոնները, որոնք անհրաժեշտ են արտաքին կապերի իրականացման դէպքում: Ուստի, եթէ դուք դառնում էք տուեալ ակումբի անդամ, չէք կարող օգտուել այն ազատութիւնից, որը կար նախկինում»,-ասաց դեսպանը՝ աւելացնելով, որ այս դէպքում անհրաժեշտ կը լինի հետեւել ընդունուած կանոններին:

Դիւանագէտի համոզմամբ, հենց դրանում է Եւրամիութեան մի շարք պաշտօնեաների յայտարարութիւնների էութիւնը: «Հայաստանը պէտք է ինքը որոշի: Եթէ դառնայ ապագայ Եւրասիական տնտեսական միութեան անդամ, այլեւս ի վիճակի չի լինի մեզ հետ բանակցութիւններ վարել ի դէմս Հայաստանի, այլ հանդէս կը գայ որպէս այդ միութեան անդամ»,-նշեց նա՝ նկատելով, որ Հայաստանը կարող է չմտնել վերոնշեալ միութեան մէջ՝ աշխարհի միւս երկրների հետ ազատ առեւտրի համաձայնագրեր կնքելով:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ՆԱԵՒ ԵՒՐԱԶԷՍ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Աստանայում մեկնարկել է Եւրասիական տնտեսական համագործակցութեան (ԵւրազէՍ) գագաթնաժողովը, որին եւս Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը չի մասնակցի:

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) անդամ պետութիւններից չորսի՝ Ռուսաստանի, Ղրղզստանի, Ղազախստանի եւ Տաջիկստանի նախագահները Մայիս 28-ին հաւաքուել էին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում, որտեղ անցնում էր կազմակերպութեան ոչ պաշտօնական գագաթնաժողովը: Հայաստանի եւ Բելառուսի նախագահները այդ հանդիպմանը չմասնակցեցին:

Սերժ Սարգսեանի եւ Ալեքսանդր Լուկաշենկոյի բացակայութիւնը զանազան մեկնաբանութիւնների առիթ էր դարձել, մինչդեռ ՀԱՊԿ-ի քարտուղարութեան տարածած հաղորդագրութիւնում ասուած է, որ Հայաստանի եւ Բելառուսի ղեկավարները Ղրղզստանի մայրաքաղաք չէին գնացել, քանի որ գագաթնաժողովի օրակարգում Կենտրոնական Ասիայի տարածաշրջանին վերաբերող հարցերն էին:

Բիշքեկից նախագահները մեկնել են Ղազախստանի մայրաքաղաք, որտեղ յաջորդ օրը բացուել է ԵւրազէՍ-ի գագաթնաժողովը, ընդ որում՝ հանդիպմանը մասնակցում է նաեւ Ուկրաինայի նախագահ Վիկտոր Եանուկովիչը:

Աստանայում հաղորդուել է, որ Ղրղզստանը միանալու է Եւրասիական տնտեսական համագործակցութեանը, իսկ Ուկրաինան կը դառնայ դիտորդ:

Մի քանի օր առաջ Ուկրաինայի նախագահը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրաւէրով Սոչիում էր, որտեղ կայացել էր նրանց հինգ ժամանոց հանդիպումը:

ԵւրազէՍ-ում Հայաստանը ունի դիտորդի կարգավիճակ:

## ՊԱՔՈՒՆ ԿԸ ԶԻՆՈՒԻ

Շարունակուած էջ 1-էն

մեզ աջակցում են, որպէսզի մեր ռազմատեխնիկական պատրաստուածութիւնն աւելի բարձր մակարդակի վրայ լինի: Այսօրուայ մեր հնարաւորութիւնների սահմաններում յատկացուած միջոցները բաւարարում են զինուած ուժերին, յատկապէս, որ միջազգային փորձի համաձայն պաշտպանութեան ոլորտին պէտք է յատկացուի ՀՆԱ-ի 3,5%-ի չափով միջոցներ»,- շեշտեց պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը:

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԶՕՐԱՀԱՆԴԷՍ



*Հանրապետութեան տօնին նուիրուած զօրահանդէսը՝ Սարդարապատի մէջ*

*Մայիս 28-ին Սարդարապատի յուշահամալիրում տեղի ունեցաւ Հանրապետութեան տօնին նուիրուած զօրահանդէս, ուրին մասնակցում էր Հայաստանի ղեկավարութիւնը ՝Նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ:*

*Ամբիոնից ելոյթ ունենալով՝ Սարգսեան անդրադարձաւ 1918 Թուականին ձեռք բերուած անկախութեան պատմական նշանակութեանը, արձանագրուած յաղթանակներին՝ յաղթանակի հասնելու համար ընդգծելով միասնականութեան անհրաժեշտութիւնը:*

*Տօնական զօրահանդէսից յետոյ Սերժ Սարգսեանն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը ծաղկեպսակներ դրեցին Սարդարապատի ճակատամարտի հերոսների յիշատակը յաւերժացնող յուշակոթողի մօտ, յետոյ ծաղիկներով յուշակոթողին մօտեցան պետական պաշտօնեաները, այնուհետեւ զինուորականները: Նախագահի մասնակցութեամբ միջոցառումը շուրջ կէս ժամանոց զօրահանդէսով սահմանափակուեց: Այլ ելոյթներ չեղան:*

*Զօրահանդէսից յետոյ Սերժ Սարգսեանի հետ միասին հեռացան բոլոր պաշտօնեաները, եւ սկսուեց շարքային քաղաքացիների հոսքը դէպի յուշահամալիր: Ոմանք երգելով ու դրօշներով էին բարձրանում, միւսները վրդովուած էին, որ հնարաւորութիւն չունեցան իրենց բողոքը իշխանաւորներին ներկայացնելու:*

*«Բերեցին ամբողջ ժողովրդին կանգնացրեցին այնտեղ՝ ներքեւում, իրենք իրենց ոստիկաններով ու զօրքով բարձրացան, իրենց արարողութիւնը կատարեցին ու թողեցին փախան: Ուզում էի բողոքել, որ 5 միլիոնի կորուստ եմ կրել կարկուտից, իրենցից յոյս չունեմ, ոչ մի յոյս չունեմ: Ասում են՝ կառավարութիւնը կը փոխհատուցի, ի՞նչ պիտի փոխհատուցի, մի գրպանից պիտի հանի դնի միւսը, էլի»,- վրդովուած էր գիւղացին:*

*Ի դէպ աւանդական այս միջոցառման մէկ այլ առանձնայատկութիւնն էլ արմաւիրցիների տօնական սեղանների եւ հիւրասիրութեան բացակայութիւնն էր: Նման բան վերջին տարիներին առաջին անգամ է արձանագրւում, երբ Արմաւիրի տարբեր համայնքների բնակիչները ճոխ հիւրասիրութեամբ չդիմաւորեցին տօնակատարութիւնների մասնակիցներին:*

*«Որտեղի՞ց գումար ունենային հիւրասիրութեան. 28 գիւղ լրիւ աւերուել է, ոչինչ չի մնացել, գիւղ կայ՝ 100 տոկոսով, գիւղ կայ՝ 60 կամ 40: Շատ չնչին գումարով պէտք է փոխհատուցուի, ժողովուրդը ըմբոստացել է, ժողովուրդը սովի է մատնուել, չի կարողանում ապրի»,- «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասում էին Արաքս գիւղի բնակիչները: - «Իհարկէ սա նաեւ դժգոհութեան արտայայտութիւն է, իհարկէ, դրանում ոչ մի խօսք»:*

*Երկու շաբաթ առաջ տեղացած կարկուտը մարզի համայնքներին շուրջ 25 միլիարդ դրամի վնաս է հասցրել: Կառավարութիւնը խոստացել է միջոցներ գործադրել տուժած տնտեսութիւնների վիճակը մեղմելու համար:*

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՒԵՐՈՒԱԾ ՄԱԼԱԹԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆՈՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԵԼ Է

*Թուրքիայի Մալաթիայի քաղաքապետարանի կողմից 2012-ի Փետրուարի 2-ին հայկական գերեզմանատանը կառուցման փուլում գտնուող պահակատան եւ վերջին հրաժեշտի համար նախատեսուած շէնքերի աւերումից յետոյ դրանք կրկին վերանորոգուել են եւ շուտով դրանք կը յանձնուեն Մալաթիայի հայերին:*

*Թուրքական «Թարաֆ» պարբերականի հետ զրոյցում Մալաթիայի հայ համայնքը ներկայացնող միութեան նախագահ Խոսրով Քյոլեթաւիթօղլուն յայտնել է, որ գերեզմանատան աւերուած շինութիւնների շինարարութիւնն արդէն աւարտուել է եւ Յունիսի 29-ին տեղի կ'ունենայ դրանց բացումը:*

*Խոսրով Քյոլեթաւիթօղլուն*




*Մալաթիայի հայկական գերեզմանատան մատուռը*

*նշել է, որ այս տարի Մալաթիայի նահանգում տեղի կ'ունենան մշա-*

*Շար.ը էջ 17*

## ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՂՕՂԱՆՋԸ
### (ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ 95-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

*95 տարիներ առաջ այս օրերուն, Արարատեան դաշտի Սարդարապատ գիւղին մօտ կը վճռուէր հայժողովուրդի լինելութեան բախտը: Թրքական զօրք երբ պատրաստուած էին մահացու եւ վերջնական հարուած տալու Արեւելեան Հայաստանի ժողովուրդին եւ եթէ հնարաւոր է՝ ի սպառ ջնջել հայն ու Հայաստանը համաշխարհային պատմութենէն: Թուրք հրոսակներ չյագեցած արեւմտահայութեան նախճիրով ու կոտորածով, արեան ճապաղիքներ սարքելով, իրենց ախորժակը այս անգամ ուղղած էին դէպի արեւելք՝ հաշուեյարդար տեսնելու հայութեան վերջին բեկորներուն եւ մնացորդացին հետ: Պահը օրհասական էր անտարակոյս. գոյամարտը՝ ազգային անհրաժեշտութիւն. ապրելու կամքը՝ համազգային որոշում:*

*Թրքական լայնածաւալ արշաւանքը, որ կ'ընթանար սրածութեամբ եւ աչհազարհուր վայրագութեամբ, հասած էր մինչեւ Բաշ Ապարան ու Ղարաքիլիսա. յաջորդ փուլը Երեւանն էր, ինչ որ կը նշանակէր համարեա՛ Արեւելեան Հայաստանի գաւթումը՝ իր անկանխատեսելի հետեւանքներով: Ո՞վքեր եւ ինչպէ՞ս պիտի սանձէին մոլեգնած խուժանը. մինչեւ ե՞րբ մեր շլինքը պիտի ծռէինք արիւնկզակ բարբարոսին դիմաց. մինչեւ ո՞ւր ոսոխին եաթաղանը պիտի հասնէր առանց հաշուետուութեան եւ քմահաճ կերպով:*

*Այդ ճգնաժամային րոպէին, ահա կը յառնէր մեր ժողովուրդին գգաստութեան, սթափութեան եւ միասնականութեան գիտակցութիւնը: Այդ օրերուն եկեղեցիներէն հնչող ղօղանջները զօրաշարժի կը հրաւիրէին անոնց՝ որոնք ի վիճակի էին որեւէ ձեւով մասնակցութիւն բերելու այդ ահեղ գօտեմարտին: Մարտիկը կ'ուղղուէր խրամատ, մինչ պատանին կը հեւար մարտադաշտ, կանայք թէ ծերունիներ իրենց թիկունքային օժանդակութեամբ հոն էին՝ Սարդարապատի ճակատամարտին, անդին հոգեւորականը իր բարոյական զօրակցութեամբ ներգրաւուած էր պատերազմին: Ժողովուրդին բոլոր խաւերը մէկ սիրտ ու մէկ հոգի դարձած պատմութեան ամենաճակատագրական վայրկեանին պիտի տային իրենց ուղղուած «ապրի՞լ թէ մեռնի՞լ» հար ցումին պա տաս խանը, եւ միահամուռ կերպով ըսին՝ ԱՊՐԻ՛Լ:*

*Սարդարապատի հերոսամարտը մեր նորագոյն պատմութեան բեկումնային դրուագն է անկասկած: Եթէ 1915-ի Մեծ Եղեռնը իր ողբերգական հետեւանքով տեղատուութեան արձանագրումն էր, ապա 1918-ի Սարդարապատի ճակատումը այն մակընթացութիւնն էր, որ մեզի երաշխաւորեց հայրենիք ունենալու իրաւունքը: Այդ մենք նուաճեցի՛նք նահատակու թեան, գիտակից մահուան եւ հայրենասիրական բարձր գիտակցութեամբ: Այդ մենք խլեցի՛նք միասնականութեան ոգիով եւ հայրենիքը առաջնահերթ դասելու անխախտելի սկզբունքով: Սարդարապատի հերոսամարտին յաղթական ելքը, ինքնաբերաբար դարձաւ անկիւնաքարը մեր նորաստեղծ հայրենիքին. դարերու ստրկութեան շղթան փշրող իրադարձութիւնը, ինչպէս նաեւ վերյառնումը Հայաստանի Հանրապետութեան՝ որպէս պետական միաւոր ու անդամ միջազգային մեծ ընտանիքին: Ուստի՝ Սարդարապատը ոչ միայն ռազմական ու բարոյական խոյանք էր իր բնոյթով, այլ՝ պատմաքաղաքական ծանրակշիռ երեւոյթ՝ իր բովանդակութեամբ եւ արդիւնքով:*

*Սարդարապատի հերոսամարտին հնչած միասնականութեան ղօղանջը անցեալէն կտակուած եւ դէպի ապագայ սլացող խորհուրդ մը ունի իր մէջ: Նոյնպիսի աստեղային ժամեր եւս ունեցած ենք պատմութեան ընթացքին. ան եղած է Աւարայր, եղած է Արցախ եւ ինչու չէ նոր Սարդարապատներ կրնան ծառանալ սերունդներուն առջեւ. հետեւաբար՝ ղօղանջը անդուլօրէն պէտք է հնչէ հոն՝ ուր կարիքը կայ միասնականութեան. հոն՝ ուր կենաց մահու կռիւ կայ մղուելիք. հոն՝ ուր պիտի վճռուի մեր ապրելու որոշումը եւ անկապտելի իրաւունքը:*

*95 տարիներ առաջ այս օրերուն, նոր էջ մը պիտի բացուէր մեր տարեգրութեան թերթերուն. ազդանշանը պիտի տրուէր ցաւատանջ երկունքէ ծնող Հայաստանի Հանրապետութեան. եւ ահա երեք հանրապետութիւններ պիտի յաջորդէին զիրար՝ մէկը միւսին կապուած անքակտելի օղակով: Ճիշդ այստեղ է, որ կը մեծնան Սարդարապատի հերոսներն ու նահատակները. կը փառաւորուի այդ յաղթանակը կերտած իւրաքանչիւր հայորդիի սուսավիրթխար վաստակը, քանզի՝ անոնք փրկեցին մեր հայրենիքը, անոնք մեզի տուին հայրենիքի վրայ ապրելու եւ արարելու փառքն ու պատիւը, երկրագունտի վրայ հայրենատէր որպէս շնչելու հպարտութիւնը:*

*Հանճարեղ բանաստեղծ Պարոյր Սեւակի իսկ բնորոշումով՝ «Երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար». եւ այդ խենթերու շարքին էր հնչակեան Ջոկատի ղեկավար Մշեցի Պանդուխտը, որ ճակա տամարտի թէժ պահուն, իր գունդին հետ դիպուկ շրջանցումով եւ սլացքով Թրքական կողմին պատճառեց ճակատագրա կան պատուհաս. հնչակեան փորձառու մարտիկը, իր հմտութեամբ եւ մարտավարական շարժումով, իր լուրջ ներդրումը ունեցաւ ճակատամարտի ընթացքին վրայ. ան պատուով իր եւ մեր կուսակցութեան անունը քանդակեց 1918-ի հերոսամարտերու շարքին:*

*Միասնականութեան այն ղօղանջը, որ ի զէն հրաւիրեց բ ո լորը, ոտքի հանեց մեր ողջ ժողովուրդը, մարտադաշտ կանչեց իւրաքանչիւր հայը, մի՞թէ տուեալ դէպքին մէջ պէտք է սահմանափակուի լոկ: Ո՛չ, ի հարկէ: Անոր արձագանգին անսալը եւ անոր ոգիին հետեւիլը մեր ամէնօրեայ գուպարէն անբաժան պէտք է ըլլայ. որովհետեւ՝ նոր պայքարները դիրք ու թուական, վայր ու թշնամի կրնան փոխել, սակայն՝ ոգին եւ միասնականութեան հրահանգը՝ բնաւ: Այդ ղօղանջն է որ կը լսենք ամէնուր եւ ամէն ժամ:*

*Միասնականութեան ղօղանջով գոյառուած, կերտուած եւ ծաղկած հայրենիքը միասնականութեան ոգիով ալ պէտք է պահենք ու պահպանենք, գուրգուրանք եւ ծաղկեցնենք: Անլռելի ղօղանջն է այդ՝ բոլորիս համար ուսանելի:*

*Փա՛ռք Սարդարապատի յաղթանակը կերտած յաղթական սերունդին:*

***ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ»***

# ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ.- «ԼՂՀ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՆԱՐԱՒՈՐ Է ԳԵՐԱԿՏԻՒԱՑՄԱՆ ՓՈՒԼ ՄՏՆԻ»

*ՀՌԻՓՍԻՄԷ ՋԵԲԵՋԵԱՆ*

*«ԼՂՀ խնդրի կարգաւորման գործընթացը հնարաւոր է գերակտիւացման փուլ մտնի». Արմէն Մարտիրոսեան*

*«Ակնյայտ էր դեռեւս նախագահական ընտրութիւններից յետոյ, որ ղարաբաղեան թեմայի շուրջ ակտիւացում է լինելու: Այդպիսի ընտրութիւններից յետոյ, որտեղ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը գնահատական էր տուել, որ սա կուսակցապետութիւն է, եւ այսպիսի երկրում բնականաբար չեն կարող լինել ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւններ, որքան էլ բառեր մոգոնեն, պարզ է, որ այդպիսի ընտրութիւններից յետոյ, եթէ գերտէրութիւնները շնորհաւորում են եւ շնորհաւորանքից յետոյ ԼՂՀ հակամարտութեան կարգաւորման մասին խօսք են ասում, բնականաբար դա նշանակում է, որ իրենք ընտրութիւններից յետոյ պէտք է զբաղուեն դրանով»,- Այսօր Aravot.am-ի հետ զրոյցում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նոր յայտարարութիւնն այսպէս մեկնաբանեց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:*

*Յիշեցնենք, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներն Մայիսի 24-ին հանդէս էին եկել յայտարարութեամբ՝ Ատրպէյճանի եւ Հայաստանի նախագահների հետ անցկացուած հանդիպումների մասին: Յայտարարութեան մէջ նշուած է, որ իրենք վերահաստատել են խաղաղութեան գործընթացին իրենց յանձնառութիւնը եւ այս տարի զգազթաժողով հրաւիրելու անհրաժեշտութեան մասին մտքեր են փոխանակել: Համանախագահները մտադիր են նաեւ առաջիկայում հանդիպումներ ունենալ արտգործնախարարների հետ՝ ուսումնասիրելու համար հակամարտութեան լուծման փոխադարձ ընդունելի մօտեցումները:*

*Արմէն Մարտիրոսեանի խօսքերով՝ հակամարտութեան լուծմանն ուղղուած քայլերը, թէ որքան արագ տեղի կ'ունենան՝ դժուար է ասել. «Ատրպէյճանում եւս այս տարի նոր ընտրութիւններ են նախատեսուում աշնանը: Հնարաւոր է, որ այդ ընտրութիւններից յետոյ գործընթացը գերակտիւացման փուլ մտնի, որովհետեւ երկուսին էլ կ'ասեն, որ մենք շնորհաւորել ենք, մենք հիմա թիմ ենք դարձել միջազգային հարթակում, դուք պարտաւոր էք այդ քայլերն անել, հակառակ պարագայում յատկապէս Հայաստանի նկատմամբ ճնշումների զինանոց ունեն՝ տնտեսական-ֆինանսական առումով: Ինչպէս տեսնում ենք, հենց Հայաստանն է, որ այս տարիների ընթացքում զիջողական մօտեցումներ է սկսել ցուցաբերել: Այն փաստաթուղթը՝ Մադրիդեան սկզբունքները, մեզ համար բնականաբար պարտուողական փաստաթուղթ է, որովհետեւ այնտեղ միանշանակ խօսք է գնում ազատագրուած տարածքների վերադարձի մասին»:*

*Ըստ պարոն Մարտիրոսեանի, հաշուի առնելով ԵԱՀԿ համանախագահների եւ ԵԱՀԿ գործող ղեկավարի այցը տարածաշրջան՝ կարող ենք ասել, որ նախապատրաստական աշխատանքները սկսուել են, եւ գերտէրութիւնները իրենց աւանսը փորձելու են ետ ստանալ. «Յամենայնդէպս երեւում է, որ Ռուսաստան էլ այնպիսի քայլեր է ձեռնարկում, որոնք մեր օգտին չեն, ուստի ես կարծում եմ, Հայաստանն իսկապէս բարդ իրավիճակի առջեւ է կանգնելու, որովհետեւ գերտէրութիւնները այստեղ եւս շահագրգռուած են, որ որոշակի հանգուցալուծում լինի: Սիրիայից յետոյ հնարաւոր է ծառանայ Իրանի խնդիրը, այնտեղ եւս նախագահական ընտրութիւններ են լինելու: Յանկացած պարագայում ես կարծում եմ՝ այդ խնդիրն իսկապէս հրատապ է դարձել»:*

*Արմէն Մարտիրոսեանը գտնում է, որ ստեղծուած բարդ իրավիճակից ՀՀ իշխանութիւնները կարող են ելք գտնել, լուծում, յամենայնդէպս կայ. «Եթէ մի փոքր պետական մտածողութիւն ունենայ, ապա իրենք կը սկսեն արտահերթ ընտրութիւնների գործընթաց: Այլ պրոցեսներ կը լինեն երկրում, եւ իրական ազատ ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած խորհրդարանը երկրում նոր միասնականութեան գործընթաց կարող է սկսել, որը մեզ կարող է ապահովել անցանկալի զարգացումներից: Հակառակ պարագայում մեր իշխանութիւնները չունեն այդ գործիքները, որպէսզի դիմակայեն: Երկրում իրենք միանշանակ աջակցութիւն չունեն: Այն փաստաթուղթը, որը ընդունուել է, երկրի հասարակութեան կողմից աջակցութիւն չունի, սոցիալ-տնտեսական իրավիճակն էլ խայտառակ վիճակում է, եւ իսկապէս խայտառակ վիճակ կարող է ստեղծուել ե՛ւ արտաքին, ե՛ւ ներքին մարտահրաւէրների առումով»:*

# ՏԱԳՆԱՊ՝ ՍԿԻԶԲ Է ԱՌԵԼ ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶՕՐԱԿՈՉ

*ՍԱՄՈՒԷԼ ԱՍԼԻՔԵԱՆ*

*Յաճախ ես ինձ հարց եմ տալիս, թէ ինչո՞ւ է մեր երկիրը այս վիճակում, թէ ինչո՞ւ պատերազմ յաղթած ժողովուրդը լքում է իր հայրենիքը: Այո, պատճառներից մէկը մեր նիւթապաշտ ղեկավարութիւնն է, ղեկավարներ,որոնք ծնկի են գալիս դրամի առջեւ եւ անտեսում Հայաստանի շահերը: Սակայն ես ուզում եմ իմ ուշադրութիւնն ուղղել դէպի հասարակութիւնը, ապրեն նրանք Հայաստանում թէ Սփիւռքի տարբեր երկրներում: Նախ եկէք հասկանանք ինչ է նշանակում հայրենասէր բառը, եւ արդեօք այդքան հե՞շտ է հայրենասէր ինքնակոչուել:*

*Ապրելով Ռուսաստանում, այստեղի մարդկանց հետ շփուելով նրանցից յաճախ լսում եմ այնպիսի մտքեր, որոնցով դժգոհում են Հայաստանից ասելով՝ թէ Հայաստանը ապրելու տեղ չէ... մարդիկ, ովքեր վերջին անգամ 2-3 տարի առաջ մէկ շաբաթով են եղել իրենց երկրում, եւ այդ մէկ շաբաթուայ ընթացքում եկան այն մտքին, որ Հայաստանը ապրելու տեղ չի: Նրանք այդ եզրակացութեան եկան մի քանի մարդկանց շնորհիւ, որոնք դրսում հայհոյեցին կամ մեքենայով իրենց ճանապարհը փակեցին: Սակայն այդ նոյն մարդիկ կարող են ճոխ սեղանի շուրջ հարենասիրական կենացներ խմել եւ կիսաարաբական երգերի տակ յիշել Հայրենիքը:*

*Իւրաքանչիւր մարդու համար կան արժէքներ, որոնք անգին են: Ճիշտ է որոշների մօտ արժեհամակարգը գլխաւորում է նիւթը, սակայն խօսենք նրանց մասին, ովքեր ամէնից վեր դասում են հայրենիքը, ընտանիքը եւ հաւատքը: Ճշմարիտ հայու համար հայրենիքը հաւատքի եւ ընտանիքի հետ պէտք է լինի նոյն շարքում եւ գլխաւորի այդ արժեհամակարգը: Ցաւօք սրտի, այսօր շատերի համար Հայրենիքը արժէք չէ, այլ ընդամէնը բառախաղ: Անձնական շահերից բացի հայ մարդը պետք է հետապնդի նաեւ ազգային շահերը: Հասկանալի է, որ այսօրուայ կեանքի ռիթմը փոխուել է, իւրաքանչիւրը խրուած է իր անձնական գործերում, որպէսզի կարողանայ դրամ վաստակել եւ ընտանիք պահել, սակայն մենք միշտ պէտք է յիշենք այն տղաներին, ովքեր գնացին Արցախ՝գիտակցելով, որ միգուցէ այլեւս հետ չվերադառնան: Չէ որ իրենք էլ ունէին երեխաներ, ծնողներ, իրենք էլ էին ուզում աշխատել եւ դրամ վաստակել, որպէսզի իրենց երեխաներն էլ կարողանային օգտուել կեանքի բարիքներից: 90-ականներին էլ Հայաստանում գերիշխում էր հասարակութեան նիւթապաշտ խաւը, եւ երկիրն էլ ծանր վիճակում էր, սակայն կային մարդիկ, ովքեր պայքարում էին:*

*Այսօր էլ Հայաստանում կան մարդիկ, ովքեր նոր պայքար են սկսել նիւթապաշտ համակարգի դէմ, մարդիկ, ովքեր արդէն ապացուցել են, որ անհնարին ոչինչ չկա, միայն պէտք է համախմբուել եւ ինքնակազմակերպուել, ովքեր իրենց՝ Հայրենիքին նուիրուածութեամբ կարողացել են կոտրել թուրքին եւ յաղթել: Նրանք ունեն յստակ ծրագիր, որով կը պայքարեն մինչեւ յաղթանակ:*

*Սկիզբը է առել նոր զօրակոչ, նոր ազատագրական պայքար: Մենք պէտք է դառնանք մեր ներկայի եւ ապագայի տէրերը, յանուն ազատ ապրելու իրաւունքի, յանուն Հայրենիքի: Մենք պէտք է կառուցենք այնպիսի երկիր, որից մարդիկ չեն հեռանայ, որի հետ հաշուի կը նստեն բոլորը: Հայեր, լինէք դուք սփիւռքում թէ Հայաստանում, միացէք պայքարին, յանուն Եռաբլուրում քնած մեր Սուրբ հերոսների: Ծովից ծով Հայաստանը չպէտք է լինի միայն երազանք, այլ պէտք է դառնայ իրականութիւն, մենք պէտք է հասնենք դրան քայլ առ քայլ: Առաջին հերթին մենք պէտք է կարգի բերենք մեր ունեցած պետութիւնը, որի սահմանները պաշտպանում է Հայ զինուորը, պէտք է կառուցենք հզօր Հայաստան, որի հիմքում կը լինեն բարոյական եւ հոգեւոր բարձր արժէքները, Հայաստան՝առանց աղանդաւորների, առանց սուտ եւրոպական-թուրքաարաբական մշակոյթի, առանց դաւաճանների:*

*Եւ վերջում ուզում եմ յիշել մեր փառաւոր հերոս Մոնթէ Մելքոնեանի խօսքերից. «Թէ ուզում էք ինձ յարգել՝ իմ կենացը մի խմէք, այլ իմ գործը շարունակէք»:*




## ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐԸ ՀՄՄ-ԷՆ ՆԵՐՍ



11 Մայիս 2013-ին Հ.Կ.Բ.Մ.-ի Կարօ Սողանալեան սրահէն ներս տեղի ունեցաւ Մայրերու օրուան նուիրուած շքեղ ճաշկերոյթ խրախճանք, Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան վարչութեան կազմակերպութեամբ:

Ատենապետուհի՝ Լենա Տէրտէրեան, իր բացման խօսքին մէջ շնորհաւորեց բոլոր մայրերը եւ շեշտեց մօր անզուգական եւ գերազանց սիրոյ նկարագիրը, որու կը հետեւի մօր ներողամիտ սիրտն ու հոգին:

Ան շարունակեց ըսելով թէ լաւագոյն նուէրը փոխադարձ մօր սիրոյ, գաւկի հնազանդութիւնը եւ մօր հետ ժամանակ անցընելու կամեցողութիւնն է:

Շարունակելով տիկնաց միութեան տարիներ առաջ սկսած աւանդութիւնը, Ծովիկ Քէօրողլեան ներկաներուն ծանօթացուց վարչութեան կողմէ ընտրուած 2013 թուականի պատուոյ մայրը եւ բեմ հրաւիրեց տիկին Մայրանուշ Սողոմոնեանը՝ ներկայացնելով զայն որպէս տարիներու կամաւոր այս կազմակերպութենէն ներս եւ մասնաւորապէս որպէս «մայր» վարչութեան բոլոր անդամներուն, եւ պարգեւատրեց զայն ծաղկեփունջով եւ յուշատախտակով:

Մայրանուշ Սողոմոնեան ոգեւորուած իրավիճակէն՝ շնորհակալութիւն յայտնելով ասմունքեց Մուշեղ Իշխանի «Մայրիկիս» արտասանութիւնը: Ապա երեկոն ճոխացաւ երգերով, պարերով, նուիրատուութիւններով եւ տասնեակ մը ներկաներ բախտաւորուեցան գեղեցիկ նուէրներով:

Հաճելի երեւոյթ էր տեսնել մայրեր շրջապատուած սիրելիներով, որոնք եկած էին միասնաբար տօնելու այս գեղեցիկ մայրերուն նուիրուած օրը: Գնահատելի է Հ.Մ.Մ. Տիկնանց՝ նախաձեռնած սոյն ձեռնարկը: Ապագայի յաջողութեան մաղթանքներ եւ վարձքերնիդ կատար:



տիկին Մայրանուշ Սողոմոնեան

## ՏՈՔԹ. ՎԱՐՈՒԺԱՆ ԱԼԹԸՊԱՐՄԱՔԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ «ԷԼԻՍ ԱՅԼԸՆՏ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Անուանի բժիշկ՝ Տոքթ. Վարուժան Ալթըպարմաքեան պարգեւատրուած է «Էլիս Այլընտ» շքանշանով:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը այս առթիւ իր խօսքին մէջ ըսած է. «Արժանաւոր պարգեւատրում մըն է ասիկա անձի մը, որ իր օգտակար ծառայութիւնները մատուցած է Ամերիկայի Միացեալ Նահանգներուն իր անձնական եւ մասնագիտական կեանքով՝ մինչ յարգելով եւ պահպանելով իր հայկական ժառանգութիւնը: Կը միանանք Հայ հաւատացեալներուն՝ մեր սրտագին շնորհաւորութիւնները յայտնելու Տոքթ. Ալթըպարմաքեանին եւ իր ընտանիքին»:



Տոքթ. Ալթըպարմաքեան 1991ին բժշկապետ ընտրուած է Ֆրէզնոյի Kaiser Permanente Medical Center-ի եւ 2011ին վերընտրուած է վեց տարուան ժամանակաշրջանով: 1985 թուականէն ի վեր որպէս Սարկաւագ կը ծառայէ Արեւմտեան Թեմէն ներս: Ծառայած է որպէս անդամ Սագքրամէնթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի եւ անդամ Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի: Իր ղեկավարի կարողութիւնները ցուցաբերած է ծառայելով որպէս Թեմական Խորհուրդի անդամ եւ Ատենապետ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նշանակուած է անդամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Նորին Սրբութեան Օրհնութիւնը եւ Արեւմտեան Թեմի հովանաւորութիւնը վայելող «Մեր Յոյս» ոչ-շահութաբեր կազմակերպութեան, որուն նպատակն է Հայրենիքի մէջ ապագայ կեանքի պատրաստել չափահաս օրիորդները:

Տոքթ. Ալթըպարմաքեան անդամ է նաեւ զանազան կազմակերպութիւններու եւ կրթական հաստատութիւններու:

Բացի Տոքթ. Բրշ. Վարուժան Սրկ. Ալթըպարմաքեանէ, նոյն շքանշանին արժանացած են Շողակ Յովհաննէսեան՝ Նիւ Ճըրզիէն, Հրաչ Գաբրիէլեան՝ Նիւ Ճըրզիէն, Ասօ Դաւիթեան՝ Նիւ Եորքէն, Տոքթ. Տրդատ Մանկիւքեան՝ Վըրժինիայէն, Կրէկըրի Մելիքեան՝ Արիզոնայէն, Սիլվիա Զաքմաքճեան՝ Լոս Անճելըսէն, Տոքթ. Վահէ Եագուպեան՝ Կլէնտէյլէն եւ Արա Գէորգ Գարաճէրճեան՝ Կլէնտէյլէն:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՍԻՐՏԵՐ ԳՐԱՒԵՑ -ԱՐԱՐԱՏԻ ՏԱՆ «ԻԿԸԼ ՌԱՔ» ՄԱՍՆԱՃԻՒՂ-



2013 թուականի 16 Մայիս, Հինգշաբթի օրը տօնական էր Արարատի տան Իկըլ Ռաք մասնաճիւղի տարեցներու եւ աշխատակազմին համար: Այդ օրը մեր մօտ հիւր եկած էր ՀԲԸ Միութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի շնորհաշատ աշակերտներէն կազմուած երգչախումբը, որ յուզիչ կատարումներով գերեց մեր սրտերը:

Երգչախումբը Պրն. Նորայր Տատուրեանի խմբավարութեամբ եւ Օր. Էլմիրա Սիմոնեանի նուագածութեամբ ներկայացուց հին ու նոր երգեր եւ կատարեց հայ բանաստեղծութեան ընտիր գործերու արտասանութիւններ:

Երգացանկը բաղկացած էր հետեւեալ կտորներէ. խմբերգեր. «Իրիկնային»՝ Խաչատուր Աւետիսեան, «Նազանի»՝ Սայաթ Նովա, «Պինկէօլ»՝ ժող., «Մարտիկի Երգը»՝ Ա. Սաթեան, «Կռունկ, Բարով Դառնաս»՝ Ալ. Հեքիմեան եւ «Մենք Քաջ Տոհմի»՝ Տ. Զուխաճեան: Երկու աշակերտուհիներ դաշնակի նուագածութեամբ կատարեցին արտասանութիւնները. Մարալ Քիւրտեան՝ Միսաք Մեծարենցի «Սիրերգ»ը եւ Հուրի Սարգիսեան՝ Եղիշէ Չարենցի «Ծիածան»ը: Հուրի Սարգիսեանը մեներգեց նաեւ «Գետաշէն» յայտնի երգը:

Խումբին կ՛ընկերակցէին նաեւ երկու տաղանդաւոր նուագողներ. 10րդ դասարանէն Նիքոլ Քէյլեանը եւ 9րդէն Էմըլի Էքշեանը: Նիքոլը կիթառով նուագեց ու եր-

Շար.ը էջ 18

## ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՊԵՏ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Արժանավայել շուքով պիտի տօնուի հայ մանկավարժութեան նահապետ Երուանդ Պապայեանի ծննդեան հարիւրամեայ յոբելեանը՝ 16 Յունիս 2013-ին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ:

Երուանդ Պապայեան ութը տասնամեակ ունեցաւ ուսուցչա-դաստիարակչական, տնօրէն, ազգային հասարակական, միութենական ու գրական բազմաբեղուն գործունէութիւն մը Միջին Արեւելքէն մինչեւ հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներ, եւ Աւստրալիա: Իր աչքառու ծառայութիւնը մեծապէս գնահատուած է հայրենիքի եւ սփիւռքի պետական, ազգային ու եկեղեցական հաստատութիւններու կողմէ, նոյնպէս ան գնահատուած ու պարգեւատրուած է զանազան երկիրներու պետական պատկան մարմիններու կողմէ:

Առ ի յարգանք եւ գնահատանք մեր մշակոյթի մեծ երախտաւորին, Հայաս-տան-եայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդութիւնը արժանավայել կերպով կը կոչէ Լա Քրէսէնթա Յովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Շաբաթօրեայ Վարժարանը «Երուանդ Պապայեան Շաբաթօրեայ Վարժարան», իր ծննդեան հարիւրամեակի առիթով:

Յոբելեարի ծննդեան հարիւրամեակի առիթով կատարուած նուիրատուութիւնները պիտի յատկացուին Շաբաթօրեայ վարժարանի արդիականացման ու բարեզարդման: Այս նախաձեռնութիւնը երախտագիտութեան ու շնորհակալութեան խօսուն ու համեստ արտայայտութիւն մըն է ի դիմաց բազմավաստակ Երուանդ Պապայեանի կրթական ու ազգային վիթխարի ծառայութեան:

ԼԻԲԱՆԱՆ

# ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐԱԲ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Լիբանանցիներն ու արաբները հայ ժողովուրդի զաւակներուն ծանօթացած են տակաւին դարեր առաջ: Հայոց Ցեղասպանութեան յաջորդած տարիներուն, հազարաւոր հայորդիներու Լիբանան ժամանումով, լիբանանցիներուն հետ սկսաւ սերտ համագործակցութիւնը՝ տարբեր ոլորտներէ ներս: Լիբանանցիները գուցէ շատ լաւ կը գիտակցին հայերուն աշխատասէր, արարող եւ հմուտ արհեստաւոր ըլլալուն մասին, սակայն գուցէ շատ քիչ ծանօթ են հայկական գրականութեան: Ժիւլի Մուրատի մշակած «Մեր Բանաստեղծները՝ Հայաստանի Փառքի Կերտիչները» գիրքը շատ բան կը փոխէ այս իրավիճակին մէջ:

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի միջոցառումներու ծիրէն ներս, բարձր հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին, համագործակցութեամբ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանութեան եւ լիբանանեան 5 համալսարաններու, Կեդրոնական Պէյրութի ՊՈՒԷԼ համալիրին մէջ տեղի ունեցաւ «Տար Մուրատ» հրատարակչատան հրատարակած արաբերէն լեզուով այս գիրքին շնորհահանդէսը, ներկայութեամբ հարիւրաւոր հայ եւ ոչ հայ հրաւիրեալներու եւ գրականասէր ընտրանիի:

Գիրքին մէջ, արաբ ընթերցողին առջեւ կը բացայայտուին հայ բանաստեղծներու ստեղծագործութիւններու արաբերէն թարգմանութիւնները: Այնտեղ կը գտնենք գործեր՝ Յովհաննէս Շիրազէն, Պետրոս Դուրեանէն, Սիամանթօյէն, Մովսէս Խորենացիին եւ քանի մը տասնեակ այլ մտաւորականներէ, բանաստեղծներէ ու գրողներէ: Նաեւ կը հանդիպինք հայ արուեստագէտներու գեղագծագրած գործերուն:

Հանդիսութեան ընթացքին, Տար Մուրատի անունով խօսք արտասանեց Միշէլ Մուրատ: Ան կարեւորեց հայ եւ լիբանանցի ժողովուրդներուն միջեւ ամուր յարաբերութիւնները: Խօսելով հայ բանաստեղծութեան մասին, Մուրատ դիտել տուաւ, որ «երբ հայկական կտորներ կը կարդաս, բանաստեղծը ուղղակի սրտիդ մէջ կը մտնէ»: «Հայերը միշտ սիրած են գիրքը», ըսաւ Մուրատ: Ան նշեց, որ «Մեր Բանաստեղծները՝ Հայաստանի Փառքի Կերտիչները» գիրքի մշակումը տեւած է 8 տարի, կը ներառէ 85 հայ բանաստեղծներու կեանքն ու գործերը: Ան մեծարանքի մասնաւոր խօսք ուղղեց լիբանանահայ բանաստեղծ ու մտաւորական Ընկ. Պէպօ Սիմոնեանին, որուն գործերը ներառուած են գիրքին մէջ եւ որ օժանդակած է գիրքի մշակման աշխատանքներուն: Մուրատ նաեւ գրուատեց աշխատանքը՝ գրականագէտ Երուանդ Տէր Խաչատուրեանին ու արուեստագէտ

Շահէն Խաչատուրեանին, ինչպէս նաեւ գիրքի հրապարակման ու հանդիսութեան կազմակերպման աշխատանքներուն օժանդակած բարերարներուն:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահին խօսքը ար տասանեց յատուկ յանձնառութեանց դեսպան Լեւոն Սարգսեանը:

Ան յիշեցուց, որ հայ եւ արաբ ժողովուրդները ունին դարաւոր աւանդոյթներ, պատմութեան ընթացքին իրարու ճանչցած են, ակնածանքով եւ հոգածութեամբ վերաբերած են խնդիրներուն: «Հայ ժողովուրդը մշտապէս երախտապարտ է արաբ ժողովուրդին՝ Ցե-

Շար.ը էջ 18

# ՄԱՀԱՑԱԾ Է ՈՒՐՈՒԿՈՒԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐ ԱՐԱՄ ՌՈՒԲԷՆԵԱՆ


Արամ Ռուբէնեան կը մակագրէ իր հեղինակած գիրքը՝ Հնչակեան Կուսակցութեան Ուրուկուէյի կեդրոնի գրադարանին մէջ

Մայիսի 22ին, 64 տարեկանին երկարատեւ եւ ծանր հիւանդութենէ ետք մահացաւ ուրուկուահայ ԶԼՄ-ի հանրածանօթ գործարար Պր. Արամ Ռուբէնեանը: Անոր հայրը հանգուցեալ ընկեր՝ Յարութիւն Ռուբէնեանը մինչեւ 2007 թուականին գործած «Ռատիօ Արմենիայի» հիմնադիրն էր: Իր ընտանիքի միջոցով Արամ Ռուբէնեանը բեղուն ճանապարհով անցաւ ռատիոյի մէջ դառնալով 4 կայաններու տնօրէն:

Ունենալով մեծ սէր հայ մշակոյթի հանդէպ կարեւոր գործունէութիւն ունեցած է հայ երաժշտութեան տարածման համար Ուրուկուայի մէջ: Օգտակար անձնաւորութիւն եղած է համայնքին եւ Հայաստանին:

ՍԴՀԿ-ի անունով մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալ՝ Պր. Արամ Ռուբէնեանի մօր՝ տիկին Արաքսիին, եղբօր՝ Պերճին, զաւակներուն եւ ընտանիքի միւս անդամներուն:

Կազմակերպութեամբ՝
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

Հովանաւորութեամբ՝
Գերշն. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

Մասնակցութեամբ՝
ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ
Հանդիսութիւն

Բազմավաստակ Կրթական Մշակ
Տիար ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ

Կիրակի, Յունիս 16, 2013

Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ
յընթացս Ս. Պատարագին պիտի ընթերցուի

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

Պատարագի աւարտին Պաշտօնական Հանդիսութիւն
Առաջնորդարանի ԶՕՐԱՅԵԱՆ Թանգարանի
Սիրալիր հրաւէր բոլորին

www.massisweekly.com
Updated Every Friday

## ՕՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ 5-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1. ՀՀ Գրողների Միութեան եւ ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ 2013թ. Յուլիսի 11-15-ին Հայաստանում տեղի կ՚ունենայ օտարագիր հայ գրողների հերթական՝ 5րդ համաժողովը, «Համաշխարհայնացում եւ ազգային ինքնութիւն» խորագրով:

Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները, իսկ կացութիւնն ու սնունդը՝ կազմակերպիչները: Հայտերը ներկայացնելու համար դիմել Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն: Վերջնաժամկէտ՝ 2013թ. Յունիսի 5:

2. 2013թ. Յուլիսի 5-6-ին Երեւանում տեղի կ՚ունենայ Իրաւաբանների համահայկական համաժողով: Համաժողովին կարող են մասնակցել իրաւագիտութեան բնագաւառի այն մասնագէտները, ովքեր

1. մասնակցել են Իրաւաբանների համահայկական առաջին համաժողովին,

2. անդամակցում են «Իրաւաբանների համահայկական խորհրդակցութիւն» կազմակերպութեանը,

3. զբաղւում են Հայոց Ցեղասպանութեան խնդիրներով,

4. ցանկանում են մասնակցել համաժողովին՝ անհատական կարգով:

ՀՀ սփիւռքի նախարարութիւնը հոգում է մասնակիցների սնունդի եւ համաժողովի կազմակերպական հարցերը: Մասնակիցները հոգում են ճանախարհի եւ կեցութեան ծախսերը:

Մանրամասներին տեղեկանալու համար դիմել Լոս Անճոլեսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն: Վերջնաժամկէտ՝ Յունիսի 1:

3. ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը, Հայաստանի կրթօճախներում սփիւռքահայ ուսանողների ընդունելութեան նպատակով, յայտարարում է ընդունելութիւն 2013-2014 ուսումնական տարուայ համար: Փաստաթղթերի ներկայացման ժամկէտը 2013թ. Յուլիսի 9-ից մինչեւ Օգոստոսի 24-ն է: Մանրամասներին տեղեկանալու, ինչպէս նաեւ մասնագիտութիւնների ցուցակի հետ ծանօթանալու եւ դիմում-հարցաթերթիկ լրացնելու համար դիմել Լոս Անճոլեսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն: Վերջնաժամկէտ՝ Յուլիսի 1:

Լոս Անճոլեսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն կարող էք կապուել հետեւեալ հեռախօսահամարով 1(818) 265-5900 x 313:

Էլ. Փոստ՝ community@armeniaconsulatela.org

# Massis Weekly

Volume 33, No. 20 Saturday, June 1, 2013


## Armenia Celebrates First Republic Day



**Armenia's military units parading at Sardarapat memorial**

SARDARAPAT -- Armenia marked First Republic Day on Tuesday May 28, in a special ceremony celebrating the establishment of an independent Armenian republic state 95 years ago.

The ceremony took place at the Sardarapat war memorial 40 kilometers west of Yerevan, the site of a key battle with Ottoman Turkish troops that was followed by the declaration of Armenia's independence.

In a speech at the event, President Serzh Sarkisian called for unity to make achievements and uphold the restored statehood.

"For many nations the declaration of independence was a political act and even a grand ceremony whereas for us it was an ordeal. We did not even know that one or two days after the courageous May battles we would declare independence. We created Armenia's statehood right in the battle field at the expense of enormous casualties and losses, thanks to blood and faith, standing behind each other, looking forward. United!" said Sarkisian in his speech.

"May 28, 1918 heralded our physical deliverance and political rebirth; consequently, our people's valor and vigor were superbly manifested during the Great Patriotic War and in the battle of Artsakh. Today, here at Sardarapat, the Armenian soldier's firm tread and victorious spirit testify in the best possible way that we know the formula of survival and victory," he continued.

President Sarkisian said the younger generations need to be reminded of the important message of the ones who made May 28 a reality.

"Be united! Be consolidated by statehood! Rely on your own strength! Thus we are capable not only to restore our statehood and independence disrupted for centuries but make considerable achievements. Their foundations were laid here and today we are standing here proudly as citizens of a free and independent country, the heirs of heroic grandfathers," he said.

Following a ceremonial parade by Armenia's military units, the President Sarkisian and other dignitaries laid wreaths at the Memorial to the heroes of the Battle of Sardarapat.

## Scotland Parliament Declares April 24 Armenian Genocide Remembrance Day



EDINBURGH -- The Scottish Parliament passed a motion to announce April 24 as the Armenian Genocide Remembrance Day. The motion, presented by The Member of the Scottish Parliament for Edinburgh Central Marco Biagi, was signed by 65 MPs out of 129 representing all political forces.

According to the motion posted on the Scottish Parliament's website, "the Parliament notes that 24 April is the anniversary of the government of the Ottoman Empire arresting Armenian intellectuals in 1915, which is generally considered to be the beginning of the forced relocations and expulsions that led to the deaths of hundreds of thousands of Armenians in a systematic genocide over the course of eight years; believes that the Armenian tragedy gives the people of every nation reason to pause and reflect; commemorates all those who have fallen victim to genocide or attempted genocide, and recognizes this and all other genocides as tragedies that should never be repeated in any part of the world."

## Prince Charles Visiting Armenia



**Prince Charles at Yerevan's famous Matenadaran museum of ancient manuscripts**

YEREVAN -- Charles, the prince of Wales, arrived in Armenia on Tuesday on a three-day private visit which a senior British diplomat said reflects his interest in the country's history and culture.

The eldest child and heir apparent of Queen Elizabeth II thus became the first member of the British royal family to set foot in independent Armenia.

The main purpose of his trip is to promote a charity project in Yerevan planned by Armen Sarkisian, a London-based former Armenian prime minister. The project called "Yerevan My Love" is aimed at reconstructing historical buildings in the city and using them for charitable purposes. Sarkisian and Charles have jointly raised funds for that as well as a separate effort to restore a medieval castle in Scotland in recent years.

Charles headed to Yerevan's famous Matenadaran museum of ancient Armenian manuscripts on his arrival at the Zvartnots international airport. No journalists were allowed to enter the building guarded by senior Armenian police officers. Officials at the British Embassy in Armenia said Charles familiarized himself with manuscripts

**Continued on page 2**

## Prof. Richard Hovannisian Receives UCLA Honors Collegium Distinguished Teaching Award



**Patricia A. Turner and Richard Hovannisian**

UCLA -- On May 23, Professor Richard Hovannisian was named the recipient of the UCLA Eugen Weber Honors Program Distinguished Teaching Award for his years of service to the honors division. He has been singled out for his motivational teaching, especially of the Honors Comparative Genocide colloquium, which has steadily won the praise of students, who attest that the course has deeply influenced them to strive for human rights and the prevention of the crime of genocide.

The Rose Gilbert Honors Spring Tea was opened by Vice Provost for Undergraduate Education, Patricia A. Turner, who spoke of the excellence of teaching and student scholarship at UCLA. Assistant Vice Provost for

**Continued on page 3**

# Visiting French Lawmakers Call for International Recognition of Karabakh

STEPANAKERT -- Three members of France's parliament met with Nagorno-Karabakh's leaders on Monday during a visit to the territory that will likely prompt protests from Azerbaijan.

Francois Rochebloine, a pro-Armenian member of the French lower house, and Senators Henri de Raincourt and Bernard Saugey held separate meetings with Karabakh's President Bako Sahakian and Foreign Minister Karen Mirzoyan.

All three lawmakers are affiliated with center-right parties that are in opposition to France's current Socialist government. De Raincourt served as a minister in former President Nicolas Sarkozy's cabinet before returning to the French Senate in June last year.

In a statement, Sahakian's office said the Karabakh leader discussed with the visiting parliamentarians the unresolved conflict with Azerbaijan and broader regional security. Sahakian was quoted as stressing the importance of the recent creation of a French parliamentary group promoting cooperation with Karabakh.

The members of the friendship group briefed journalists in Yerevan about their tour over NKR, including visits to Stepanakert airport, Shushi museum. As they noted, they aimed to familiarize themselves on with the situation in the Republic and promote a peaceful life in Artsakh.

Mr Saugey, in turn noted, that he last visited the country 20 years ago, during the war. "The Republic's development over the past years is obvious, though much has yet to be done. I was very impressed with the efforts the Republic's leadership takes to achieve progress," he noted.

The French Senator further urged to struggle for international recognition of the Republic, as well as the protection of the latter's rights.

"During out visit, we met several generals who said they wanted to be the soldiers of peace. I was very impressed with their statement. The Artsakh-France friendship group is a minor structure, which however, can promote that goal," he stressed.

A pro-Armenian member of that group, Valerie Boyer, visited Karabakh together with a Greek member of the European Parliament last month. Boyer also called for international recognition of Karabakh's de facto secession from Azerbaijan during the trip.

Like Raincourt and Saugey, Boyer is a member of Sarkozy's Union for the Popular Movement party. She was the main author of a 2012 French bill criminalizing denial of the Armenian genocide.

Azerbaijan is likely to condemn the French senators and declare them persona no grata for visiting Karabakh without its permission.

# Writer Levon Khechoyan Refuses Armenian State Award



Novelist Levon Khechoyan

YEREVAN -- Renowned Armenian novelist Levon Khechoyan has refused to accept a state award granted by President Serzh Sarkisian in protest against the socioeconomic and political situation in the country.

Khechoyan was among several writers, artists and other intellectuals who were awarded a Medal for Services to the Homeland ahead of an independence holiday marked in Armenia on Tuesday. He boycotted an awards ceremony held in the presidential palace on the same day.

Khechoyan explained on Wednesday that his decision was an expression of protest against widespread poverty and injustice which is forcing many Armenians to leave their country. He also said he could not have accepted the medal amid continuing street protests by fellow veterans of the war in Nagorno-Karabakh demanding a sizable rise in their state pensions.

Speaking to RFE/RL's Armenian service (Azatutyun.am) from a Yerevan hospital where he is currently undergoing treatment, Khechoyan made clear at the same that he is grateful to Sarkisian for deciding to award him.

Prominent Armenians have occasionally refused or handed back state awards in the past, citing the state of affairs in the country. Last January, Harutiun Karapetian, a senior fellow at the state-funded Research Center for Organic and Pharmaceutical Chemistry, renounced an annual presidential prize sponsored by the Boghossian Foundation, a Diaspora Armenian charity, in protest against what he called widespread corruption in post-graduate education and research.

Karapetian was part part of a team of three researchers who received the prize as well an equivalent of $5,000 in 2008 in recognition of their work.

Incidentally, Sarkisian handed the latest Boghossian Foundation awards to over a dozen scientists, scholars and artists at a ceremony on Wednesday. "With these awards we are not only expressing gratitude to you but also urging to do more," he told them.

HayastanInfo.net

# Aliyev Again Threatens a Military Solution to the Karabakh Conflict

BAKU -- Azerbaijani President Ilham Aliyev hit out at international mediators on Monday, saying that they are trying to reinforce the ceasefire regime in the Nagorno-Karabakh conflict zone at the expense of his country's territorial integrity.

"The co-chairs [of the OSCE Minsk Group] are trying stabilize the situation along the Line of Contact and dealing with other issues unrelated to the essence of the problem. Such a situation is unacceptable and inadmissible. It must be changed," Aliyev said in a speech in Baku cited by 1news.az.

Aliyev said that the United States, Russia and France, which co-head the Minsk Group, must help to "ensure Azerbaijan's territorial integrity recognized by the international community." "Occupation forces must be withdrawn from Azerbaijan's territory," he said, speaking just days after the co-chairs' latest visit to Baku and Yerevan.

Confidence-building measures aimed at preventing deadly skirmishes along the Armenian-Azerbaijani frontline have been a key focus of the mediators' activities in the last few years. In particular, they have urged the warring sides to withdraw snipers from frontline positions and work out a mechanism for joint investigations of truce violations. This idea has been backed by the Armenian side but rejected by Baku.

The mediators appear to have made no new formal peace proposals since Aliyev and President Serzh Sarkisian failed to agree on the most recent version of their Basic Principle of a Karabakh settlement at a meeting hosted by Russia two years ago. They are now trying to organize a new Armenian-Azerbaijani summit in the coming months.

Aliyev again accused the Armenians of stalling for time and threatened a military solution to the Karabakh dispute. But he also said, "We are seeking a peaceful resolution of the conflict for now. I think that possibilities of that have not yet been exhausted."

# Passions Over Gas Price Increase Continue

YEREVAN -- The Public Services Regulatory Commission of Armenia failed to convene its meeting to discuss the new tariffs for natural gas and electricity.

Before the start of the sitting members of an initiative group protesting against the increased tariffs staged a protest outside the PSRC building. The group was not allowed in as the hall was small and could not seat everyone interested in the public debate.

Hardly had the discussion started when it was interrupted because of the turmoil in the hall.

Shiraz Kirakosyan, Deputy Chairman of PSRC, said that 3.5 million people might express a desire to attend the PSRC sitting but they cannot find room for all attendees.

"Conditions in Vardashen's sovkhoz (state farm) are much better than in this hall, which does not even have loudspeakers and air conditioners," said Andreas Ghukasyan, a member of the civil initiative.

PSRC Chairman Robert Nazaryan hurried to reply the activist saying that they could simply provide a bigger hall. His words angered Arshak Sadoyan, a member of the Public Council, who said, "If you could provide us with a larger hall, why didn't you do it?"

The PSRC Chairman said the protest staged outside the building was nothing but a show. In reply, the activists present at the hall said they were not actors to stage shows.

As announced earlier, the new natural gas tariff will be set at 156 AMD per cubic meter, with 30-percent subsidy from the government. Electricity tariff is expected to increase by 27 percent.

# Prince Charles Visiting Armenia

**Continued from page 1**

before listening to a presentation of "Yerevan My Love" by Sarkisian.

Charles and Sarkisian made their way into the recently expanded Matenadaran building through a back door, wrong-footing several dozen Armenian environmental activists that demonstrated by the main entrance. They gathered there to urge the prince to help thwart plans by the British company Lydian International to mine gold at the Amulsar deposit in southeastern Armenia. They say that openpit mining operations there would severely damage the local ecosystem, a claim strongly denied by the company.

Armen Sarkisian, who reportedly has extensive business interests in Britain joined Lydian International's board of directors in March. The protesters noted this fact in a letter which they hoped to hand to Charles.

Jonathan Aves, the British ambassador to Armenia, promised to pass the letter on to Charles when he met the protesters outside the Matenadaran. Aves also offered to arrange a meeting between their representatives and the prince's private secretary.

While agreeing that there are "legitimate concerns" regarding mining at Amulsar, Aves stressed that he is "impressed" by Lydian's approach to environmental issues. "We expect that they will do their best to meet all the regulations and rules that are required to establish their operations," he told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). The diplomat added that the Armenian government is "working hard" to ensure that the British company complies with those rules.

Aves also declined to give more details of Charles's other sightseeing activities, citing the private nature of the visit. The British envoy said that the world-famous prince is "interested in cultural monuments and the history of Armenia."

## "Along the Trails of the Armenian Orphans"



YEREVAN -- U.S. Ambassador to Armenia John A. Heffern opened the photo exhibition "Along the Trails of the Armenian Orphans" at the National Gallery of Armenia.

The exhibition is a joint project of the Naregatsi Art Institute (NAI), the Near East Foundation (NEF), and the U.S. Embassy. The exhibition illustrates the amazing story of Near East Relief: an American-led humanitarian mission that saved hundreds of thousands of Armenian orphans following the 1915 atrocities in the Ottoman Empire. It includes exceptional photos kept at The Rockefeller Archives

Ambassador Heffern, NAI Founder Nareg Hartounian, NEF Chairman Shant Mardirossian, and the Director of the Armenian Genocide Museum-Institute, Hayk Demoyan, spoke at the exhibition opening and shed light on this important chapter in U.S.-Armenia relations.

In addition, the opening featured the screening of a documentary film, "Lest They Perish," by Zareh Tjeknavorian, and a musical tribute to Near East Relief performed by the Naregatsi Folk Instruments Ensemble.

The Embassy, NAI, and NEF opened similar exhibitions at the Naregatsi Art Institute in Yerevan on Sunday, May 26 and the Terchoonian Home Orphanage in Gyumri on Monday, May 27. All three exhibitions will be open, free of charge, until June 8.

The collection belongs to the Rockefeller Archive Center of New York. Below are some samples from the archives:









## Sevan Nisanyan is Not Alone!

A group of Turkish and non-turkish intellectuals issued a statement titled "Sevan Nishanyan is not Alone" in support of Istanbul-Armenian linguist Sevan Nishanyan, who was sentenced to 13.5 months of imprisonment only for the Prophet Muhammad.

37 intellectuals have already signed the statement. Among them are Ragip Zarakolu, Sait Çetinoglu, Ismail Besikçi, Garo Kaprielian, Ali Nesin and many other distinguished figurs.

We protest the thirteen and a half months of sentencing of Sevan Nisanyan charged with the pretext that he does not interpret Islamic mythology like the Islamists. After Fazil Say, who has been also punished because of Omar Khayyam's poetry, the punishment of the writer, linguist and researcher Nisanyan is not only a strong indication that Sunni Islam's intolerance in Turkey is not only widespread at state level but has become clearly the official opinion.

It is also necessary to interpret Egemen Bagis's, the Turkish Europe minister's, obscene comparision of the Swedish parliament's resolution of Seyfo (Assyrian Genocide) as being "masturbation" in the same context - a statement he made during a meeting with the Assyrian/Syriac representatives in Sweden. In addition, the recent prison sentences of Necati Abay, the representative of the Solidarity Platform with Imprisoned Journalists for 11 years and three months, the sentencing of the former editor of the newspaper Azadiya Welat, Ibrahim Güvenç, for more than 10 years (10 years and 3 months and 22 days) can be seen as another evidence that freedom of expression faces new restrictions in Turkey.

We learn from an article of Mehmet Y. Yilmaz, who writes about an anecdote attributed to the Minister of Culture and appearing in the Hurriyet newspaper dated from 13 May 2013 under the title 'anecdote' the following: The Prime Minister Minister Recep Tayyip Erdogan in a meeting of the so-called 'wise men' is cited saying, that Ömer Celik, the Minister of Culture, meant God when saying that even he cannot do anything against defamation, while Erdogan said of himself that they call him the father of Jesus - as told in the anecdote, which only trigged smiles.

It is scandalous that a minister of the AKP insults billions of Christians around the world as well as distorts Christian view about the Holy Trinity with rude comments while he is supported by Erdogan. It is macabre that such statements are made in meeting with the so-called 'wise men' aimed to promote peace, whereas no one opposes. While Erdogan is still insulting Yezidis, Alevis, Zoroastrians and other religions, Islamic intolerance is evidently executed by exorbitant penalties of the Turkish Republic as it is obvious in the case of Nisanyan, who only rejected to accept Islamic mythology as is.

We, the undersigned, demand the immediate withdrawal of this conviction and of similar inquisitory decisions that may follow. We demand that life assurance must be given to Sevan Nisanyan and freedom of expression is fully supported as written in the constitution.

Critique of religions is meantime part of the liberty of thoughts and freedom of religion which are fundamental human rights. We want to emphasize that such decisions unfortunately encourage terrorists at a time where Islamic terrorism is spreading and threatening the world's peace.

We ask all concerned people in the world to speak out against this ridiculous decision.

We declare that we are concerned about Sevan Nishanyan, Fazil Say, Necati Abay, Abraham Güvenç and other persecuted friends for their thoughts. Join us, raise your voice, because there it about dignity and our all future ...

Ismail Besikçi, Fikret Baskaya, Sait Çetinoglu, Ibrahim Seven, Adnan Chalma Kulhan, Abut Can, Kenan Araz, Abdulmesih BarAbraham, Ali Nesin, Erol Özkoray, Ragip Zarakolu, Ahmet Abakay, Attila Tuygan, Ahmet Önal, Muzaffer Erdogdu, Aram Budak, Nadya Uygun, Rüstem Aryal, Murat Kuseyri, Sait Eser, Fikri Göksal, Shabo Boyaci, Garo Kaprielyan, Hilda Siradag, Kermo Reada, Hovsep Hayreni, Recep Marasli, Shabo Akgül, Ferit Altinsu, Musa Konaç, Basim Altundag Barhe, Sabri Yildiz, Simon Barmano, Yohan MackayRume, Selay Ertem, Zeynep Tozduman, Hanna Kerkinni, Dikran Ego, Pinar Ömeroglu, Serdar koçman, Fatima Akalin, Mahmut Konuk, Ramazan Gezgin, Sezai Sarioglu, A. Aydin Dogan, Güngör Senkal, Dr. Ali Kiliç, Temel Demirer, Sibel Özbudun

## Prof. Richard Hovannisian Receives UCLA Award

**Continued from page 1**

Honors, G. Jennifer Wilson, then lauded Professor Hovannisian for his inspirational work, reading three examples of the student evaluations that described the instructor and the course in superlative terms. She invited Hovannisian to the podium to receive his award. In thanking the Honors Program, the professor reflected on the role of the late UCLA Dean of Social Sciences Eugen Weber, a world renowned historian of Western Civilization, and of Mrs. Rose Gilbert, an outstanding teacher of English at Palisades High School, where she helped develop the writing skills of Raffi, Armen, and Ani Hovannisian and then to the next generation through Raffi's son Garin. Rose Gilbert, who was present at the awards ceremony and continued to teach into her nineties, is a major benefactor of the scholarship programs at UCLA.

Although Richard Hovannisian is now an emeritus faculty member at UCLA, he is recalled annually to interact with bright, motivated students in the comparative study of genocide, with the Armenian Genocide being one of the major subjects.

massispost.com

# Dr. Varoujan Altebarmakian Receives Ellis Island Medal of Honor

FRESNO -- Dr. Varoujan Altebarmakian, noted leader in the health care industry and a devoted servant of the Western Diocese, was the recipient of the Ellis Island Medal of Honor in ceremonies held on Ellis Island on May 11, 2013.

His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese, stated "This is a well deserved tribute to someone who has contributed to America through his personal and professional life, while honoring and retaining his Armenian heritage. We join with the Armenian faithful in extending our heartiest congratulations to Dr. Altebarmakian and his family."

The Ellis Island Medal of Honor was founded by the National Ethnic Coalition of Organizations and intended to pay homage to the immigrant experience. The honorees are said to "exemplify outstanding qualities in both their personal and professional lives, while continuing to preserve the richness of their particular heritage." The Medals of Honor celebrate the diversity of American life, honoring not only individuals, but the pluralism and democracy that have enabled ancestry groups to maintain their identities while becoming integral parts of the American Way of Life.

Dr. Altebarmakian has had a distinguished career in the field of medicine and health care industry. He was elected as the Physician-in-Chief of the Fresno Kaiser Permanente Medical Center in 1991 and in 2011 was re-elected for a third six year term. Dr. Altebarmakian has helped promote assistance to the underserved within Fresno through community benefit programs.

Dr. Altebarmakian has made significant community contributions in the United States, most notably as a servant of God in the Armenian Apostolic Church. He has been a Deacon of the Armenian Apostolic Church since 1985. He has served as a member of St. James Armenian Church Parish Council in Sacramento and as a member of St. Paul Armenian Church Parish Council in Fresno. He has demonstrated leadership with his service as a member of the Diocesan Council of the Western Diocese of the Armenian Church for twelve years, most of that



**Dr. Varoujan Altebarmakian**

time as its Chairman. His community contributions in Armenia include his service as a member of the Supreme Spiritual Council of Armenian Church; and as a member of the Board of Directors of Mer Hooys, a California non-profit organization to assist young female adults in Armenia to break the cycle of dependency.

Dr. Altebarmakian is well known for his contributions to the American community which includes service as a member of the Board of Directors of the Fresno Philharmonic; member of the Fresno Rotary Club; and member of the Board of Directors of the Fresno Business Council. He is also a member of the Board of Directors of the Armenian School in Fresno; a member of the Advisory Board of Armenian Studies Program at Fresno State University and a member of the Knights of Vartan, Yeprad Lodge.

Approximately 100 Medalists are honored each year. Past Medalists include six Presidents, as well as Nobel Prize winners and leaders of industry, education, the arts, sports and government. This year nine recipients, including Dr. Altebarmakian, were of Armenian descent. The recipients were Shoghag Hovanessian from New Jersey; Hratch Kaprielian from New Jersey; Aso Tavitian from New York; Dertad Manguikian, M.D. from Virginia; Hon. Gregory Melikian from Arizona; Silvia Tchakmakjian from Los Angeles; Vahe Yacoubian, M.D. from Glendale; and Ara Kevork Karajerjian from Glendale.

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

massispost.com
daily news updates

# LA Children Raise Funds for Children in Armenia at AMAA Luncheon



**AMAA Child and Orphan Care luncheon committee members**

BEVERLY HILLS -- The Crystal Ballroom of the Beverly Hills Hotel was adorned with beautiful butterflies for the AMAA Child and Orphan Care luncheon and children's fashion show, where the theme was "Children Helping Children Spread Their Wings." The luncheon co-chairs, Joyce Stein and her daughter Tina Segel, welcomed the crowd and introduced the vivacious emcee for the day, Araksya Karapetyan, the anchor for KTTV Fox 11. The co-chairs of this event worked tirelessly to make every aspect of the luncheon enjoyable for all the guests. Kyle Kevorkian, who had been to Armenia in the last year, gave a moving devotional about his experience there.

The ballroom looked spectacular with beautiful bird cage centerpieces that were overflowing with flowers generously donated by Zareh David Ghoukassian of David Z. Design in Beverly Hills. Jessica Vartoughian once again donated the wonderful favor bags full of Jessica Cosmetics products for each guest! All of our guests were thrilled with their goodie bags….

There were so many wonderful items available to bid on at the silent auction! This year's silent auction was tremendously successful— Paulette Geragos and Leslie Kevorkian, the silent auction co-chairs, and their wonderful committee procured many amazing items, including incredible jewelry, beautiful Lalique and Waterford pieces, many children's toys, dining certificates, and much more. Argine Jean Kelegian and Christine Minasian made the auction room look absolutely breathtaking.

After lunch, Lisa Karamardian talked about her recent trip to Armenia and encouraged everyone to sponsor a needy child and make a difference in their lives. A video was shown describing the poor and substandard conditions which many of Armenia's children live in. Tina Segel said "our committee is so excited to help the needy children and their families in Armenia and Karabagh."

After a delicious dessert with beautiful edible butterflies, the children's fashion show was introduced by Ani Zakari, who along with Marilyn Bezdikian and Caroline Tufenkian, coordinated this year's show. The fashion show was sponsored and produced by Nordstrom Glendale. The Nordstrom Glendale team, along with the committee, worked tirelessly to make the fashion show a huge success and to make sure the presentation of more than fifty children and teenagers in this year's show was seamless. This year, Jessica Vartoughian's granddaughter, Alia Shamsi, opened the fashion show and walked with her father down the runway. Nordstrom was thanked for its partnership and participation in this year's event which is very much appreciated. As a special surprise at the end of the fashion show, Hoy Lari entertained the audience with their wonderful performance! Assistance with the video presentation of the fashion show was expertly coordinated by Julia Aghishian, who oversaw all technical, sound and lighting for the event.

The finance and reservations chair, Sandra Kalemkiarian, was thanked for her tremendous contribution towards the success of the event by making sure the reservations and silent auction are run efficiently and accurately. Sandra works tirelessly every year, to seamlessly close out the auction. "We are grateful for every donation and sponsorship we receive," explained Sandra, "this was the third year we had an enormous crowd. We are grateful for all our guests who come every year to support the needy children in Armenia."

In closing, Lori Muncherian and Arsine Phillips, the West coast co-chairs of the committee, thanked the chairs, the entire committee and all the donors for their continued support of this event for the children in Armenia. Many children in Armenia lack the basic necessities—food, clothing and shelter. "We are giving hope for a better future, one child at a time," explained Elizabeth Agbabian, who along with Savey Tufenkian and Mary Najarian have worked on this very worthy program since the 1988 earthquake in Armenia.

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

# ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՇ. ԱՐԱՄ ԱՐՔ. ԱԹԷՇԵԱՆ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԵՑԱՒ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԷՋ



*ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ*

Անցնող 37 տարիներու ընթացքին մարդասիրական առաքելութիւն ծաւալած Պոլսահայ Միութիւնը, տարուէ տարի աւելի եւս կ'ընդարձակէ իր աշխատանքները մեր ժողովուրդի կեանքէն ներս, յատկապէս հայ համայնքին մէջ:

Կազմակերպութեամբ Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութեան, Պոլսոյ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Արամ Արք. Աթէշեան հիւրընկալուեցաւ Միութեան մէջ, Երկուշաբթի Մայիս 20, 2013ին իրեն ընկերակից ունենալով Պոլսոյ Պատրիարքարանի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական բաժնի վարիչ՝ Սահակ Եպսկ. Մաշալեան: Ներկայ էին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, եւ Վէն Նայսի Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւ՝ Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան, Միութեան Հոգաբարձութեան Ատենապետ՝ Իրաւաբան Էտվին Մինասեան, կարգ մը՝ նախկին Ատենապետներ եւ Պատուոյ անդամներ, Վարչութեան անդամներ, Պոլսահայ Միութեան հովանիին ներքեւ աշխատող ատենապետներ եւ յանձնախումբի անդամներ, ինչպէս նաեւ կարգ մը գործօն անդամներ: Ճաշկերոյթը կազմակերպուած էր շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ, Գերշ. Արամ Արք. Աթէշեանի Արեւմտեան Թեմ իր պաշտօնական այցելութեան մասին Հոգաբարձութիւնը տեղեակ պահուելէն անմիջապէս վերջ:

Ձեռնարկը սկսաւ Արամ Սրբազան Հօր ճաշօրհնէքով, ապա համադամ ուտելիքներու ճաշակումով, որմէ ետք բացման խօսքը կատարեց Միութեան Գործադիր Մարմնի վարչութեան անդամուհի՝ Տիկ. Թալին Սարաֆօղլու, հրաւիրեց վերոյիշեալ վարչութեան ատենապետ՝ Տիար Գուրգէն Պէրքշանլարը, որ Միութեան զոյգ վարչութիւններուն անունով, մեծ հաճոյքով, ողջունեց Սրբազան Հայրերը, յայտնելով որ՝ «Մենք իբրեւ սփիւռքահայեր անհուն ուրախութեամբ կը հիւրընկալենք Գերշ. Արամ Արք. Աթէշեանը, որ դժուար պայմաններու տակ այս այցելութիւնը կ'իրականացնէ»: Տիար Պէրքշանլար հաւաստիացուց, թէ՝ «Պատրիարքարանին մտահոգութիւնները միակողմանի չեն, այլեւ բոլոր հայութեան կը պատկանին, տրուած ըլլալով որ Սրբազան Հօր ներկայացուցած Ս. Աթոռը համայն հայ ժողովուրդին ժառանգն է»:

Ատենապետը տեղեկութիւն տուաւ Պոլսահայ Միութեան հիմնադրութեան մասին, որուն հիմնական նպատակը եղած է ըլլալ այն հայ օճախն ու գաղթակայանը, ուր հազարաւոր մղոններէ եկած հայորդիներ հոս հաստատուած են, նաեւ, թէ ինչպէս փոփոխուող միջավայրին հետ քայլ պահելով, Պոլսահայ Միութիւնը կը պատրաստուի Համահայկական Միութիւն մը դառնալ, ունենալով հետեւեալ հիմնական նպատակակէտերը.

ա. Հայրենիքի բարգաւաճում:

բ. Ընդարձակել եւ տարածել Պոլսոյ Արեւմտահայկական Մշակոյթը Սփիւռքի մէջ:

գ. Հայապահպանման համար անխտիր պայքար մղել, ճերմակ ջարդին դէմ:

Տիար Պէրքշանլար խօսեցաւ նաեւ վերջին տարիներուն ընթացքին Պոլսահայ Միութեան իրականացուցած ձեռնարկներուն մասին: Ապա ան հիւրերուն առաջարկեց յաջողութեան մաղթանքի ցանկութիւններով յոտնկայս բարձրացնել բաժակները ի կենաց հայ ժողովուրդին, իրենց հայ համայնքէն եւ գաղութէն ներս:

Ամպիոն հրաւիրուեցաւ Բարեխնամ առաջնորդ՝ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, որ իր սրտի խօսքին մէջ յայտնեց, թէ՝ Գերշ. Արամ Արք. կը ներկայացնէ Կոստանդնուպոլսոյ փառաւոր կոթողը, որուն ծննդեան 552րդ տարեդարձն է, որ կը տօնախմբուի: Ապա շարունակեց ըսելով, թէ՝ սոյն աթոռը ունեցած է որոշիչ դերակատարութիւն եւ բարերար ազդեցութիւն իր տեսլապաշտ եկեղեցականներով, նուիրեալ ծառայողներով եւ հաւատացեալ ժողովուր-

Շար.ը էջ 19

# ԼՈՒՐԵՐ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

ՓԱՍԱՏԻՆԱ.- Չորեքշաբթի, Մարտ 20ին, արուեստագիտուհի եւ հեղինակ դոկտ. Ռոզմերի Յարութիւնեան-Քոհէն այցելեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ա. եւ Մ. Յովսէփեանի միջնակարգի աշակերտները եւ հաճելի աշխատանիստ մը ունեցաւ անոնց հետ: Դոկտ. Ռոզմերի հեղինակն է Ցեղասպանութեան թեմայով երկու գիրքերու՝ «The Survivor» եւ «The Mother of Jerusalem is Crying», իսկ վերջերս հրատարակած է իր առաջին մանկապատանեկան հեքիաթը՝ «Anoush. Daughter of King Shen»ը, որ արդարութեան եւ ներողամտութեան թեմաներով հայկական հեքիաթ մըն է՝ հեղինակին պատմուած իր մօր կողմէն: Ը. կարգի աշակերտները, իրենց հայերէնի դասատուին՝ Լիզա Մանոյեանի առաջնորդութեամբ, թարգմանած էին սոյն գիրքը, եւ հեղինակին այցելութեան օրը, գիրքին կարեւոր բաժինները ներկայացուցին թատերախաղի ձեւով:

Հեղինակը իրապէս ազդուած էր աշակերտներուն տարած աշխատանքէն: Ան նախ աշակերտներուն փոխանցեց պատմասացութեան կարեւորութիւնը եւ զայն գրի առնելու անհրաժեշտութիւնը՝ ապահովելով անոնց փոխանցումը յաջորդ սերունդներուն, եւ ապա բացատրութիւններ տուաւ իր գիրքին մէջ տեղ գտած գծագրութիւններուն մասին, զորս ինք գծած է մետաքսեայ կերպասներու վրայ: Աշակերտները հիացան այս աշխատանքներուն վրայ, երբ հեղինակը ցուցադրեց իսկական նմոյշները եւ մանրամասն տեղեկութիւն տուաւ նմանօրինակ աշխատանք մը իրագործելու համար:

Ապա, արուեստագիտուհին աշակերտներուն յանձնեց մետաքսեայ կերպասներ եւ աշակերտները փորձեցին ներկել անոնց վրայ՝ հետեւելով արուեստագիտուհիին ցուցմունքներուն: Հիանալի փորձառութիւն մըն էր մեր աշակերտութեան համար հանդիպիլ նման ազնիւ արուեստագիտուհիի եւ հեղինակի մը եւ ունենալ օգտաշատ աշխատանիստ մը:

Ապրիլ ամիսը Ցեղասպանութեան ոգեկոչման ամիս ըլլալու կողքին, նաեւ վերածնունդի եւ մեր գոյութիւնը փաստելու ամիս մըն է: Ապրիլեան ոգեկոչման ձեռնարկներու ծիրէն ներս, Ը. եւ Է. կարգերու աշակերտներուն համար սովորութիւն դարձած բանաստեղծութեան երեկոն տեղի ունեցաւ Ապրիլ 19ին, վարժարանիս «Գալուստեան-Տունաեանց» սրահէն ներս: Սոյն ձեռնարկին, աշակերտները արտասանեցին իրենց հեղինակած բանաստեղծութիւնները՝ տնօրէն Շահէ Մանկրեանի առաջնորդութեամբ: Է. կարգի աշակերտները խումբով արտասանեցին Հրաչեայ Յովհաննէսեանի՝ «Հայրենի Սրինգը», իսկ Ը. կարգի աշակերտները՝ Գէորգ Էմինի՝ «Մենք»ը: Սոյն ձեռնարկին նաեւ իրենց մասնակցութիւնը բերին մեր վարժարանի նախկին շրջանաւարտներէն հինգ աշակերտ-աշակերտուհիներ, որոնք իրենց տնօրէնի հրաւէրին անսալով ու այցելելով իրենց սիրելի վարժարանը՝ անգամ մը եւս առիթը ունեցան մասնակցելու սոյն միջոցառումին:

Այս տարի նաեւ հաճելի էր ունկնդրել մեր վարժարանի անձնակազմէն երկու տիկիններու ասմունքները: Համակարգիչի բաժանմունքի պատասխանատու Ճեմմա Կեցցոյեան ասմունքեց Գէորգ Էմինի՝ «Սասունցիներու Պարը» եւ Ուիլեըմ Սարոյեանի՝ «Հայն ու Հայը» բանաստեղծութիւնը, իսկ մարզիչ Վարսեր Մարկարեան ասմունքեց Սիլվա Կապուտիկեանի՝ «Քէլէ Լաօ»ն եւ Յովհաննէս Շիրազի՝ «Ես Իմ Անուշ Հայաստանի»ն: Երեկոն աւելիով ճոխացաւ «Armenian Public Radio» նուագախումբի ելոյթով, որուն անդամները արդիական մշակումով ներկայացուցին աշուղական եւ ժողովրդական երգերու ծաղկեփունջ մը՝ վառ պահելով մեր հարուստ մշակոյթը եւ փոխանցելով զայն մեր ապագայ սերունդին:

Այլ հաճելի սովորութիւն մը դարձած է մեր նախակրթարանի աշակերտներուն համար, իրենց տարեկան այցելութիւնը «Արարատ տան» տարեցներուն եւ անոնց համար պատրաստուած գեղարուեստական յայտագիրի մը ներկայացումը: Երկու յաջորդական շաբաթներով, Բ.-Ե. կարգի աշակերտները հանդիպում ունեցան Իկըլ Ռաքի «Արարատ տան» մէջ բնակութիւն հաստատած տարեցներուն հետ: Տարեց մամիկներն ու պապիկները յայտնեցին, որ անհամբեր կը սպասեն սոյն հանդիպումներուն, որպէսզի վայելեն հայերէն լեզուով ներկայացուած յայտագիրը եւ առիթը ունենան աշակերտներուն հետ զրուցելու: Սոյն այցելութիւններուն ընթացքին աշակերտները, հայերէնի դասատուներուն՝ Լիզա Մանոյեանի, Ցոլինէ Գէորգեանի եւ երաժշտութեան ուսուցչուհի Էլմիրա Սիմոնեանի ղեկավարութեամբ, ներկայա-

Շար.ը էջ 18



# ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ԲԵՌԱՆ ՏԱԿ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱՑԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

## (ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ)

*ԴՈԿՏ. ԱՒԵՏԻՍ ԵԱՓՈՒՃԵԱՆ*



Այո՛, Պրն. Երուանդ Պապայեանը կը բոլորէ իր ծննդեան առաջին դարադարձը: Տարիները անցած են, սակայն Պրն. Երունադ Պապայեանը մնացած է երիտասարդ: Մնացած է երիտասարդ ոչ միայն իր բազմահազար աշակերտներուն մատչաղ շունչովը, այլեւ՝ իր կրթական-մտաւորական-հասարակական բեղուն գործունէութեան հարուստ արգասիքովը, որ կը մնայ իբրեւ Յուշարձանը իր երկար տասնամեակներու վաստակին:

Երուանդ Պապայեանը քահանայի որդի է: Իր երջանկայիշատակ հայրը՝ Տէր Ներսէսը, եթէ Աստուծոյ պատգամը կը փոխանցէր իր հօտին, նոյնիսկ Մեծ Եղեռնի մահաշունչ օրերուն, իր որդին՝ Երուանդ Պապայեանը, Մեսրոպ Մաշտոցի պատգամն է, որ կը փոխանցէր իր հայկական հոգածութեան յանձնուած մատաղատի սերունդներուն իրարայաջորդ:

Հայկական առածը կ՚ըսէ. «Անուշ լեզուն օձը ծակէն դուրս կը հանէ»: Արդարեւ, Լիբանանի քաղաքացիական դաժան պատերազմի օրերուն, երբ հայ մարտիկները լիբանանահայութեան ապահովութիւնը կը պաշտպանէին, Պրն. Երուանդ Պապայեանը, իր անուշ լեզուով, իր համոզկեր խօսքով, իր անբասիր վարկով, ռումբերու ականջ խլացնող պայթիւններն ու կարկուտի նման տեղացող փամփուշտները արհամարհելով, կը շրջէր զանազան Հայագաղութներ, եւ Լիբանանահայութեան կարիքներուն հասնելու համար, հանգանակութիւններ կը կատարէր:

Եւ ոչ միայն այսքան: Իր նոյն այդ անուշ եւ համոզկեր վերաբերումով, իր այնքան սիրելի Վահան Թէքէեան Վարժարանին համար, որուն անունը անջնջելիօրէն իր անուան հետ առնչուած պիտի մնայ ընդմիշտ, կամ ալ Բարեգործական Վարժարաններու համար, շունչ հատցնելով, դրամահաւաք կը կատարէր կամ բարերարներ կը գտնէր, անոնց կառուցումը, գոյատեւումը եւ յանձնումը ապահովելով: Եւ անոր անսպառ շունչը անխուսափելիօրէն, իր բարենպաստ արդիւնքը կու տար տեւապէս:

Պրն. Երուանդ Պապայեանը, իր մաքրամաքուր նկարագրին բերումովն ալ, կը վայելէր Մեծն Ալեք Մանուկեանի անվերապահ համակրանքն ու վստահութիւնը:

Պրն. Երուանդ Պապայեան, իր կրթական տնտեսական առաքելութեան աւընթեր, կը մշակէր նաեւ գրականութիւն մը մնայուն արժէքով եւ բարերար ազդեցութեամբը մեր հասարակութեանը վրայ: Պրն. Երուանդ Պապայեան, ինչպէս որ ինք երախտագէտ որդին եղած է իր հօր, անոր յիշատակը անմահացնելով, իրենց կարգին, իր զաւակներն ալ երախտագէտ՝ իր գործերը մէկը միւսին ետեւէն կը հրատարակեն, անոնց տալով այս աշխարհ գալու պատեհութիւնը:

Վերջին տասնամեակներուն, հակառակ իր ծերունազարդ տարիքին, երիտասարդական աւիւնով ու խանդով, ան կը ստեղծագործէր՝ առանց յումպէտս վատնելու իր հանգստեան կոչելու, իր արգասաբեր ու մտաւորականի յուռթի միտքը, որ բազում տասնամեակներէ ի վեր կը գործէ անխափան ու անդադրում: Դարադարձի Յոբելեանական այս երջանկաբեր, պատեհութեամբ, կարելի չէ մոռնալ իր կեանքի ընկերուհին՝ Տիկ. Ռոզինը, որ այն օրէն երբ իր ճակատագիրը կապեց ազգային-հասարակական գործունէութեան իր կեանքը նուիրաբերած այս Մարդուն, մեծատառ Մարդուն, կը բաժնէ անոր ուրախութիւններն ու յուսախաբութիւնները, անոր կեանքի բոլոր ելեւէջներուն ալ որպէս նեցուկ ապրելով, անոր հետ վայելելով անոր յաղթանակներուն պտուղները:

Վարձքդ կատար, կեանքդ երկար, սիրելի Պրն. Երուանդ Պապայեան:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

# ՄԻՀՐԱՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԱՐԺԱՆԻԻՆ՝ ԱՐԺԱՆԱԳՈՅՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ

*ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ*

Ատամնաբոյժ Միհրան Սիմոնեանը ճանչցած եմ, նախ հօրս՝ Յովհաննէս Աղպաշեանի միջոցով, որ իր նկատմամբ յատուկ համարում ու սէր ունէր, իր հայրենասիրական անշեղ ու նուիրեալ, նաեւ անշահախնդիր ու ծառայասէր նկարագիրին համար, ապա 1970 ականներէն սկսեալ, երբ արժանաւորապէս դարձաւ ՀԲԸՄ-ՀԵ Ընկերակցութեան կորովի ատենապետը, իսկ ես՝ իր կրտսեր գործակիցներէն մէկը:

Սիմոնեանի օրով, Ընկերակցութիւնը եւ ընդհանրապէս շրջանակը հասան նախանձելի դիրքերու ու բարձունքներու, արձանագրելով բազում նուաճումներ եւ իրագործումներ՝ մշակութային, մարզական, թատերական, սկաուտական, համալսարանական եւ ընկերային մարզերէն ներս:

Կազմակերպող, համակարգող, ներդաշնակող, քաջալերող, առաջնորդող, միշտ անսակարկ նախանձախնդրութեամբ եւ ամբողջական նուիրումով, տէր կանգնելով ազգային ակունքներուն, երիտասարդական առաջադրանքներուն ու տեսլապաշտ ծրագիրներուն ՀԲԸՄը եւ ՀԵԸը նկատելով ատոնց իրականացման աղբիւրը:

Վստահաբար, իր բեղուն գործունէութեանց արգասիքին մէջ, նշանակելի դեր ունեցան իր վարչական գործակիցները, որոնց հետ համախումբ ու համախորհուրդ, ինչպիսի՜ ներդրումներ ունեցաւ, Զարեհ-Նուպար Ակումբի վարակիչ մթնոլորտը վերակենդանացնելով Ալեք Մանուկեան հոյակերտ կեդրոնի մէջ:

Որքան ալ զարմանալի, բայց անպայման ողջունելի, Սիմոնեանը փայլուն ճարտասան էր, բեմբասաց, իր բամբ ու տպաւորիչ ձայնով հայրենասիրական ու միութենական «պոռթկումներ ունենալով», իրենց ամենէն ջինջ, վարար եւ ազդու տպաւորական դրոշմներով:

Խստապահանջ ու կարծրամէտ Գերսամ Ահարոնեանը, այնքան ուրախ ու հպարտ էր, որ Միհրան Սիմոնեանի անհատականութեամբ ու հայրենասիրութեամբ, ձեռնհասութեամբ ու կենսունակութեամբ, եռանդուն երիտասարդ մը կը գլխաւորէ Երիտասարդացը, իսկ այդ անկեղծ զգացումները փոխադարձ էին, որոնց կարգ մը «պահ»երուն ներկայ գտնուելու հաճոյքը ու պատիւը ունեցած եմ:

Որքան գիտեմ, Լիբանանէն ակամայ մեկնեցաւ (իր դարմանատունը գտնուելով Պուրճի ոսկերիչներու շուկային մէջ), քանի մը անգամ վերադառնալով իր սիրելի հայատրոփ Պէյրութն ու շրջանակը, բայց ակամայ ալ հաստատուեցաւ Լոս Անճելոս:

Լսած էի, որ առողջական հարցեր ունի, սակայն զարմանքս ու հիացմունքս աւելիով դրսեւորուեցան, երբ Լոս Անճելոսի մէջ, վաստակիս նուիրուած հանդիսութեան եկած էր... ձեռնափայտով, սակայն նոյն երիտասարդական շունչով գոռալով.

– Սիրելի Պարոյր, քու «խաթըր»իդ եկած եմ: Դուն արժանաւոր զաւակն ես մեծն Աղպաշին ու կը շարունակես իր մտաւորական ուղին:

Խիստ փշաքաղիչ ու գօտեպնդիչ էին սիրելի Միհրանին խօսքերը, որովհետեւ նոյն անկեղծութեան ու պարկեշտութեան ոգին կը սաւառնէր իր մէջ:

***

Վերջերս, «Նոր Օր»էն իմացայ, որ Միհրան Սիմոնեանին շնորհուած է Հայրապետական կոնդակ ու Ս. Ներսէս Շնորհալի շքանշան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Գարեգին Բ.ի բարեհաճ կարգադրութեամբ:

Ինչպէս կ՚ըսեն, ուշացած բայց ոչ ուշ արժանի գնահատում, վաստակաւորի ու երախտաւորի մը, որ տասնամեակներ ծառայեց իր ժողովուրդին, հայրենիքին, եկեղեցիին ու միութեան:

Բիւր յարգանք, սիրելի Միհրան, առողջ եւ արեւշատ ապրիս, ընտանեկան հարազատներուդ ու բարեկամներուդ հետ:



Հովանաւորութեամբ
ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդի
(ARCA)

ԳԻՆԵՁՕՆ




Մինաս Գոճայեանի

ՄՈՐՄՈՔՈՂ ԱՆՑԵԱԼԻ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ

Ուխտագնացութիւն Դէպի Պատմական Հայաստան
Ցեղասպանութեան 100 Ամեակի Սեմին
Հատորին

- Գիրքի ներկայացում
- Գեղարուեստական կոկիկ յայտագիր
- Հիւրասիրութիւն
- Մուտքը ազատ

Ուրբաթ, 31 Մայիս 2013, երեկոյեան ժամը 7:30-ին

Կլենտէյլի Հանրային Գրադարան
222 E. Harvard Str., Glendale, CA 91205
Public Parking validation available at the Library.

# ՄԱՅԻՍԵԱՆ ԴԻՒՑԱԶՆԱՄԱՐՏԵՐ

*ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆՑ*

Այսօր տօն է ցնծութեան, տօն է հայու դիմադրական ոգու փառաբանման, տօն է յաղթական ճակատամարտի, տօն է հայոց աշխարհի վրայ ծիածանացած անկախութեան: Տարին էր 1918, ամիսը Մայիս, գարուն էր հագել հայոց աշխարհը, նրա մեղմանուշ հովիկներն էին եկել համբուրելու չէներն հայրենի, հայոց լեռների ձիւնոտ ջուրն էր երգելով վազում, Արմէն-հայերի հոգիների տաճարների ատրուշաններում վառւում էր նախնիների պատերազմի ու յաղթանակի աստուած՝ Վահագնի ոգու կրակը: Արեւն իր վարսերով գրկել էր երկիրն հայոց, ծաղկունքի ծիածան կապել հայոց լեռների լանջերին: Տասնութ դարեր առաջ, չորս հարիւր յիսուն մէկ Թուականին, դարձեալ Մայիսին, ''Մամիկոնեանենց'' Վարդանը, նախարարներն հայոց վասն հայրենեաց ու վասն հաւատքի ճակատամարտ էին մղել հզօր տիրակալի դէմ, պարտուել էին, սակայն ոգեղէն հաւատքի յաղթանակի փառաւորուում էր եղել: Անցորդները պատմում, որ իւրաքանչիւր Մայիսին այդ դաշտում նահատակների սրտերից ճառագած սպիտակ շուշաններ են ժպտում, գիշերները լուսնեակը այցի գալիս, սպիտակ անուշ դէմքը ցօղում նրանց լոյսով:

Դարձեալ Մայիս, հայոց բանակը ու կամաւորական գնդերը վռնտում էին Թաթարներին հայոց արեւելեան կողմն աշխարհից, արեւին գրկած կրակ գոյներով հայոց դրօշը ազատութեան ծիածան փռել ազատագրուած չէների վրայ:: Մայիսի 9-ի լոյս առաւօտին՝ հայոց զօրքը, կամաւորական ջոկատները գրոհում էին բարձունքները գերավարուած Շուշիի, կրակ տեղում, սրտերի վրէժի հուրը ժայթքում թշնամու վրայ: Առաւօտ, արեգակն արդար իր լոյսի առաջին շողերով գրկել էր զէնքերը հայոց, յաղթանակի ցնծութեան ջահեր վառում մարտիկների սրտերին: Փախաւ Թաթարը, դեռ պիտի փախնէր, պիտի վռնտէին նրան շատ հեռուներ՝ մինչեւ Մայր Արաքս, իրենց զէնքերը հովացնելու նրա պաղ ջրերում: Զթողեցին հայոց գինուորին հասնելու Կուր գետ, որի միւս ափից ազնուազարմ Արտաշէս հայկազուն արքան, Ալլան Սաթենիկի մէջքն օղակելով, հայոց աշխարհին Թագուհի էր բերել:

Աշխարհի պատերազմն էր Եւրոպայում մոլեգնել: Ռուսաց Թագաւորի զօրքը, զինուոր դարձած հայ շինականների հետ արշաւում էին դէպի Հայք-եր, Վասպուրական, Տուշպա-Վան, նրա Այգեստանում կռուի ելած Արմէն-հայերին օգնութեան փութալու, Վանայ-Բզնունեաց ծովի ջրերից պայթած կղզեակի տաճարում հայոց զէնքի փառքին աղօթք մրմնջալու, նրա որմերի քարերին դրոշմած խաչերը գգուելու, քարացած Գագիկ արքայի արցունքները սրբելու: Սասունի Մհերը, Տուշպայի միջնաբերդի ժայռէ դուռը չէ՞ր պատռելու, որ դուրս պոռթկար լոյսին, արեւը նետէր թշնամու վրայ: Հայոց կռուի Վահագն՝ քաջերի քաջ դիւցազուն Անդրանիկ փաշան, Դիլմանում ջախջախեց Թուրքի բազմահազարանոց զօրաբանակը, ռուսի հետ յաղթական մուտք գործեց Տուշպա-Վան: Այնտեղի այգեստանում, հայերը ծաղկազարդ ծառերը որպէս զէնքեր գրկած, կենաց կռիւ էին տալիս թշնամուն: Զինուոր դարձած Ռուս չէկլիկ տղաներ, հայ կամաւոր մարտիկներ գրկեցին նրանց, փառաբանեցին նրանց դիմադրութեան ոգին: Արեւմտեան կողմը հայոց աշխարհի լեռներին ու դաշտերին ազատութեան լոյս էր շողում:

Տապալել էին ռուսի Թագաւորի իշխանութիւնը, սպաննել նրան: Իրենց տիրապետութեան յաղթանակի համար զիջել էին տարածքներ, զիջել էին ռուսի զինուորական յաղթանակների փառքը: Արեամբ նուաճած երկրներից տուն էր վերադառնում ռուս յաղթական զինուորը: Փլուել էր Արեւմտեան Հայաստանի ռազմաճակատը: Հայերը կազմաւորել էին երկրապահ զօրամաս, առանձին դիմագրաւելու թշնամուն: Խախտելով Անդրկովկասի Կոմիսարիատ-ի հետ կնքուած զինադադարի պայմանագիրը, Թրքական բանակները արշաւում էին արեւելք, միանալու ցեղակից Թաթարներին, ապա դէպի Թուրան, հիմնելու արեւելքի իրենց ցնորածին պետութիւնը: Ներխուժել էին Արարատեան դաշտ, Սարտարապատի ու Բաշ Ապարանի վրայով սպառնում գրաւել Երեւանը: Նուաճողները սպաննել էին հայոց չէների անունները, դարձրել Սարտարապատ, Հոկտեմբերեան: Հայոց չէներում նորէն վառուել էին նախնիների իշխանների, դիւցազունների, իմաստունների, աստուածների լոյսը: Եւ հիմա, Սարտարապատ աւանը ու դաշտը հայոց Արամայիս արքայի քաղաքամայր Արմաւիրն է:

Դուշմանի նախաձեռնած յարձակումը՝ հայոց աշխարհի մայր ոստանին էր սպառնում, ողջակիզելու նաեւ արեւելեան կողմն հայոց աշխարհի չէների արորդիներին: Գարեգինը Յովսէփեան, մայր տաճարի զանգերը հնչեց, հրամայեց նաեւ հայոց աշխարհի բոլոր տաճարների զանգերը ղօղանջել՝ կռուի կանչել հայերին: Նոր Աւարայր Մայր Արաքսի ափերին՝ յանուն ցեղին սրտի զարկերի, յանուն ցեղի սերմին, յանուն յաղթանակի: Զօրքին հայոց կռուի տարան Նազարպէկեան, Սիլիկեան, Փիրումեան զօրապետները: Հայոց աւերուած ոստանների՝ Զէյթունի քաջորդիները, Սասնայ ու մշոյ լեռնականները, Վասպուրականցիները, Յոյն Շնէուրը զօրքով ու Թնդանօթներով, Եզիտի պեանկիր Աղան հինգ հարիւր այրուձիով, Ղարաբաղցի Փիրումեան զօրավարները իրենց լեռների դիւցազուններով ու մահապարտ գունդով, Արարատեան դաշտի ու Ապարանի զինուոր դարձած շինականները, իրենց զէնքի փառքին հաւատարիմ ռուս սպաներն ու զինուորները, երկրապահ զօրքն հայոց, Մայիսի քսան երկուսին գրոհեցին դուշմանի դիրքերի վրայ: Նրանք մրրկածին գրոհայիններ էին, որոնք վրէժի կրակով պատռում էին թշնամու սրտերը, սրով եկածներին սրով զգետնում: Արմէն-հայերի հին աստուածներ՝ Միհրն ու Վահագն էին ելել հայոց քարէ սիրտ՝ Արեգաճեմ Արարատ լերան դաշտ, արեգակից ու եղէգից յառնած բոցերը նետում թշնամու վրայ: Վահագնը, երկնակամարի ծիածանը պրկած որպէս աղեղ, ամպերում յառնած շանթերը որպէս նետեր տեղում դուշմանի զօրքի վրայ: Փլուել էին նրանց դիրքերը, դուշմանը խուճապահար փախնում էր: Ափսոս որ ընդհատեցին յարձակման հեղեղը, թշնամու հետապնդումը կարող էր հասնել մինչեւ Կարսի բերդաքաղաք, նրա ամրոցում տօնելու յաղթանակի բերկրանքը, նրա հնամենի տաճարում փառաբանելու իրենց հին ու նոր աստուածներին:

Հայ արի մարդ, մի պահ փակիր ակներդ, անէացիր աշխարհից, զինուոր դարձած քեզ տար այդ ճակատամարտի բոցերում դուշմանին կռիւ տալու: Արարատին որպէս վահան գրկած, Արագածի վրայ վառուող կանթեղը որպէս շանթ վեր պահած, պիտի տեսնես հայերը ինչպէ՜ս էին գրոհում դուշմանին: Պիտի տեսնես ինչպէ՜ս էին արեւը ցած բերել կռուի դաշտ, նրա կրակ ճառագայթներով այրում դուշմանի զէնքը, ոգին, ակները: Կռուի դաշտում պիտի տեսնես կարմիր վերարկուով հրամանատար Դանիէլ-պէկ Փիրումեանին, արեւի ճառագայթները որպէս նիզակ պարզած հայոց զօրքը գրոհի տանում: Մտի՛ր Պօղոս Փիրումեանի մահապարտների գունդ, մա՛հ սփռիր քու առաջ, մենք շատ ենք մահ տեսել: Պիտի տեսնես, ինչպէս էին այրւում Մայր Արաքսի կամուրջները, ինչպէս էր այն փոթորկել եւ ջրերը ճողփող դուշմանին տանում իր յորձանուտը եւ ինչքա՜ն պիտի խայտայ սիրտդ: Պիտի տեսնես, ինչպէս էին Զէյթունցիների նժոյգները Քուրկիկ պէլալի նման մռնչում, ինչպէս էին Սասնայ ու Մշոյ դիւցազները իրենց Դաւիթի Թուր կեծակին շողում դուշմանի վրայ: Պիտի տեսնես, ինչպէս էին Յոյն Շնէուրի Թնդանօթները փլում դուշմանի դիրքերը: Մարտի դաշտում պիտի տեսնես դուշմանի վրայ սլացող հեծեալ զինուոր Յովհաննէսին, զինուոր դարձած Հայ իմաստուններ՝ Ակսելին, Ղափանցեանին, Մանանդեանին, Ղարիբեանին, Թօփչեանին: Եւ դու Հայ մարդ, ինչպիսի՜ հրճուանքով պիտի ականատեսը լինես դուշմանի խուճապահար փախուստին: Եւ այդ օրը, Մայիսի քսան ութին, գնա՛ աղօթիր Մայր Տաճարում, որտեղ աղօթել էին քու նախնիները արեւին, կրակին ու Յիսուսի լոյսին: Գնա՛ մայր ոստան, այրուիր հայերի հրճուանքի բոցերում, բարե՛ւի կանգնիր ռազմաճակատի յաղթական զօրավարներ՝ Նազարպեկեանին, Սիլիկեանին, Դանիէլ ու Պօղոս Փիրումեաններին:

Պատերազմի դաշտում յաղթանակած հայերը, հայոց աշխարհը հռչակեցին անկախ պետութիւն՝ Հայաստանի Հանրապետութիւն: Արեւի քուրայի կարմիր կրակը շառագունեց նրա դրօշին՝ խորհրդանիշը Հայկական Բարձրավանդակի, հայ ժողովուրդի գոյատեւման մշտական պայքարի, Քրիստոնէական հաւատքի եւ Հայաստանի անկախութեան ու ազատութեան: Կապոյտը՝ խորհրդանիշը հայ ժողովուրդի խաղաղ երկնքի ներքոյ ապրելու կամքը: Նարնջագոյնը՝ խորհրդանիշը հայ ժողովուրդի արարչական տաղանդի ու աշխատասիրութեան: Ո՜վ հայ մարդ, եթէ ունես հոգու երեւակայութեան ճախրանք, արդեօք չէ՞իր տեսնի ինչպէ՜ս էին նժոյգներին բազմած հայոց արքաները, յաղթանակի տօնախմբութեանը մայր ոստանի հրապարակում տողանցում՝ զօրահրամանատարների ջոկատների շարասիւնների հետ:

Մայիսեան դիւցազնամարտի յաղթական պատերազմի, Վահագնի կռուի ու յաղթանակի ոգու բոցերից յառնած հայոց անկախութեան հրավառութեան տօնն է: Անկախութեան հողմերը նորէն գրկել են հայոց լեռները, նորէն հայոց արտերը ծփացել են ցորեանի ծովերով, այգիները նորէն ծաղկունքով են բոցավառուել, հայոց ոստանների ու չէների մանչերը նորէն ծիծաղում են, հայոց հանճարների լոյսն է նորէն վառում աշխարհը: Մայիսեան արեւին բացուած անկախութեան դրօշը ծածանել է հայոց աշխարհի վրայ, ազատութեան լոյսի անձրեւ մաղում: Արեւի բոցերից Արագածի գագաթին նորէն վառւում է Լուսաւորիչի կանթեղը:

Վեց հարիւր տարիներից յետոյ հայոց երկրի անկախութեան տարեդարձի տօնն է, խնդութեան հրավառութիւն թող լինի, թող ցնծան հայերը, ''Հայաստան'' քաջերի երգի հնչիւնները հրաշէկ կայծեր դարձած բոցավառեն հայոց հոգիները: ''Բամբ Որոտան'' քայլերգի հնդիւնը հնչէն, բամբեր որոտան, աշխարհին աւետեն հայոց յաւերժի հրաշափառ լոյսը: Հայոց հոգիների տաճարներում այսօր հազար թմբուկ չէ՞ն զարկում, յաղթանակի հազար շեփորներ չէ՞ն հնչում, հապա որտեղից այդքան բոցավառ հրավառութեան համազարկեր: Արմաւիր-Սարտարապատի յաղթանակի արեւով շողացող դա՛շտ գնացէք, գրկէ՛ք արծիւներին, պարերի կչռոյթներով զարկէ՛ք գետինը, Մայր Արաքսի ջրերը աղմկալից շնդան, այդ զարկերի դղրդիւնից թող դողան այն ափի խառնածինների սրտերը: Սիլիկեան, Նազարպեկեան, Դանիէլ-պեկ ու Պօղոս Փիրումեան զօրականների ստուերները արդեօք այդտեղ չէ՞ին իջել, ամպերին յենած Վարուժանը իր ցեղին սրտի ու հեթանոս աստուածների տաղերով, Զարենցը իր Հայաստան եարով չէ՞ին ցնծում:

Սասունցիների երգերը թող թնդան, ձեռքերը վեր պարզած գրկէ՛ք նրանց լեռները, շոյեցէ՛ք նրանց ձիւնոտ գագաթները, այն թող հովացնի ձեր սրտերում ահագնացած կարօտը: Թող դողայ գետինը այս քաղաքի, նրա մարդիկ թող իմանան, որ այստեղ ապաստանած հայերը իրենց հետ բերել են աշխարհն Արմէն-հայերի, եւ այստեղ էլ հիմնել մի ''Փոքրիկ Հայաստան'': ''Գարուն Երեւան''-ն է եկել այստեղ, Երեւանի վարդակերտ չէնքերը ձեր ձեռքերի վրայ որպէս ջահեր պահած պար եկէք:

Արմէն-հայեր, գիտէ՞ք որ այդ նոյն տասնութ Թուականին, հայոց Արամայիս արքայի Արմաւիր ոստանի առաջ փռուած դաշտի յաղթական ճակատամարտից մի քանի ամիսներ յետոյ՝ Սեպտեմբերի տասնիննին, շատ հեռու Արարայի լեռների բարձունքներին, հայերը նորէն կռիւ տուին դուշմանին: Մուսաների պաշտամունքի լեռների լանջերին դուշմանի դէմ յաղթական ճակատամարտեր մղած վեց հարիւր դիւցազուններ ''Հայկական Լեգէոն' կազմեցին, որոնց միացան նաեւ հազարաւոր Արմէն քաջազուններ: Նրանց հոգիներում այրւում էր ցեղակիցների տառապանքի, ցաւի, անմեղ նահատակման մորմոքը: Իրենց հոգիներում պայթած խռովքը վրէժի էր կանչում, կռուի պիտի ելնէին իրենց ցեղի ոսոխի դէմ: Սեպտեմբերի այդ առաւօտը, արեգակի արդար լոյսին խաչակնքելով, հրամատարի կրակոցի ու ''առաջ'' կանչով կամաւորականները հեղեղի նման դուրս յորդեցին խրամատներից, գրոհեցին դիմացի բարձունքի դուշմանի

*Շար.ը էջ 18*

## HYEAID2
## ԳԷՈՐԳԵԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՁԵՌՆԱՐԿԸ Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ

**ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ**

*Կիրակի, Յունիս 9, 2013-ին, երեկոյեան ժամը 6-ին, Լոս Անճելըսի հանրածանօթ երեք հազար չորս հարիւր աթոռ ունեցող Dolby Theatre-ի մէջ (նախկին Kodak սրահը), հասցէ՝ 6801 Hollywood Blvd., Los Angeles, CA 90028 (Hollywood եւ Highland պողոտաներու անկիւնը), տեղի պիտի ունենայ փառաշուք ձեռնարկ մը, որ իր ազգային նպատակով ու մանաւանդ դրսեւորած ոգիով, պարզապէս աննախընթաց երեկոյ մը պիտի ըլլայ:*

*Այդ օր մեր գաղութի բոլոր խաւերը՝ քաղաքական, եկեղեցական, բարեսիրական, ուսանողական, երիտասարդական միաւորները սիրով հրաւիրուած են ներկայ ըլլալու այս բարձրորակ ձեռնարկին եւ վայելելու հոգեխառն երգերու եւ պարերու աննման հրավառութիւն մը: Կոչ կ՚ընենք բոլորին, որ անպայման ներկայ ըլլան այս ձեռնարկին եւ բոլորիս ներկայութեամբ, միամաբար, մեր զօրակցութիւնը յայտնենք Սուրիոյ մէջ ապրող մեր տառապահար, բազմատեսակ դժուարութեանց մէջ գտնուող մեր հայրենակիցներուն:*

*Այդ օր ազգային խորագոյն գիտակցութեամբ, կամաւորաբար եւ սիրայօժար ելոյթ պիտի ունենան գաղութիս պարծանքներ հանդիսացող՝ Վարդան եւ Սիրանուշ Գէորգեաններու պարախումբը, պարուսոյց ունենալով իրենց շնորհաշատ դուստրը՝ Սոնա Գէորգեան: Այդ օր մօտ 400 պարման-պարմանուհիներու մասնակցութեամբ, հայկական այլազան պարերով պիտի հմայեն ներկաները: Նմանապէս այս ձեռնարկին առիթով հայրենիքէն պիտի ժամանեն երկու լուսաշող աստղեր, ազգային եւ ժողովրդային երգերով, սքանչելի մեներգիչներ՝ Լէյլա Սարիբէկեան եւ Սիլվա Յակոբեան: Երեւոյթը խիստ յուզիչ է: Հայաստանի մեր արուեստագէտները եւ Գէորգեան պարախումբի բանակը, բոլորն ալ երիտասարդներ, նման ազնիւ եւ մարդկային գործի մը լծուած են, Սուրիոյ, այդ հեռաւոր ափերուն վրայ ապրող իրենց քոյրերուն, եղբայրներուն եւ հարազատներուն, իրենց աստուածատուր տաղանդով օգտակար հանդիսանալու համար:*

*Ձեռնարկը կազմակերպուած է SARF Լոս Անճելըսի մէջ գործող Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմնի կողմէ, որուն մաս կը կազմեն մեր աւանդական կուսակցութիւնները, եկեղեցական պետերը եւ բարեսիրական մեծագոյն միութիւնները՝ Հ.Բ.Ը.Մ.-ը եւ ՀՕՄ-ը:*

*Ոչ ոքի համար նորութիւն մըն է, թէ վերջին երկու տարիներուն, Սուրիոյ ազնիւ ժողովուրդը ծանր օրեր կ՚ապրի: Անոր հետ դժուարին օրեր կ՚ապրին նաեւ հոն ապրող մօտ 80,000 հաշուող լաւ կազմակերպուած հայադրոշմ եւ հայատրոփ հայ գաղութ մը:*

*Սուրիահայութիւնը 1915-ի Ցեղասպանութենէն մինչեւ այսօր, կը հանդիսանայ սփիւռքահայութեան բաբախուն սիրտը: Մինչեւ Հայաստանի անկախանալը, սուրիահայութիւնը մեր բոլոր գաղութներուն մտաւորական, կղերական, ուսուցիչ, դերասան մարդուժ մատակարարող գաղութ մը եղած է: Աւելին՝ 1946-ին, դէպի Հայաստան կազմակերպուած ներգաղթի օրերուն, Սուրիոյ հայութիւնը մեծաթիւ խումբերով Հայաստան տեղաւորուեցաւ եւ Սովետական Միութեան օրերուն Հայաստանը առանձին հանրապետութիւն մը եղաւ, այլապէս կրնար կիսանկախ շրջան մը ըլլալ, ուրիշ հանրապետութեան մը մէջ:*

*Արդարեւ, սուրիահայութեան այս ահռելի օրերուն, ողջ հայութիւնը, ըլլայ հայրենի պետական այրերը, սփիւռքահայութեան նախարարութիւնը, հայրենաբնակ մեր թանկագին ժողովուրդը, հոգեւոր պետերը եւ Սփիւռքի աշխարհացրուած հայութիւնը, մէկ մարդու նման, այլազան ձեռնարկներով եւ աշխատանքներով նեցուկ կանգնած են սուրիահայ տառապահար մեր հայրենակիցներուն:*

*Այսօր գեղեցկագոյն երեւոյթ մը կը տեսնենք Ամերիկայի Արեւմտեան Ափի մէջ ապրող հայութեան մօտ: Մեծատունը՝ իր գանձով, համեստ աշխատաւորները՝ իրենց լումաներով, արուեստագէտները (նկարիչ, պարող, երգող, ասմունքող եւ այլն), իրենց արուեստով սատար կը հանդիսանան սուրիահայութեան ի նպաստ բազմազան ծրագիրներու, իրենց աստուածատուր տաղանդներով, մեր դժբախտացած սուրիահայութեան օգնութեան հասնելու համար:*

*Այս պատմական ձեռնարկի տոմսերը ապահովելու համար, կարելի է հեռաձայնել (818) 618-2348 թիւին, կամ, երթալ Itsmyseat.com/HyeAid կայքէջին, կամ ալ՝ կարելի է տոմսեր ձեռք ձգել Կլէնտէյլի Պրանտ պողոտային վրայ գտնուող Beyond the Star սրահէն եւ կամ ալ՝ Գէորգեան Արուեստի Կեդրոնէն:*

*Սիրելի հայրենակիցներ, բոլորս խուռներամ ներկայ ըլլանք այս վեհ եւ պատուական գործին: Իւրաքանչիւր չափահաս քանի մը պատանիներու ձեռքէն բռնած, այդ օր իրենց զաւակները բերեն Dolby սրահ, եւ մեր զաւակներուն փոքր տարիքէն իրենց կեանքը իմաստաւորենք, որպէսզի երբ մեծնան, իրենք ալ հպարտօրէն ըսեն. "Ես սուրիահայութեան օգնած եմ", "Ես Հայաստան Հիմնադրամ"ի, կամ "Երկրաշարժի օգնած եմ", "Ես Ապրիլ 24-ի քայլարշաւներուն մասնակցած եմ":*

*Յունիս 9-ին, բոլորս՝ դէպի Dolby սրահ:*

***

*Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմնի անդամները հետեւեալներն են.- Հայ Առաքելական Եկեղեցւոյ ԱՄՆու Արեւմտեան Թեմ, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմ, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ Օգնութեան Միութեան ԱՄՆու Արեւմտեան Շրջան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն: Համացանցային հասցէն է՝ www.SyrianArmenianReliefFund.org:*

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀՆՉԻՒՆԱՇԱՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՈՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

**Խաչատուր Ի. Փիլիկեան**

*Ա՛խ այս Արեւելահայ-Արեւմտահայ անճիշդ ու քանդիչ հակադրութեան՛...*

*Արեւի պէս յստակ է, որ Արեւմտահայերէնի բառամթերքն ու քերականութիւնը հակադրել Արեւելահայերէնին ծիծաղելի է, փոխանակ Հայոց լեզուի հարստութիւնը տեսնելու նաեւ ատոր մէջ: Հնչիւնային համակարգն է միակ՝ խոչընդոտը՛ ձեւականօրէն՝ տարբերելու:*

*Արարատեան/ Արեւելահայ ձայնաշարը պահած է Մեսրոպեան Այբբենարանի հնչիւնաշարը՝ եռամաս բաղաձայներու կառոյցը: Արեւմտահայերէնը, առաւելաբար Ֆրանսական մշակոյթի դարաւոր ազդեցութեամբ, սկսուած Կիլիկիոյ շրջանէն եւ յետագային Պոլիսը ունենալով իր գլխաւոր ենթական/ կեդրոնը, չքացուցած է բաղաձայնային եռամաս կառոյցը, պահելով միայն երկամաս ձայնարկում՝ նոյնինքն եռեակ բաղաձայներու գոյութեամբ ու գրութեամբ: Օրինակ, Բ, Պ, եւ Փ կը հնչուի միայն երկու բաղաձայնով, փոխանակ Մեսրոպեան երեքի: Ամէն մեղքիս վրայ այդ՝ կ՚արդարացուի՛ յաճախ եւ թիւրիմացօրէն՝ խեղճ՛Մեսրոպ Մաշտոցի անուամբ...Հէյ գիտի ըլլուլը, հէյ:*

*Արժէ հոս յիշել, որ նոյնինքն Թրքերէնն ալ, ազդուելով Ֆրանքոֆիլ տենչէն եւ սկսելով Պոլիսէն, կորսնցուց որոշ ձայներ, մասնաւորաբար Արաբերէնէ ներմուծուած հնչիւնները՝ մեղմացնելով զանոնք: Առաւել եւս, այդ կորուստը պետականացաւ՝ գործածութեան դրուելով Լատինական տառերը փոխան Արաբերէնի: Եւ Լատիներէնը եղաւ Թրքերէն լեզուի պատկերքը՝ Աթաթիւրքով...*

*Զրպարտութիւն է այն, որ իբրեւ թէ Արեւմտահայը չի հասկնար Արեւելահային այդ հնչիւններու տարբերումին պատճառաւ: Ճշմարտութիւնը այն է, որ տգեղ քաղաքականութեան ցաւալի խաղն՛ է, որ կը շարունակուի: Ինչ խօսք որ Արեւելահայերէնի ուղղագրական անտեղի փոփոխութիւնները չեշտեցին այդ խեղկատակութիւնը, կարծես սոփեստօրէն/իմաստակօրէն ուղղելու համար առողջ եւ ոչ սիւնանման ողնաշարը մեր Մեծասքանչի՝ Ձայն/Գիրի դարաւոր ներդաշնակութիւնը: Եւ իզուր կը շարունակուի այդ՝ իսկապէս պարապ վախտի խաղալիքը՝ ահաւասիկ մօտ մէկ դար, կարծես բաւարար չէր գոյութիւն ունեցող հնչիւնային երկփեղկումը...*

*Գործնական փորձառութեամբ միշտ ուրախութիւն պատճառած է ինծի այն՝ որ երբ ասմունքով, եւ ոչ միայն երգով, հաղորդակից կ՚ընեմ ունկնդիրներուս Արեւմտահայ բանաստեղծութեան՝ Մեսրոպեան հարազատ, եռամաս բաղաձայնային հնչումներով, ոեւէ Արեւմտահայ չէ ըսած ինծի, որ չի հասկնար լսածը: Եւ նոյնն է պարագան անշուշտ Արեւելահայ բանաստեղծութեան, զորս բնաւ չեմ յղկած ոչ-Մեսրոպեան երկամաս բաղաձայներու առոգանութեամբ:*

*Ճշմարտութիւն է որ ոեւէ Արեւմտահայ, մանաւանդ ասմունք/երգ կատարման ընթացքին, բնական կը գտնէ Արեւելահայերէնի Մեսրոպեան եռամաս ձայնարձակումը, եւ, ի պատիւ հայ ունկնդրին ամէնուրէք, հաճոյքով կ՚ունկնդրէ Արեւմտահայերէնը նոյն եռամաս հարուստ ձայնարձակումով: Անշուշտ թէ կան նաեւ բանիմացներ, բայց ոչ ընդհանուր ունկնդրող հասարակութիւնը, որոնք կ՚ուզեն յամառօրէն պահել՛ իրենց Արեւմտահայութիւնը՝ ոչ-Մեսրոպեան երկամաս բաղաձայներու առոգանութեամբ...Թող որ ըսենք Հալալ լինի բաղձանքը, երբ այդ ընելով կ՚ուզեն վառ պահել Հայերէն լեզուն թէկուզ իրենց ուզած ձեւով...*

*Ըստ իս հասած է ժամը որ վերագտնենք Մեսրոպեան բաղաձայներու եռամաս համակարգը, ապաւինելով Արարատեան բարբառի հնչեղութեան, պահելով հանդերձ Արեւմտահայ բառամթերքի, քերականութեան եւ մանաւանդ Ուղղագրութեան հարուստ ժառանգութիւնը, Ի սէր Հայ ժողովուրդի միասնութեան՝ իր Մեծասքանչ Ձայնով, Գիրով, Հոգով, Միտքով ու Տաղով:*

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻն

Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

# ԳԵՂԵՑԿԱԳԻՏԱԿԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԷՄ ՉԵՆ ԴՆԵՐ ՏԽՐՈՒԹԵԱՆ

20-րդ դարու նշանաւոր փիլիսոփայ եւ հոգեբան Ուիլիըմ Ճէյմզ կ'ըսէ, թէ՝ լացը տխրութեան արդիւնք չէ, այլ տխրութիւնը՝ լացի: Տարիներ ետք կատարուած հոգեբանական հետազօտութիւններուն շնորհիւ բաւական նշանաւոր կը դառնայ Ճէյզմի այս փիլիսոփայութիւնը, որ հոգեբանական աշխարհէն ներս ծանօթ կը դառնայ «Motion is Emotion» տեսութեամբ, որ կը նշանակէ թէ դէմքի շարժումներն ու արտայայտութիւնները կը ստեղծեն զգացումներ:

Ընդհանրապէս մարդիկ կը կարծեն, թէ դէմքի արտայայտութիւնները կ'արտացոլացնեն մեր ներաշխարհը եւ հոգեկան վիճակը: Այսինքն՝ ժպիտը կը ներկայացնէ գոհունակութիւն կամ ուրախութիւն, իսկ խոժոռ նայուածքը կ'արտացոլացնէ ջղայնութիւն կամ տխրութիւն: Սակայն, «Motion is Emotion» տեսութիւնը կը շեշտէ հակառակը: Օրինակ, երբ մարդիկ խնդան առանց պատճառի, կրնան անոր հետեւանքով ուրախ զգալ: Ի դէպ, այս համոզմունքին վրայ հիմնուած է «Laughter Yoga»ն, որ կը միտի խնդուքի միջոցով դարմանել ճնշուածութիւնները (stress): «Laughter Yoga»ն կարելի է «Motion is Emotion» տեսութեան դրական ազդեցութիւններէն մէկը համարել: Սակայն, վերջերս ընդհանրացած է նոր վերլուծում մը այս տեսութեան շուրջ, որ առաջին հերթին կը նպաստէ գեղեցկագիտութեան վիրաբուժներուն եւ գեղեցկագիտական ընկերութիւններուն: Ճի՞շդ է որ «Botox»ի պատուաստումը կը փոխէ կնոջ զգացումները:

Մարմնի եւ դէմքի փոփոխութիւններուն կողքին, արդեօ՞ք նաեւ կը փոխուին հոգեկան վիճակները: Այս հարցումը ուղղուած է ժխտական զգացումներու գծով, ինչպէս՝ ընկճուածութիւնը (Depression): Գեղեցկագիտական ընկերութիւնները եւ այս ոլորտէն ներս աշխատող վիրաբուժները կ'ենթադրեն, որ «Botox»ի պատուաստումը կրնայ դէմ դնել ընկճուածութեան, որովհետեւ պատուաստը կը քարացնէ դէմքի մկանները եւ թոյլ չի տար, որ անհատը խոժոռ կամ տխուր դէմքի արտայայտութիւններ ունենայ: Հետեւաբար, կրնա՞յ ըլլալ «Botox»ի պատուաստումը ընկճուածութեան դարմանումի միջոց դառնայ:

Այս հարցումին պատասխանելու համար պէտք է նկատի ունենալ քանի մը կարեւոր կէտեր: Առաջին, դէմք մը «կարդալու» ընթացքը այդքան ալ պարզ եւ մակերեսային չէ, ինչպէս կ'ենթադրեն կարգ մը մարդիկ: Դէմք մը վերլուծելու եւ անոր հիման վրայ անհատին զգացումները եզրակացնելու համար ժպիտը կամ դէմքի խոժոռ գիծերը բաւարար չեն: Մարդիկ, այս բոլորին կողքին նկատի կ'ունենան նաեւ աչքի նայուածքները, շարժուձեւերը, խօսակցութեան ոճը, ձայնի բարձրութիւնը եւ ըստ այնմ կը դատեն անհատին հոգեկան վիճակը: Երբ այս տուեալներուն հիման վրայ անհատը դատուի որպէս ջղային, իր շրջապատէն կը ստանայ անոր համեմատ վարմունք, որ իր կարգին կ'ամրապնդէ անձին ջղայնութիւնը: Հետեւաբար, «Botox»ի պատուաստումը բաւարար չէ զգացումները ծածկելու կամ կանխարգիլելու համար:

Երկրորդ, գեղեցկագիտական վիրահատութիւնները եւ յատկապէս «Botox»ի պատուաստումը կրնան չափազանց յուսախաբ դարձնել վիրահատութեան ենթարկուող անհատին շրջապատը: Յուսախաբութիւն տեղի կ'ունենայ, երբ անհատի մը տարիքը եւ դէմքին թարմութիւնը չեն համընկնիր իրար: Տարօրինակ է այն զգացումը, երբ տեսնենք կնոջ մը դէմքին եւ ձեռքերու մորթին թարմութեան եւ առողջութեան տարբերութիւնները:

Այս յուսախաբութիւնը մաս կը կազմէ առաջին տպաւորութեան, որ այս պարագային կրնայ ժխտական ըլլալ: Այս պարագային եւս, գեղեցկագիտական վիրահատութիւնները կը թերանան նպաստելու անհատին հոգեկան առողջութեան:

Երրորդ, գեղեցկագիտական վիրահատութիւնները նաեւ կրնան վատ ազդեցութիւն ունենալ անհատի յարաբերութիւններուն վրայ: Երեւակայեցէք, որ դէմքի արտայայտութիւններէ զուրկ անձ մը պատմէ ցաւալի պատմութիւն մը: Արդեօք որքա՞ն հասկնալի կ'ըլլայ այդ պատմութիւնը: Իսկ երբ մենք ըլլանք պատմողը, որքա՞ն յուսախաբ պիտի ըլլանք երբ փոխադարձ ոչ մէկ դէմքի արտայայտութիւն ստանանք:

Վերջապէս, կրնայ ըլլալ, որ տխուր դէմքի արտայայտութիւններէ ձերբազատուիլը կը կանխարգիլէ տխրութիւնը, սակայն ի՞նչ կրնայ պատահիլ երբ մարդիկ չկարենան ժպտիլ կամ խնդալ: Չեմ կրնար երեւակայել ինչպիսի՞ զգացումներ կրնան ունենալ նման մարդիկ, սակայն մէկ բան կրնամ վստահեցնել, որ անոնք շատ բան կը կորսնցնեն երբ չկարենան գնահատել կեանքը ինչպէս որ է, խնդալ՝ երբ պէտք է խնդալ եւ լալ՝ երբ պէտք է լալ:

# ԻՆՉՊԷ՞Ս ՎԱՐՈՒԻԼ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՄԷՋ

Նոր աշխատանքը, որպէս կանոն, ուրախանալի է, սակայն միեւնոյն ժամանակ բաւական լարուածային իրադարձութիւն է:

Կը փափաքիք լաւ տպաւորութիւն գործել, յաջողակ ըլլալ, արդիւնաւէտ եւ միեւնոյն ժամանակ շատ շուտ «լեզու գտնել» ձեր պաշտօնակիցներուն հետ:

Թէ ինչպէ՞ս հարկաւոր է վարուիլ նոր աշխատավայրի մէջ, 1995 թուականին մանրամասնօրէն ներկայացուցած էր «Times Mirror Company»ի նախագահ Էլ Քէյսին: «Business Insider»ը, վերլուծելով յայտնի գործարարին խորհուրդները, կազմած է 14 կէտերէ բաղկացած խորհուրդներու ցանկը:

1) Եթէ կը փափաքիք յաջողութեան հասնիլ, միշտ ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչ կը կատարուի շրջապատին մէջ:

2) Լսեցէք, լսեցէք, լսեցէք եւ մի՛ փորձէք շրջապատին ցուցադրել ձեր գիտելիքները: Անոնք ժամանակի ընթացքին անպայման պիտի նկատուին: Դժուար է սորվիլ, եթէ շատ կը խօսիք:

3) Փորձեցէք մտովի, ոչ թէ բարձրաձայն, ամէն ինչ կասկածի տակ առնել, յատկապէս՝ համընդհանուր ընդունուած հասկացողութիւններն ու իրավիճակները:

4) Ուշադիր լսեցէք ձեր գործընկերներուն. փորձեցէք, որ անոնք հաւնին ձեզի:

5) Կատարեցէք ամէն հնարաւոր բան՝ ձեր ղեկավարին հեղինակութիւնը ամրապնդելու համար:

6) Իւրաքանչիւր յանձնարարութեան համար պատրաստեցէք առեւտրային ծրագիր:

7) Պատրաստ եղէք ընել այն ամէնը՝ զոր անհրաժեշտ է աշխատանքի համար:

8) Յուցադրեցէք բոլորին, որ դուք խմբային աշխատանքի անդամ էք եւ կը փափաքիք հասնիլ հետապնդած նպատակին:

9) Կազմեցէք ձեր բաժինի ցուցակը, ուր ըլլան ձեր բոլոր գործընկերներուն անուններն ու պաշտօնները, նաեւ նշեցէք անոնց պատասխանատուութեան գօտին:

10) Մի՛ վախնաք հարցնելէ եւ միշտ շնորհակալ եղէք իւրաքանչիւր օգնութեան համար, այդ մէկը ընկերներ ձեռք բերելու լաւագոյն միջոցն է:

11) Մի՛ գովէք ձեր կրթութիւնը, նախկին ձեռքբերումները եւ բազմաթիւ շրջագայութիւնները. այդ բոլորը ժամանակի ընթացքին կ'իմացուին:

12) Կատարեցէք այն ամէնը՝ զոր խոստացած էք: Եթէ չէք կրնար, ըսէք այդ մասին:

13) Ձեր գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ դառնալ հաւաքական խմբակի անդամ, ոչ թէ անոր առաջնորդը:

14) Աշխատանքի եկէք գործի ժամուն եւ ոչ թէ ուշացումով:

# Ե՞ՐԲ ՊԷՏՔ Է ԶԻՋՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յարաբերութիւններու յաջողութեան եւ որակին մէջ մեծ եւ հիմնական դեր կը խաղան զիջումները, ըլլան անոնք կեանքի ճակատագրական որոշումներու կամ առօրեայ փոքր դէպքերու պարագաներուն: Սիրային յարաբերութիւններու մէջ կարեւոր է որ զիջումները ըլլան փոխադարձ եւ ոչ միակողմանի: Երբ անձ մը պատրաստ ըլլայ զիջելու, կը նշանակէ որ ան նուիրուած է յարաբերութեան եւ լուրջ մօտեցում ունի անոր նկատմամբ:

Սակայն միշտ չէ որ զիջումները դրական ազդեցութիւն կ'ունենան յարաբերութեան վրայ: Կարգ մը պարագաներու, զիջումը կրնայ նեղութիւն պատճառել զիջող անձին, մանաւանդ երբ կողակիցը չկարենայ գնահատել անոր այդ քայլը: Հոգեբանութեան ծիրէն ներս մասնագէտներ խորհուրդ կու տան զիջումներ կատարել լաւ տրամադրութեան մէջ:

Խօսքը ուղղելով առօրեայ փոքր զիջումներուն, երբ մեր կողակիցը յոգնած վերադառնայ տուն, հաւանաբար կը մտածենք կատարել իր պարտականութիւնները: Այս մէկը շատ հաճելի կրնայ ըլլալ թէ՛ մեզի եւ թէ՛ մեր կողակիցին համար: Սակայն ի՞նչ կրնայ պատահիլ, երբ մենք եւս յոգնած ըլլանք: Այս պարագային կրնայ զիջումը պարտականութեան վերածուիլ եւ կորսնցնել իր իմաստն ու խորքը: Իսկ երբ կողակիցը իր անտրամադրութեան կամ յոգնածութեան պատճառով չկարենայ գնահատել մեր կատարածը, հարցը աւելի կը բարդանայ:

Յարաբերութեան ընթացքին, ճիշդ ժամանակին ճիշդ որոշումներ առնելը եւ զիջումներ կատարելը կ'օգնէ, որ երկու անձերը աւելի մտերիմ դառնան եւ նոյն ձեւով արժեւորեն իրենց յարաբերութիւնը: Զիջումները պատճառ կը դառնան, որ անձերը աւելի կապուին իրար եւ հանդուրժողական մօտեցում ունենան իրարու հանդէպ, որ իր կարգին կը բարձրացնէ յարաբերութեան որակին մակարդակը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով Հետաքրքրուողներէն
հեռաձայնել՝ (626) 398-0506

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Շարունակուած էջ 5-էն

կուլթային տուրեր, որոնց ընթացքում մասնակիցները կ'այցելեն Մալաթիայի հայկական գերեզմանատան նորակառոյց մատուռ (վերջին հրաժեշտի համար նախատեսուած շէնք), վերանորոգման մէջ գտնուող Մալաթիայի Սուրբ Երրորդութիւն եկեղեցի եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ վանական համալիր, Օրդուզու, Քարաքայայի ջրամբար, Քիւլլուի քարանձաւ, Դարենդէ Լեւենթ հովիտ, Գիւրփընարի ջրբէժ եւ Հեքիմհանի եկեղեցիներ, Գիւզելյուրթի հին եկեղեցի, Արաբկիրի եկեղեցի:

Նշենք, որ 2012-ի Փետրուարի 2-ին Մալաթիայի քաղաքապետարանի յանձնարարութեամբ քանդուել է Մալաթիայի հայերի գերեզմանոցում կառուցուող պահակատունն ու մատուռը: Այս դէպքը բողոքի ալիք էր բարձրացրել Թուրքիայում եւ Թուրքիայից դուրս, որից յետոյ Մալաթիայի քաղաքապետը պնդել էր, թէ շինութիւնները սխալմամբ են քանդել եւ խոստացել՝ պետութեան հաշուին վերականգնել վնասը:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն
գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել
«Կայծ» Երիտասարդական Միութեան
գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՍԻՐՏԵՐ ԳՐԱՒԵՑ



*Շարունակուած էջ 7-էն*

գեց իր յօրինած մէկ երգը, «Ես Իմ Անուշ Հայաստանի»ն (խօսք՝ Ե. Չարենց): Իսկ Էմըլին նուագեց Ֆ. Շոփէնի Թիւ 2 Նօքթիւրնը (օփուս 9):

Յայտագիրը վերջ գտաւ յուռնարէն խանդավառ մէկ երգով. «Իսթորիա Մու, Ամարթիա Մու», զոր բոլոր աշակերտները կատարեցին ուս ուսի տուած: Այս երգի մեներգի բաժինները կատարեց Մարալ Քիւրտեան:

Ապա խումբը այցելեց առանձնասենեակներ եւ ունեցաւ մտերմիկ զրոյց այն «մեծ մայր» ու «մեծ հայր»ներուն հետ, որոնք տարիքի եւ առողջութեան բերմամբ չէին կրնար սրահ գալ: Հոն, խումբը Ն. Քէյլեանի նուագածութեամբ կրկին կատարեց Մեծարենցէ եւ Չարենցէ արտասանութիւններ:

Աւարտին, մեր տարեցները իրենց ուրախութիւնը արտայայտեցին աշակերտներուն օրհնութիւններ տալով, երգի պատառիկ մը ըսելով ու ինքնաբուխ արտասանութիւններ կատարելով: Հանգստեան կոչուած ուսուցչուհի մը Յ. Շիրազի մէկ բանաստեղծութիւնը օրինակ տալով երիտասարդներուն խրատեց մնալ հայ եւ միշտ մնալ ,ուս ուսի:

Ակնյայտ էր երգուսոյց Պրն. Նորայր Տատուրեանի եւ նուագակցող Էլմիրա Սիմոնեանի ջանքերը երգչախումբի կայացման գործի մէջ: Շնորհակալ ենք մեզի պարգեւուած այս գեղեցիկ պահերուն համար եւ կը սպասենք նորանոր համոյթներուն մօտ ապագային:

## ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐԱԲ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

*Շարունակուած էջ 8-էն*

ղասպանութենէն փրկուած եւ հայրենազրկուած բազմահազար հայերու հանդէպ ցուցաբերած վերաբերմունքին համար», ըսաւ Սարգսեան: Դեսպանը անգնահատելի քայլ հա մարեց հրատարակչատան գործը՝ հայ եւ լիբանանցի ժողովուրդներու մշակութային յարաբերութիւններու խորացման եւ փոխ հարստացման գործին մէջ: «Լիբանանի հայ համայնքը իր բազմաբովանդակ գործունէութեամբ կը մասնակցի Լիբանանի զարգացումին եւ կը շարունակէ մնալ Սփիւռքի հոգեւոր կեանքի, ազգային-քաղաքական գործունէութեան եւ լուսաւորչական միտքի կեդրոնը», եզրափակեց Լեւոն Սարգսեան:

Տեղի ունեցաւ «Մեր Բանաստեղծները՝ Հայաստանի Փառքի Կերտիչները» գիրքի գինեձօնը: Բեմ բարձրացան պաշտօնական հիւրերը, գիրքի մշակման աշխատանքին օժանդակողներն ու լիբանանցի բանաստեղծները, որոնց պաշտօնապէս յայտարարեցին գիրքի հրապարակումը:

Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք սատար հանդիսացան գիրքի մշակման եւ հրատարակման աշխատանքներուն:

Ան շեշտեց հայ մշակոյթը աշխարհին ծանօթացնելու կարեւորութիւնը, ապացուցելու եւ բացայայտելու համար հայ ժողովուրդի գոյատեւման կամքը: Փակման ուղերձը ներկայացուց նախկին նախարար Տիմիանոս Քաթթարը: Ան կարեւորեց հայ եւ լիբանանցի ժողովուրդներուն միջեւ հաստատուած ամուր կապը եւ հաւաստիացուց, որ այս նոր գիրքը աւելի եւս կ'ամրապնդէ այդ յարաբերութիւնները:

Քաթթար դրուատեց հայ ժողովուրդի աշխատասէր ոգին եւ արարող միտքը, որուն շնորհիւ է որ հայը կրցած է բարձր դիրքեր նուաճել Լիբանանի եւ այլ երկիրներու մէջ: Նախկին նախարարը իր ուղերձը համեմած էր հայկական գրականութենէն քաղուած տողերով:

Հայկական երաժշտութիւնը եւս ներկայ էր սրահին մէջ, հայ ռենի «Կոմիտաս» քառեակի ծանօթ կատարումներով: Միջոցառումին ընթացքին հայ բանաստեղծներու գործերէն օրինակներ արաբերէնով ներկայացուցին բանաստեղծ Ջահի Ուէհպէն, Ժորժ Քըրտահին, լիբանանցի գրողներ ու մտաւորականներ, նաեւ՝ գիրքի հեղինակ Ժուլի Մուրատը: Վերջինս մեզի բացատրեց, որ աշխատանք պիտի տանի յառաջիկային հրատարակելու գիրքին երկրորդական օրինակներ, որպէսզի հայ բանաստեղծներու թարգմանուած գործերը առաւել դիւրամատչելի միջոցներով հասնին արաբ ընթերցողներուն եւ մտաւորականներուն:

## ՄԱՅԻՍԵԱՆ ԴԻՒՑԱԶՆԱՄԱՐՏԵՐ

*Շարունակուած էջ 15-էն*

դիրքերը, զէնքերի ու իրենց հոգիների վրէժի կրակը տեղում դուշմանի վրայ, արեւի ճառագայթները որպէս հրաշէկ շանթեր նետում նրանց խրամատների վրայ: Երեկոյեան արեգակը յաղթանակի կարմիր պատմուճան էր փռել դուշմանի դիրքերի վրայ, կարմրել նաեւ նրա հարիւրաւոր զինուորների պիղծ արիւնով, փախչում էր դուշմանը, գերեւարել էին հազարների: Ճակատամարտի հրամանատար՝ Անգլիացի զօրավար Ալեմպին հրամայել էր կատարել թաղումն քաջորդիների, համբուրել մարտում զոհուածների ճակատները, աշխարհին յայտարարել՝ ''Երկուհարիւր հազար զօրաբանակի փոխարէն տուէք ինձ քսան հազար հայ զինուորներ, Միջին Արեւելքը կը նուաճեմ'':

Ով Հայ մարդ, գիտե՞ս արդեօք, որ Մայիսեան անկախութեան յաղթանակի նուաճման տօնակատարութեան առթիւ, մի քանի հարիւր հազար հայեր քառագագաթ Արագածը գրկած, նրա շուրջը միասնութեան պար բռնեցին: Ի՞նչ ես անում այստեղ, դու էլ գնայիր շղթայ բռնէիր, պարի մտնէիր, պարէիր քու նախագահի հետ, ձեզ հետ Արագածն էլ իր չորս գագաթներով պար պիտի բռնէր, ցնծութիւնից հրթիռներ պիտի ժայթքէր՝ հայոց սրտերի հրճուանքի ու յաւերժութեան պատգամը տիեզերք ճամբելու: Երկինք յառէիր ակներդ, պիտի տեսնէիր ինչպէ՞ս էին Չարենցի, Շիրազի սուսերները արեւը գրկած պար գալիս, իրենց գրիչները արեւի կրակով կարմրած՝ միասնութեան գրի շանթեր հրացոլում երկնակամարում: Անկախութեան լոյսի հրավառութեամբ ցնծացած միլիոն-միլիոն հայեր, հայացքները իրենց ոգեղէն սիրտ Արարատին յառած, աստղերը որպէս ջահեր վեր պահած, հրահեղեղ մի արշալոյսին իրենց կարմիր սրտերով գալու են նրան գրկելու՝ նրա շուրջը ծիրանի պար բռնելու...:

## ԼՈՒՐԵՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

*Շարունակուած էջ 13-էն*

ցուցին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որ կ'ընդգրկէր ասմունք, երգ եւ նուագ: Մեր աշակերտները հոգեկան բարձր գոհունակութեամբ զօտեպնդուած վերադարձան եւ ուրախութեամբ արտայայտուեցան, թէ այդ օրը, իրենց այցելութեամբ կրցած են մամիկներուն եւ պապիկներուն ուրախ եւ հաճելի պահեր տրամադրել:

Ապրիլ 23ին, մեր միջնակարգի աշակերտներուն հետ հանդիպում ունեցան արուեստագէտներ Արա Օշականն ու Էրիք Նազարեանը: Առաջինը աշակերտներուն փոխանցեց վերջերս Շուշիի մէջ տեղի ունեցած արուեստի փառատօնին իր բերած մասնակցութիւնը՝ ցուցադրելով սահիկներ, եւ բացատրեց, թէ իր լուսանկարներուն ընդմէջէն փորձած է սատարել Շուշիի վերաբնակեցման եւ վերակենդանացման աշխատանքին: Ան նաեւ աշակերտներուն հետ զրուցելով՝ կարծիքներ փոխանակեց Պատմական Հայաստանի գրաւուած հողերուն մասին: Արան նաեւ ցուցադրեց իր «I witness Genocide Project» ծրագիրին մէջ համախմբուած վերապրողներէն նկարներ ու անոնց վկայութիւնները փոխանցելով՝ խօսեցաւ նմանօրինակ վաւերագրական աշխատանքի մը անհրաժեշտութեան մասին:

Իր կարգին, Էրիք Նազարեան աշակերտներուն ներկայացուց «Ravished Armenia» շարժապատկերէն փրկուած պատառիկներ եւ աշակերտներուն փոխանցեց սոյն կարեւոր շարժապատկերին մասին գիտելիքներ: Ան նաեւ անոնց ուշադրութեան յանձնեց մեր Ցեղասպանութեան վաւերագրական պատմութիւններուն հրատարակութեան եւ իբրեւ արխիւ անոնց պահպանման եւ ներկայացման անհրաժեշտութիւնը:

Երկուշաբթի, Մայիս 6ին, միջնակարգի աշակերտներուն այցելեց Շամլեան Ազգ. վարժարանի Ը. կարգի աշակերտ Սեպուհ Օշականը: Սեպուհը աշակերտներուն խօսեցաւ Արարատ լեռ մագլցելու իր փորձառութեան մասին: Ան լուսանկարներ ցուցադրելով՝ խօսեցաւ իր արկածախնդրութեան մասին եւ փոխանցեց աշակերտներուն իր ունեցած ապրումները, երբ նման երազ մը իրականացուց: Սեպուհը ըսաւ. «Երբ առիթը ներկայացուեցաւ ինծի Արարատը մագլցելու, նախ տատամսեցայ, բայց երբ պատկերացուցի մօրս ու հօրս հպարտութիւնն ու ուրախութիւնը, երբ իրագործէի նման քայլ մը՝ առանց երկմտանքի ընդունեցի մեր բարեկամներուն հրաւէրը՝ իրենց հետ մագլցելու մեր լեռը»: Մեր աշակերտները նաեւ զրուցեցին Սեպուհին հետ եւ հետաքրքրութեամբ հետեւեցան անոր տուած բոլոր տեղեկութիւններուն:

Ինչպէս ամէն տարեշրջան, այս տարի եւս մեր միջնակարգէն խումբ մը աշակերտներ՝ առաջնորդութեամբ գիտութեան ուսուցչուհի Աննա Փաթաթանեան-Ապէկեանի, մասնակցեցան Ամերիկահայ ճարտարապետներու եւ գիտնականներու ընկերակցութեան կազմակերպած գիտական մրցանքին, ներկայացնելով տարուան ընթացքին գիտութեան տարբեր մարզերու մէջ իրենց կատարած աշխատանքները:

Կենսաբանական բաժանմունքին ներս առաջին հանդիսացաւ Զ. կարգի աշակերտուհի Քաթիա Խանլեանը, բնագիտական բաժանմունքին ներս՝ Է. կարգի աշակերտ Տանիէլ Եագուպեանը, իսկ նոյն բաժանմունքին ներս պատուոյ յիշատակութեան արժանացաւ Ը. կարգի աշակերտ՝ Ծովակ Տատուրեանը: Նոյն ընկերակցութեան կողմէ մեր վարժարանի գիտութեան ուսուցչուհի Աննա Փաթաթանեան-Ապէկեանը արժանացաւ՝ «Տարուան ուսուցչուհի» մրցանակին:

Վարձքը կատար մեր սիրելի աշակերտներուն եւ իրենց առաջնորդ ուսուցչուհիին, որ աշակերտներուն մօտ հետաքրքրութիւն կ'արթնցնէ գիտական նիւթերու հանդէպ: Սոյն մրցանքին մասնակցող աշակերտները նաեւ մասնակցեցան Լոս Անճելըս գաւառի գիտական մրցանքին եւ վերոյիշեալ Է. կարգի աշակերտ՝ Տանիէլ Եագուպեանը հանդիսացաւ երկրորդ՝ բնագիտական բաժանմունքէն ներս իր կատարած գիտական աշխատանքին համար: Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք մեր աշակերտներուն եւ ուսուցչակազմին:

**Թղթակցութիւնը վարժարանէն**



# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

*ԳԷՈՐԳ (ՃՕ) ԹԱՇՃԵԱՆԻ*

*ԳԷՈՐԳ ՃՕ ԹԱՇՃԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ յաւարտ Ս. Պատարագի, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 2 Յունիս, 2013ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd Pasadena, CA 91107:*

*Խնդրողներն են՝*

*Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Լենա Մանուկեան եւ զաւակունք*

*Տէր եւ Տիկ. Երեսփոխան Սեպուհ եւ Նորա Գալփաքեան եւ զաւակունք*

*Տիար Մեսրոպ Թաշճեան եւ զաւակունք*

*Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Յասմիկ Քէհէեան եւ զաւակունք*

*Եւ համայն Թաշճեան, Մանուկեան, Գալփաքեան, Քէհէեան, Զիլինկիրեան եւ Գարակէօզեան ընտանիքներ:*

*Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

# ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնս ու աշխատակազմս ցաւով իմացանք «Մասիս» շաբաթաթերթի աշխատակից Մեթր Պարգեւ Դաւիթեանի կողակիցին՝ տարաբախտ ՍՕՍԻ ԴԱՒԻԹԵԱՆԻ անակնկալ մահը, որ պատահած է Չորեքշաբթի 22 Մայիս, 2013ին, յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Այս տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, ի մասնաւորի «Մասիս» շաբաթաթերթի աշխատակից Մեթր Պարգեւ Դաւիթեանին եւ զաւկին՝ Եղիկ Դաւիթեանին:*

# ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՌՈԶԱ ՊՕՅԱՃԵԱՆԻ մահուան առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն:*

*Առ այդ՝ $100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

# ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՎԱՀԷ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ազնիւ Բաբիրեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն:*

*Առ այդ $50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

# ԳԵՐՇ. ԱՐԱՄ ԱՐՔ. ԱԹԷՇԵԱՆ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԵՑԱՒ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԷՋ

*Շարունակուածէջ13–էն*

*դով: Պոլսահայութիւնը հրաշալիօրէն իր մէջ կը նորոգէ հաւատքի գիտակցութիւնը դէպի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, եւ իր եռանդուն հաւատքի գործունէութիւնն է, որ ուր որ Պոլսահայութիւնը ոտք կը դնէ, այդ կեանքը նոր սկիզբ կ'արձանագրէ եւ կը դառնայ նոր հանգրուան մը, եկեղեցին դարձնելով իրենց կեանքին մէջ այն ժայռը, որուն վրայ հիմնուած է իրենց հաւատքը եւ այդ գիտակցութիւնն է, որ տարակոյս չունինք, որ այս գիշեր Պոլսահայոց հոգիներուն մէջ նոր տեսիլք կը դառնայ, երբ դուք ներկայ էք սիրելի Սրբազան: Իւրաքանչիւր այցելութիւն որ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքարանէն կու գայ, խթան հանդիսացած է ամրացնելու մեր ժողովուրդին գաւակները, որպէսզի կառչած մնան Հայաստանեայց Առաք. Ս. եկեղեցւոյ ի գին ամէն զոհողութեան, որովհետեւ եկեղեցիով է, որ պիտի արժեւորուի մեր կեանքը: Սրբազան Հայրը մաղթեց, որ՝ Տէրը միշտ զօրավիգ կանգնի Հիւր Սրբազանին որպէսզի շարունակէ իր հովանիին ներքեւ բոլոր պատասխանատուութիւններն ու պարտականութիւնները հաւատքի քաջութեամբ լուծել, որպէսզի մեր ժողովուրդը իր հոգեւոր կեանքը շարունակէ Կոստանդնուպոլսոյ պատրիարքարանին հովանիին ներքեւ:*

*Սրբազան Հօր խօսքէն ետք, սահիկներով ցուցադրուեցաւ Պոլսահայ Միութեան 37 տարիներու պատմութիւնը, եւ մինչեւ այսօր իր յանձնախումբերու գործունէութիւններն ու կատարած աշխատանքները:*

*Ապա հրաւիրուեցաւ հիւր Սրբազան Արամ Արք. Աթէշեանը, որ իր ուրախութիւնը յայտնեց իրեն հանդէպ ցուցաբերուած սիրոյն եւ յարգանքին համար: Ան ըսաւ, որ՝ անուրանալի է թէ Պոլսահայութիւնը մեծ դեր կատարած է ազգային, հոգեւոր, մշակութային եւ պատմութեան կեանքին մէջ, առանց որոնց ազգային եւ եկեղեցական կեանքը աչքառու պիտի չ'ըլլար:*

*Սրբազան Հայրը խօսեցաւ Հայոց կեանքին մասին Թուրքիոյ մէջ: Թէ՝ ինչո՞ւ համար Պատրիարքական ընտրութիւններ տեղի չեն ունենար: Այսօր այն դժուարութիւնները, որոնց մէջ արգելափակուած են պատրիարքական ընտրութիւններու նկատմամբ, Թրքական իշխանութիւններու պատճառով չէ, որ տեղի չեն ունենար, այլ՝ հայ համայնքին մէջ գտնուող տարրերու շարքերուն, որ հակառակ եկեղեցւոյ բարձր մարմիններու որոշումին որն էր՝ ընտրել աթոռակից պատրիարք մը, այն յանձնախումբը զոր նշանակուած էր անուանելու պատրիարքական փոխանորդի հնարաւոր թեկնածուները, դիմումնագիր մը յղած է պետութեան ընտրելու համար նոր պատրիարք մը:*

*Սրբազան Աթէշեան բացատրութիւն տուաւ Հայոց թիւին մասին ըսելով թէ՝ Թուրքիոյ մէջ կան 70,000 հայեր, իսկ միւս ոչ մահմետական փոքրամասնութիւնները կը կազմեն փոքր*

*թիւերը: Փոքրամասնութիւններուն մեծ մասը կ'ապրի Իսթանպուլի մէջ, իսկ հայերու թիւը կը տարուբերի, 70,000 հայերէն 99 տոկոսը կ'ապրի Իսթանպուլի մէջ իսկ մնացեալը՝ տարբեր վայրերու մէջ: Կան 100,000է աւելի կրօնափոխ հայեր, որոնցմէ շատերը կը վախնան, որ քրիստոնէութիւն ընդունելով պիտի հեռացուին իրենց աշխատանքէն: Արամ Արք. Աթէշեանի համաձայն՝ երկրին մէջ պայմանները կը փոխուին եւ կրօններու նկատմամբ յարգանքը կ'ընդարձակի համարձակութիւն ներշնչելով, որ ծպտեալ հայեր պատրիարքարան դիմեն, մկրտուին ու իրենց քրիստոնէական արմատներուն վերադառնան:*

*Ան յայտնեց, թէ՝ իր շրջանին է, որ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ գմբէթին վրայ Ս. Խաչը տեղադրուեցաւ, իսկ Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ զանգակատուներէն մին, որ մզկիթի մը մինարէէն աւելի բարձր ըլլալուն համար Թուրքերուն կողմէ ականահարուած էր, դարձեալ իր տեղը դրուած էր:*

*5-6-7 տարեկան առանց դպրոցի մնացած Հայաստանէն գաղթած փոքրերուն համար, որոնք իրաւունք չունէին հայկական վարժարաններ յաճախելու Թրքահայ չ'ըլլալնուն համար, իր երկու տարուայ պայքարին մասին խօսեցաւ ան, զոր մղած էր կրթական նախարարութեան հետ եւ ի վերջոյ յաջողած եւ արտօնութիւն ստացած, որ հայկական վարժարանին մէջ անոնք որպէս հիւր աշակերտ ուսանին:*

*Երեսուն տարիներէ ի վեր հայկական կալուածներուն բռնագրաւման մասին պատրիարքներ ու փաստաբաններ, որոնք զբաղեցան Ս. Խաչ դպրեվանքին իրաւունքը վերստանալու համար եւ ոչ մէկ արդիւնքի յանգած էին, այս տարի Ս. Խաչ դպրեվանքի խնամակալութեան խնդրանքին վրայ նախարարէն ժամադրութիւն առնելով հանդիպում ունեցաւ ան եւ փոխադարձ զիջումներ ընելով դպրեվանքին իրաւունքը պահանջելով երկու օր վերջ թուղթը ստացուեցաւ:*

*Իսկ Ս. Փրկիչ հիւանդանոցը այժմ կը դասուի առաջին տասը հիւանդանոցներու շարքին, -ըսաւ Սրբազան Հայրը եւ 100ի վրայ 98.7 վստահելի հիւանդանոցն է:*

*Սրբազանը յիշեց Պոլսոյ մէջ լոյս տեսնող օրաթերթերն ու շաբաթաթերթերը, երգչախումբերու, Սանուց միութիւնները, Տիկնանց Յանձնախումբերն ու այլ կազմերը:*

*Իր վերջին խօսքով ան աղօթքի մաղթանքով փակեց իր խօսքը, որպէսզի այս պետութիւնը մնայ եւ այն բոլոր բռնագրաւուած կալուածները մեզի վերադարձուին, որոնցմէ 100/5ը արդէն վերստացանք:*

*Պահպանիչ աղօթքով ձեռնարկը իր աւարտին հասաւ: Տեղի ունեցաւ յիշատակի նկարահանում:*

*Մտերմիկ մթնոլորտի մէջ կայացած հանդիպումի աւարտին Սրբազան Հայրերն ու իրենց ընկերակիցները հրաժեշտ առին Պոլսահայ Միութենէն:*

*Թէ՛ Սրբազան Հայրերուն հայրական այցելութիւնը եւ թէ՛ Պոլսահայ Միութեան անդամներուն սիրոյ ներկայութիւնը զօտեպնդիչ զօրաւոր ազդակներ են, մարդասիրական գործին թափ տուող ու այս գործին նուիրեալ մարդոյժը քաջալերող:*

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի
Երեկոյեան ժամը 10:00–ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125


Hye AID 2
BENEFIT CONCERT FOR
SYRIAN ARMENIAN
RELIEF FUND
SYRIAN ARMENIAN RELIEF FUND
GEVORKIAN
DANCE ACADEMY
Directors VARTAN & SIRANUSH GEVORKIAN
Choreographer SONA GEVORKIAN
Special Guests from Armenia
LEYLA
SARIBEKYAN
SILVA
HAKOBYAN
DOLBY THEATRE
6801 HOLLYWOOD BLVD LOS ANGELES, CA 90028
(FORMERLY KODAK THEATRE)
JUNE 9, 2013 6:00 PM
FOR TICKETS
818.618.2348 - Itsmyseat.com/HyeAid
818.265.0506
ticketmaster
www.SyrianArmenianReliefFund.org